

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
(01.09.2016-30.08.2017թթ.)

Երևան-2017  
Հոկտեմբեր

Սույն հաշվետվության մեջ ներկայացված է Հայաստանի Հանրապետության կառավարության մեկ տարվա (2016թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. օգոստոսի 31-ը) գործունեության արդյունքները: Մանրակրկիտ ներկայացված են ՀՀ կառավարության կողմից ներկայացված 2016 թվականի ծրագրի (2016 թվականի հոկտեմբերին հաստատված) և 2017-2022 թվականների ծրագրի (2017 թվականի հունիսին հաստատված) դրույթներով նախատեսված բարեփոխումների ուղղությամբ իրականացված միջոցառումների և գործողությունների արդյունքները՝ ըստ առանձին ոլորտների համապատասխան ենթաժինների:

<b>1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....</b>	<b>2</b>
1.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ .....	2
1.2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ .....	6
1.3. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ.....	9
1.4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՅՈՒՄ.....	11
1.5. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ .....	13
1.6. ԿԱԴԱՍՏՐ.....	14
<b>2. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>15</b>
2.1. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	15
2.2. ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ.....	18
2.3. ՍՓՅՈՒՌՔ.....	22
2.4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ .....	23
<b>3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ .....</b>	<b>26</b>
3.1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՅ, ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ... ..	26
3.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ .....	34
3.3. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ .....	40
3.4. ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ.....	42
3.5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	50
3.6. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ.....	54
3.7. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՅԻԱ.....	56
3.8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ .....	59
<b>4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ .....</b>	<b>61</b>
4.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	61
4.2. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	67
4.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ .....	73
4.4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	80
4.5. ՄՇԱԿՈՒՅԹ .....	81
4.6. ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ.....	84
<b>5. ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>85</b>
5.1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ .....	85
5.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ.....	87

## 1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

### 1.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՈՒՄ

#### Համայնքային զարգացման ծրագրեր.

1. Մշակվել և համայնքներին է տրամադրվել հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդական նոր ուղեցույց, որի արդյունքում ՀՀ բոլոր համայնքները ներկայացրել են իրենց զարգացման ծրագրերը:

2. Հավանության են արժանացել ՀՀ մարզերի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարությունները:

3. Միավորված ազգերի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) UNDP հետ համատեղ իրականացվող «Ինտեգրված աջակցություն գյուղական զարգացմանը, համայնքների դիմակայության ամրապնդում» ծրագրի շրջանակներում, ՀՀ Տավուշի մարզի 45 սահմանամերձ համայնքներում իրականացվում են շուրջ 5.0 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի զարգացման ծրագրեր, մասնավորապես, 56 ջերմոց, 9 գինու փոքրածավալ արտադրություն, 8 չրագործական արտադրություն, 30 հա պտղատու այգիների, 2 գյուղմեխանիզացիայի պարկի, 2 գյուղմթերքների հավաքման կետերի հիմնում (սառնարանային տնտեսություն և այրաղաց), 9 կմ ԼԵԴ տեխնոլոգիայով լուսավորության անցկացում, 3 կմ ոռոգման ջրագծի վերանորոգում, 30 հա ջուր խնայող տեխնոլոգիաների ներդրում, ոռոգման ներքին ցանցի կառուցում ջուր խնայող տեխնոլոգիաներով, սաժիլային ջերմատան հիմնում, 7 դպրոցների ճաշարանների վերանորոգում:

«Գյուղական զբոսաշրջության ինտեգրված զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ կայուն ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացման ուղղությամբ:

4. Ընթացքում են Եվրոպական միության դրամաշնորհի (10 մլն եվրո) և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ (1,75 մլն եվրո) ՀՀ 7 մարզերում իրականացվող մարզային զարգացման 7 պիլոտային (փորձնական) ծրագրերը, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզում իրականացման ենթակա ևս մեկ ծրագիր գտնվում է ընտրության փուլում:

5. Ներդրվել և գործում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից էլեկտրոնային հարցում կատարելու և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ից հարցմանն էլեկտրոնային պատասխանը տրամադրելու համակարգը:

6. Ստեղծվել և գործում է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի և դրա տարածքային ստորաբաժանումների միջև կորպորատիվ ցանցը: Ներկայումս իրականացվում է ցանցի տրամաբանական միացումը արխիվային տեղեկատվությունից օգտվող պետական մարմիններին՝ կադաստրի, ԲԿԱԳ-ի գործակալության, Երևանի քաղաքապետարանի ցանցերի հետ:

### Ներդրումային ծրագրեր.

1. ՀՀ մարզերի, այլ գերատեսչությունների և մասնավոր ներդրողների կողմից նախարարություն է ներկայացվել 170 ներդրումային/գործառնական ծրագիր, որոնցից հավանության են արժանացել 58-ը: 14-ը՝ ֆինանսավորվել են, իսկ շուրջ 60 ծրագիր ներկայումս գնտվում է քննարկման փուլում:

2. Ներդրումային ծրագրերի մշակման և բիզնես-ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի, «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի մարզային կառույցների հետ համատեղ կազմակերպվել են ներդրումային ծրագրերի հայտերի մշակման սեմինար-դասընթացներ և տեղում ծրագրային հայտերի քննարկման գործընթացներ:

3. Մշակվել է «Համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի գնահատման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը, որի ընդունմամբ ակնկալվում է իրականացնել համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի առավել ընդգրկում գնահատում և խթանել դրանց իրագործելիությանը:

4. ՀՀ մարզերում գործարար ակտիվության խթանմանն ուղղված՝ մշակվել և ներդրվել է համայնք-մասնավոր գործընկերության մեխանիզմ, ինչպես նաև մշակվել է Համայնքների կողմից տրամադրվող ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրակման մեթոդական ուղեցույց:

### Աջակցության տրամադրում.

1. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ մարզերին հրատապ խնդիրների լուծման նպատակով 136 ծրագրերի իրականացման համար հատկացվել է շուրջ 5 մլրդ դրամ:

2. 2017 թ. ՀՀ պետական բյուջեով, որպես աջակցություն սահմանամերձ համայնքներին, հատկացվել է 929 մլն դրամ գումար:

3. Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի (ICMPD) աջակցությամբ մշակվել է Երևան քաղաքի մերձակայքում միջազգային չափանիշներին համապատասխան ՀՀ-ում ապաստան հայցողների համար նոր Հատուկ կացարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթուղթը: Նոր կացարանի կառուցման համար Արժվյան քաղաքում հատկացվել է հողատարածք:

### ՀՀ համայնքների եկամուտների պլանավորման և սեփական եկամուտների հավաքագրումների դինամիկա.

1. 2016 թ. համեմատությամբ 2017 թ. ՀՀ համայնքների բյուջեների ընդամենը եկամուտների պլանային ցուցանիշը 127,8 մլրդ դրամից աճել է 9.2 %-ով և կազմել 139,6 մլրդ դրամ:

2. 2016 թ. համեմատությամբ սեփական եկամուտների պլանային ցուցանիշի աճը 2017 թ. կազմել է 11.1 % կամ 3,9 մլրդ դրամ, 35 մլրդ դրամից դառնալով շուրջ 38,9 մլրդ դրամ:

3. 2016 թ. նույն ժամանակահատվածի հետ համեմատությամբ 2017 թ. սեպտեմբերի մեկի դրությամբ ՀՀ համայնքների բյուջեների սեփական եկամուտները փաստացի ավելացել են 8.5%-ով, որը կազմել է 1,7 մլրդ դրամ:

4. 2016 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով տեղական տուրքերի նոր տեսակներ նախատեսելու արդյունքում նկատվել է համայնքների եկամուտների աճ:

#### Համայնքների խոշորացում.

1. Խոշորացված 52 համայնքներում (նախկին 465 համայնքներ) իրականացվում են համայնքային նոր ենթակառուցվածքների ձևավորման և գոյություն ունեցողների ամրապնդմանն ուղղված շուրջ 11.0 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի ներդրումային ծրագրեր: Մասնավորապես, ձեռք են բերվելու շուրջ 100 միավոր կոմունալ, ճանապարհաշինական, գյուղատնտեսական տեխնիկա, հասարակական տրանսպորտային միջոցներ, կառուցվելու և վերանորոգվելու են ճանապարհներ, կանգառներ և այլ համայնքային ենթակառուցվածքներ:

2. Խոշորացման արդյունքում ձևավորվել է առավել մրցակցային ավագանի, հաստիքների վերաբաշխում, ինչի արդյունքում կրկնվող հաստիքները փոխարինվել են ծառայություններ մատուցող հաստիքներով:

3. Հնարավոր է դարձել համայնքի համախմբված բյուջեի միջոցների հաշվին բնակավայրերում կապիտալ ներդրումների իրականացումը:

4. Իրականացվում են խոշորաձավալ ներդրումներ միջազգային կազմակերպությունների կողմից. ներդրումների հաշվին իրականացվում են կապիտալ ծրագրեր, տեխնիկայի ձեռքբերում: Օրինակ, USAID-ի «Աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում Դիլիջան համայնքում 2017-2018 թթ. ընթացքում կկատարվի 1.7 մլն ԱՄՆ-ի դոլարի ներդրում: Արդեն Դիլիջան համայնքին տրամադրվել են 3 ինքնաթափ բեռնատար, 2 բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, 1 գրեյդեր, 1 թրթուրավոր տրակտոր, 2 աղբատար մեքենա, 1 քաղաքային կոմունալ վակուումային փոշեկուլ:

5. Որոշակիորեն աճել է պետության կողմից ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրվող դրամական միջոցների չափը: Օրինակ, 2015 թ. նկատմամբ Չառիթափ համայնքի դոտացիան աճել է 14.2, Գորիս համայնքինը՝ 13.2 տոկոսով:

6. Շարունակվել են համայնքապետարաններում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և դրանց կիրառության ընդլայնման աշխատանքները: Մասնավորապես, էլեկտրոնային կառավարման համակարգեր և համացանցային կայքեր են գործարկվել 15 խոշորացված բազմաբնակավայր համայնքներում: Ավագանու նիստերի առցանց հեռարձակման հնարավորությամբ ապահովվել են 28 համայնքներ: Ավագանու նիստերն առցանց հեռարձակվում են 5 խոշորացված համայնքներում:

Աղբահանություն.

1. Մշակվել և հավանության է արժանացել ՀՀ կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիրը, որի իրականացմամբ նախատեսվում է բարելավել աղբահանության իրավական դաշտը:

2. Հանրապետությունում գույքագրվել և անձնագրավորվել է 2029 աղբավայր և աղբանոց: 2017 թ. սեպտեմբերի 5-ի դրությամբ նշված աղբանոցներից՝

- 1522 աղբանոց փակվել է,
- 221 աղբանոց ենթակա է փակման,
- 286 աղբանոց/աղբավայր ժամանակավորապես կշահագործվի որպես հիմնական աղբավայր,

- կնքվել են աղբահանության և սանիտարական մաքրման նոր պայմանագրեր 9479 իրավաբանական սուբյեկտների հետ,

- աղբահանության վճարների հավաքագրումն ավելացել է շուրջ 30%-ով, իսկ որոշ դեպքերում նաև 2 անգամ:

3. Տեղորոշված և անձնագրավորված աղբանոցների փակման, կոնսերվացման աշխատանքները վերահսկելու և առկա կարգավիճակի վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով ստեղծվել է թվային ինտերակտիվ քարտեզ, որտեղ նշված են փակված և լուսանկարներով հաստատված աղբանոցները (կանաչ գույնով), փակված աղբանոցները (կապույտ գույնով), փակման աշխատանքներն ընթացքի մեջ գտնվող աղբանոցները (դեղին գույնով) և շահագործվող աղբանոցները (սև գույնով): Կատարված աշխատանքներն ամփոփված են [www.map.transproject.am](http://www.map.transproject.am) կայքում:

4. Մշակվել և հավանության է արժանացել «ՀՀ 2017-2036 թթ. կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» որոշումը, որով նախատեսվում է ՀՀ ամբողջ տարածքում ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող, ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահապանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին:

5. Մշակվել և հավանության է արժանացել «Մաքուր Հայաստան» ծրագրի գործողությունների ու միջոցառումների ժամանակացույցը:

ՀՀ մարզային ենթակայության առողջապահական համակարգի և կրթական հաստատությունների օպտիմալացում.

1. Ընդունվել է «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ն վերակազմակերպելու, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքին գույք նվիրաբերելու և ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին» որոշում, որի արդյունքում կտնտեսվի շուրջ 16 մլն դրամ:

2. Օպտիմալացվել են «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն և «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ը, ինչպես նաև դադարեցվել է «Ուշիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՀՈԱԿ-ի գործունեությունը:

3. Ընդունվել է «ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» որոշում, որի արդյունքում կտնտեսվի շուրջ 13 մլն դրամ:

4. Ընդունվել է «ՀՀ Կոտայքի մարզի Զովաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» որոշում, որի արդյունքում կտնտեսվի շուրջ 18 մլն դրամ:

5. Ընդունվել է «Փարաքարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը վերակազմակերպելու և գույք հանձնելու մասին» որոշում, որի արդյունքում կտնտեսվի շուրջ 14 մլն դրամ:

#### Օրենքների, ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում.

1. Ընդունվել է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենք, որով նախատեսվում է ՀՀ պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների բաշխման նոր մեխանիզմ, առավելապես բնակչության թվից կախված բաշխումից անցում է կատարվում բազմագործոն բաշխման, լրացուցիչ հաշվի առնելով համայնքների տրանսպորտային հասանելիությունը (մարզկենտրոն, Երևան), բարձրադիրությունը, համայնքում ընդգրկված բնակավայրերի քանակը, բնակչության տարիքային կազմը, մասշտաբի էֆեկտը:

2. Ընդունվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, որով հստակորեն սահմանվում են «տեղական տուրքեր» և «տեղական վճարներ» հասկացությունները, միատեսակ մոտեցում է ցուցաբերվում տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելիս:

3. Մարզադպրոցների կառավարման և գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացման, միասնականության ապահովման նպատակով մշակվել է «Մարզադպրոցների կառավարման և գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշումը:

1.2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

#### Կոռուպցիայի դեմ պայքար.

1. 2016 թ. դեկտեմբերի 16-ի «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի ընդունմամբ քրեականացվել է ապօրինի հարստացումը:

2. 2016 թ. դեկտեմբերի 16-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը, որի համաձայն՝ հայտարարագիր ներկայաց-



նելու պարտականություն ունեցող անձինք պարտավոր են մի շարք գործարքներ կատարել բացառապես անկանխիկ ձևով, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է 2.000.000 դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

3. 2017 թ. հունիսի 9-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը, որն ուժի մեջ է մտնելու 2018 թ. ապրիլ ամսից, և որի համաձայն ՀՀ-ում առաջին անգամ ստեղծվելու է կոռուպցիայի կանխարգելման մարմին՝ անհրաժեշտ ֆինանսական և օրենսդրական անկախության երաշխիքներով:

4. 2017 թ. հունիսի 9-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով էականորեն ընդլայնվել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը (բոլոր դատախազները, հարկային, մաքսային ծառայությունների, քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչները և այլն), ներդրվել է շահերի հայտարարագրման ինստիտուտը:

5. 2018 թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Ազդարարման համակարգի մասին» օրենքը, որի շրջանակներում սահմանվել են կոռուպցիոն երևույթների մասին բարձրաձայնող անձանց պաշտպանության երաշխիքները:

6. ՀՀ կառավարության 27.10.2016 թ. N 1109-Ն որոշմամբ պետական մարմինների մի շարք գործառույթները պատվիրակվել են սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին: Ներկայումս օպերատորների կողմից մատուցվում է շուրջ 67 ծառայություն՝ 89 ավելի սպասարկման գրասենյակի կողմից: Շարունակաբար աշխատանքներ են տարվում ծառայությունների և օպերատորների շրջանակների ընդլայնման ուղղությամբ:

#### Քրեակատարողական.

1. 11 քրեակատարողական հիմնարկներ ապահովվել են առողջության առաջնային պահպանման անհրաժեշտ բժշկական սարքավորումներով: ՔԿՀ բժշկական ծառայողների անկախության երաշխավորման նպատակով մշակվել է օրենսդրական բարեփոխումների փաթեթ:

2. ՀՀ ԱՆ 11 քրեակատարողական հիմնարկներում ապահովվել են անհրաժեշտ ջերմային և հիգիենիկ պայմանները:

3. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ինստիտուտի կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով կատարվել են մի շարք առանցքային փոփոխություններ, այդ թվում՝ անցում է կատարվել անկախ հանձնաժողով - դատարան երկաստիճան ինստիտուցիոնալ մոդելին, հստակեցվել են անկախ հանձնաժողովի և դատարանի գործառույթները՝ բացառելով նույնաբնույթ գործառույթների իրականացումը. հստակեցվել է անկախ հանձնաժողովի կազմում ընդգրկվող ներկայացուցիչների ցանկը և ընդլայնվել է անկախ հանձնաժողովների թիվը, սահմանվել են հստակ չափանիշներ,

որոնք պետք է դրվեն անկախ հանձնաժողովի եզրակացությունների և դատարանի որոշումների հիմքում և այլն:

#### Պրոբացիա.

1. Պրոբացիայի պետական ծառայության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ներդրվել է էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման պիլոտային ծրագիր, որի շրջանակներում պրոբացիայի շահառուների նկատմամբ կիրառվել է էլեկտրոնային հսկողություն, ինչն ապագայում կխթանի կալանավորմանն այլընտրանք հանդիսացող միջոցների կիրառումը:

#### Իրավաբանական անձանց ռեգիստր.

1. Մշակվել և շրջանառության մեջ են իրավաբանական անձանց ռեգիստրի ոլորտի բարեփոխմանն ուղղված մի շարք օրենքների նախագծեր: Նախագծերի ընդունման արդյունքում կպարզեցվի ոլորտում իրականացվող վարչարարությունը, կբարձրանա իրավաբանական անձանց գրանցման գործընթացի մատչելիությունը, կընդլայնվեն ոլորտում իրականացվող սպասարկման գործառույթների շրջանակները:

#### Քաղաքացիական կացության ակտերի գրանցում.

1. Պիլոտային կարգով ներդրվել է e-apostille.am էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն է տալիս էլեկտրոնային եղանակով ընդունել փաստաթղթերն ապոստիլով վավերացնելու դիմումները և առցանց ստուգել ապոստիլի վավերականությունը: Նախկինում այլ պետությունների պետական մարմինները կասկածի դեպքում փաստաթղթային կարգով ստուգում էին ապոստիլի իսկությունը, ինչն ամիսներ էր տևում, իսկ ներկայումս այդ գործընթացը կարող է իրականացվել վայրկյանների ընթացքում:

2. e-civil համակարգը համակցվել է սոցիալական ապահովության պետական ծառայության էլեկտրոնային համակարգի հետ, ինչը հնարավորություն է տալիս ընդունել երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու դիմումները՝ առանց սոցիալական մարմիններ այցելելու կամ [www.epension.am](http://www.epension.am) միասնական սոցիալական պորտալի միջոցով առցանց դիմում ներկայացնելու:

#### Էլեկտրոնային արդարադատություն.

1. Ներդրվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը: Արդյունքում, իրականացվում է իրավական ակտերի պատշաճ հանրային քննարկում և ցանկացած առաջարկություն ունենում է հստակ արձագանք:

2. Մշակվել է լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ներդրման փաթեթը, իրականացվում են համակարգի գործարկման աշխատանքներ:

3. Ներդրվել է ՀՀ ԱՆ թեժ գծի [www.e-hotline.am](http://www.e-hotline.am) կայքը՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, ոլորտային խնդիրների լուծման նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանություն, դատական համակարգի բարեփոխում, ԴԱՀԿ.

1. 2017 թ. մայիսի 4-ին հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թթ. գործողությունների ծրագիրը, որում սահմանված են 96 գործողություն և յուրաքանչյուր գործողության իրականացման հստակ ժամանակացույցը, չափանիշները, ակնկալվող արդյունքը և պատասխանատու մարմինները: Բացի դրանից, ծրագրի մշտադիտարկման և համակարգման նպատակով ստեղծվել է համակարգող խորհուրդ, որը բաղկացած է կառավարության տարբեր օղակների և պետական մարմինների ներկայացուցիչներից:

2. Հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնություն տրամադրելու համակարգի ներդրման նպատակով համապատասխան օրենքի նախագիծը սույն թվականի հուլիսի 7-ին ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Նախագծի մշակման նպատակը հասարակության ավելի լայն շերտերին որակյալ անվճար իրավաբանական օգնության տրամադրումն է:

3. Նախագծերի փաթեթով սահմանվել են հարկադիր կատարողի կողմից կայացվող որոշումների ընդունման հստակ և միասնական ժամկետներ, հստակեցվել են որպես հայցի ապահովման միջոց հայցագնի չափով պարտապանի գույքի վրա արգելանք դնելու գործընթացում հարկադիր կատարողի լիազորությունները, նախատեսվել են հարկադիր էլեկտրոնային աճուրդի առանձին խնդրահարույց հարցերի կարգավորումները:

4. ՀՀ արդարադատության գործունեությունը նաև ուղղված է գործերի արտադատարանական կարգով լուծման մեխանիզմների մշակմանը: Մշակված նախագծի համաձայն նոտարների համար հնարավորություն կստեղծվի էլեկտրոնային եղանակով վավերացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ կնքված պայմանագրերը և այդ պայմանագրերի չկատարման դեպքում տրամադրել նոտարական մակագրության թերթ: Առաջարկվող նախագծի նպատակն է բանկային ոլորտում կնքվող պայմանագրերից ծագող պարտավորությունների կատարումն ապահովել արտադատարանական կարգով՝ առանց դատական գործընթացի, ինչն էապես կնպաստի դատարանների բեռնաթափմանը:

### 1.3. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ

1. Մշակվել է «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունումը պայմանավորված է վարչական իրավախախտումները բացահայտելիս՝ քաղաքացիներից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից անհրաժեշտ բացատրություններ, տվյալներ, տեղեկանքներ, փաստաթղթեր կամ դրանց պատճեններ պահանջելու և ստանալու, ինչպես նաև հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ օգտագործելու՝ ոստիկանության լիազորությունների պոզիտիվ ամրագրման անհրաժեշտությամբ:

2. Շրջանառության մեջ է դրվել «Հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունումը պայմանավորված է իրավախախտումների և պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունելու, գրանցելու, ընթացք տալու և հաշվառելու հետ կապված հարաբերությունների նորմատիվ կարգավորման անհրաժեշտությամբ:

3. Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնման նպատակով նախատեսված է Երևան քաղաքում կառուցել համայնքային ոստիկանության երկու նոր հենակետ՝ Մալաթիա-Սեբաստիա և Նոր Նորք վարչական շրջաններում: Հենակետերի կառուցման համար նախապատրաստվել են նախագծանախահաշվային փաստաթղթերը, առաջիկայում կհայտարարվի շինարարական աշխատանքների կատարման մրցույթ՝ կապալառու կազմակերպության ընտրություն կատարելու համար: Նշված հենակետերի կառուցման համար ՀՀ ոստիկանության արտաբյուջետային միջոցներից նախատեսվել է 45.4 մլն դրամ:

4. ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության փորձառու ծառայողների և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դասախոսական կազմի ներգրավմամբ ոստիկանության ծառայողների համար կազմակերպվել և անցկացվել են սեմինար պարապմունքներ «Ոստիկանության տարածքային մարմիններում համայնքային խորհուրդների կազմավորումը, դրանց գործունեության կազմակերպումը և համագործակցությունը» թեմայով, վերապատրաստվել են համայնքային ոստիկանության մի քանի տասնյակ ծառայողներ:

5. ՀՀ մարզերում ճանապարհային ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման ոլորտում բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով Տավուշի մարզի Իջևանի հաշվառման քննական ստորաբաժանման նոր վարչական շենքի հիմքերի կառուցմանն ուղղված աշխատանքներն ընթացքի մեջ են: Կառուցման աշխատանքների կատարման համար 2017 թ. 2-րդ կիսամյակի ընթացքում նախատեսված է 29 մլն դրամ:

6. Կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ծրագրային ապահովումն ու սպասարկումն իրականացնելու համար համապատասխան ընկերության ընտրության գործընթացի իրականացման համար հայտ են ներկայացրել 11 կազմակերպություններ, որոնցից ընտրվել են 6-ը: Մյուս հինգը չեն բավարարել նախարարակալորման պահանջներին: Նախարարակալորման պահանջներին բավարարող կազմակերպություններն են՝ 1. Cetis d.d. (Սլովենիա), 2. «Muhlbauer ID Services GmbH» (Գերմանիա), 3. «PWPW SA» (Լեհաստան), 4. «Gemalto SA» (Ֆրանսիա) և «Gemalto OY» (Ֆինլանդիա) ընկերությունների կոնսորցիում, 5. «Oberthur Technologies SA» (Ֆրանսիա), 6. «Veridos GmbH» (Գերմանիա), «Giesecke & Devrient» (Գերմանիա) և «Bundesdruckerei GmbH» (Գերմանիա) ընկերությունների կոնսորցիում:

7. 2017 թ. հուլիսի 10-12-ը նշված կազմակերպությունները հրավիրվել են «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ, որտեղ մանրամասն ներկայացրել են իրենց արտադրանքը և մատուցվելիք ծառայությունները: Համապատասխան մասնագետների կողմից ընթանում են մրցույթի հայտարարման համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքի նախապատրաստման աշխատանքները:

8. ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում տեղեկատվական շտեմարանների օգտագործմամբ հանցագործությունների նախականիման, կանխման և բացահայտման աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով ներդրվել է տեղեկատվական միասնական համակարգ՝ ուղղված օպերատիվ գործունեության ընթացքում ստացված տեղեկատվության թվայնացմանը՝ տեղեկատվական-որոնողական համակարգի, այդ թվում՝ դիմապատկերի միջոցով: Կատարվել են ոստիկանությունում գործող տեղեկատվական շտեմարանների թվայնացման աշխատանքները: Համակարգն ամբողջությամբ փորձարկվել է ՌԴ ՆԳՆ մասնագետների օգնությամբ, այնուհետև գործարկվել: Քրեական հետախուզության գլխավոր վարչության կազմում ստեղծվել է մասնագիտացված՝ օպերատիվ-հետախուզական տեղեկատվության վարչություն՝ տվյալ համակարգի շահագործման աշխատանքները ոստիկանությունում համակարգելու և վերահսկելու նպատակով:

9. Փորձնական տարբերակով ներդրվել է ճանապարհապարեկային ծառայության շրջիկ պարեկության ընթացքում Շարժական տեսախցիկի կիրառման ծրագիրը:

#### 1.4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

1. Աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացման ուղղությամբ՝ 10 համայնքներում իրականացվել են վաղ ազդարարման համակարգերի տեղադրման և ընդհանուր համակարգին համակցման աշխատանքներ:

2. Աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի ներդրման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1) մշակվել է տեղական մակարդակում ռիսկի կառավարման ուղեցույց.

2) առավել խոցելի 10 համայնքների ընտրության համար սահմանվել են չափորոշիչներ.

3) ընտրված 10 համայնքներում (ՀՀ Լոռու մարզի Դեբետ, ՀՀ Տավուշի մարզի Իծաքար, Պատավաքար, ՀՀ Սյունիքի մարզի Կապան, ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր, ՀՀ Շիրակի մարզի Առափի, Զրափի, Շիրակ, ՀՀ Արագածոտնի մարզի Ուջան, ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատ համայնքներ) իրականացվել է խոցելիության ու կարողությունների գնահատում:

3. Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) հետ համատեղ իրականացվող սողանքային աղետի կառավարման ծրագրի շրջանակներում ներդրվել է իրական ժամանակում սողանքի մոնիթորինգի համակարգը՝ ՀՀ Շիրակի մարզի Առափի և Տավուշի մարզի Գետահովիտ համայնքներում:

ՀՀ Շիրակի մարզի Առափի համայնքի և ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան միջև ստորագրվել է համաձայնագիր, համաձայն որի ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատունն Առափի

համայնքին կտրամադրի գրանտ՝ համայնքում ջրահեռացման համակարգ կառուցելու նպատակով:

4. Թվային ռադիոկապի համակարգի ներդրման նպատակով մատակարարվել են մրցույթով նախատեսված գույքի առաջին (7 վերահաղորդակ և 15 ստացիոնար կայաններ) և երկրորդ (8 վերահաղորդակ և 15 ստացիոնար կայաններ) խմբաքանակները, ինչպես նաև մոնտաժման համար անհրաժեշտ օժանդակ գույքը: Իրականացվել են մատակարարված սարքավորումների ծրագրավորման և թեսթավորման աշխատանքներ:

5. Մշակվել և հավանության է արժանացել Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը, ինչի արդյունքում մշակվել են Աղետների ռիսկի կառավարման ոլորտում մասնավոր ներդրումների ներգրավման հայեցակարգի, Աղետների ռիսկի կառավարման ոլորտում նորարարության և տեխնոլոգիական զարգացման խթանման հայեցակարգի նախագծերը:

6. Ստեղծվել է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի հոգեբանական աջակցության բաժինը, որին հատկացվել է շարժական կառավարման կետ, որը հագեցվել է համապատասխան գույքով և պարագաներով՝ դեպքի վայրում տուժածներին աջակցության և խորհրդատվության գործընթացն արդյունավետ իրականացնելու համար:

7. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ստեղծման ուղղությամբ հիմնվել են 10 հենակետեր՝ ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտ, Ներքին Կարմիր աղբյուր, Այգեպար, Պառավաքար, Մովսես, Չինարի, Սարիգյուղ, Կոթի, Ոսկևան և Բերդավան համայնքներում, աշխատանքներ են տարվում ՀՀ Տավուշի մարզի Չորաթան հենակետի ստեղծման ուղղությամբ:

8. Մշակվել և հավանության է արժանացել ՀՀ քաղաքացիական պաշտպանության համակարգի 2017-2021 թթ. միջոցառումների ծրագրի որոշման նախագիծը:

9. Փոփոխվել և լրամշակվել է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

10. Ընդունվել են «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի միացման ձևով վերակազմակերպելու և «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի վերանվանելու որոշումների նախագծերը:

11. Մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել «Պետական նյութական պահուստի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

### 1.5. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

1. Սոցիալական ոլորտում ներդրումներ ներգրավելու, սոցիալական խնդիրներ լուծելու, բարեգործական ծրագրեր իրականացնելու նպատակով ընդունվել է «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը հաստատելու մասին» որոշում:

2. Ընդունվել է կանոնադրական կապիտալում հիսուն տոկոսից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերի ամբողջությամբ կամ մասնակի մասնավորեցման գործընթացը կանոնակարգելու մասին որոշում:

3. Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է պետական գույքի մասնավորեցման 2017-2018 թթ. ծրագիրը, որում ընդգրկված են 47 պետական մասնակցությամբ ընկերություններ և գույք, ընդ որում դրանցից 24-ը՝ նոր մասնավորեցման առաջարկվող ընկերություններ են:

4. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել պետական գույքի կառավարման 2018-2020 թթ. ծրագիրը:

5. Պետական գույքի օտարման, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների լուծարման, պետական գույքի երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության տրամադրման, տեղաբնակներին հանրակացարանային տարածքների նվիրատվության ընթացակարգերի պարզեցման և վարչարարությունը նվազագույնի հասցնելու նպատակով համապատասխան փոփոխություններ են կատարվել նշված գործընթացները կանոնակարգող որոշումներում:

6. Մշակվել և շահագրգիռ մարմինների համաձայնեցմանն է ներկայացվել պետական գույքի վաճառքի առցանց հարթակ ստեղծելու համար «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. հունիսի 13-ի N 882 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

7. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական մոնիթորինգի համակարգը բարելավելու, այդ կազմակերպությունների տնտեսական արդյունավետությունը որոշելու ու ցուցանիշները սահմանելու, ինչպես նաև գործադիր տնօրենների, կառավարիչների և պետության կողմից նշանակված լիազոր ներկայացուցիչների աշխատանքը գնահատելու և խրախուսման նոր ձևեր ու գործիքակազմ կիրառելու մասին որոշման նախագիծ:

8. Պետական գույքի եռամյա ծրագրի և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործարար ծրագրերի միջև փոխադարձ կապ և ներդաշնակություն սահմանելու համար մշակվել է կազմակերպությունների գործարար ծրագրի օրինակելի ձև:

9. Հաշվետու ժամանակահատվածում՝

- Պետական գույքի հաշվառման բազայում վերահաշվառվել է 23369 միավոր գույք, որից՝ պետական սեփականություն հանդիսացող 7520 միավոր անշարժ գույք:

- Պետական գույքի օտարումից ստացված մուտքերն ունեն հետևյալ տեսքը. գույքի օտարումից ստացված միջոցները կազմել են 2 335 667.9 հազ. դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 337 923.2 հազ. դրամ (այդ թվում՝ Վարչության արտաբյուջե՝ 31 370.3 հազ. դրամ), համապատասխան համայնքային բյուջեներ՝ 1 997 744.7 հազ. դրամ:

- Պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 67 928.2 հազ. դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 66 677.7 հազ. դրամ, իսկ համապատասխան համայնքային բյուջեներ՝ 1 250.5 հազ. դրամ:

- Պետական գույքի վարձակալությունից փաստացի ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 214 757.4 հազ. դրամ:

- ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքների ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման պայմանագրերից փաստացի մուտքագրվել է 127 372.1 հազ. դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 31 745.8 հազ. դրամ (այդ թվում՝ այլ կառավարչական հիմնարկների արտաբյուջեներ՝ 7 344.1 հազ. դրամ), իսկ համապատասխան ՊՈԱԿ-ների բյուջեներ՝ 95 626.3 հազ. դրամ:

- Պետական սեփականություն համարվող հողերի կադաստրային արժեքի վճարումից մուտքերը կազմել են 83 402.4 հազ. դրամ:

- Նշված հոդվածներով ստացված դրամական միջոցները կազմել են 2 829 128.0 հազ. դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 734 506.5 հազ. դրամ:

- Հարուցված հայցերի և բանակցությունների արդյունքում ՀՀ պետական բյուջե է վերադարձվել 15 708.9 հազ. դրամ գումար:

- Պետական գույքի օտարման և մասնավորեցման պայմանագրերով ներդրումային պարտավորություններ կատարվել են՝ 30 392.3 հազ. դրամի, 3 554 870 ԱՄՆ-ի դոլարի, ստեղծվել է 24 աշխատատեղ՝ 73.0 հազ. դրամ աշխատավարձով: Անհատույց օգտագործման իրավունքի պայմանագրերով ներդրումային պարտավորությունները կատարվել են՝ 85 157.6 հազ. դրամի: Նվիրաբերության պայմանագրերով ներդրումային պարտավորությունները կատարվել են՝ 27 220.7 հազ. դրամի:

## 1.6. ԿԱԴԱՍՏՐ

1. Մշակվել և ընդունվել է «ՀՀ հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության հողերի 2016 թ. կադաստրային գները հաստատելու մասին» որոշում:

2. Մշակվել և ընդունվել է «ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2016 թ. հաշվետվության (հողային հաշվեկշիռ) մասին» որոշումը, որի արդյունքում կազմվել է ՀՀ հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) և հասանելի է դարձել շահագրգիռ բոլոր պետական մարմինների, ոչ պետական կազմակերպությունների ու անձանց համար:



3. Իրականացվել են ՀՀ-ում գույքահարկի և հողի հարկի 2017-2019 թթ. հարկման բազաների ձևավորմանն ուղղված աշխատանքներ, որի արդյունքում անշարժ գույքի կադաստրի համակարգի կողմից իրականացվել են հաջորդ երեք տարիների 2017-2019 թթ. Շինությունների ու հողերի կադաստրային գնահատություններ (վերագնահատություններ) և տեղադրվել կադաստրի պետական կոմիտեի էլեկտրոնային կայքում:

4. Մշակվել է «ՀՀ հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2017 թ. կադաստրային գները հաստատելու մասին» որոշման նախագիծը, որի կապակցությամբ սահմանվել են 2017 թ. հողերի կադաստրային գները, որոնք կիրառվում են օտարման, վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրման կամ այլ դեպքերում, ինչը նպաստում է համայնքային բյուջեների ձևավորմանը:

5. Մշակվել է «ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2017 թ. հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» որոշման նախագիծը, որը ներկայումս գտնվում է ՀՀ կառավարությունում՝ քննարկման փուլում:

6. ՀՀ տարածքում WGS-84 (ArmREF02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվադրանտի մոդելի ստեղծման շարունակաբար կատարվող աշխատանքները նպաստում են ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևավորվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակի բարձրացմանը, որն էլ կապահովի «ՌՌՎԵՐ» դիտարկման GPS կայաններից անմիջապես ստանալու կետի տեղադիրքի կոորդինատները WGS-84 (ՎԻ ԶԻ ԷՍ-84) համակարգում:

7. Իրականացվում է «Երևան և Գյումրի քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի տվյալների մշակում և ներբեռնում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե գեոպորտալում» ծրագիրը: Միաժամանակ իրականացվում են Վանաձոր քաղաքի բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքները:

## **2. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **2.1. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Շարունակվել են աշխատանքները՝ ուղղված հանրապետության արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, երկրի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանը, Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերությունների աշխարհագրության ընդլայնմանը, ինչպես նաև երկկողմ և բազմակողմ ձևաչափերում գործընկեր պետությունների հետ հարաբերությունների ընդլայնմանը:

2. Հայաստանը շարունակել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների հետ համատեղ ջանքերը՝ ուղղված դարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորմանը: Տեղի է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների չորս հանդիպում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների երեք այց տարածաշրջան: 2016 թ. դեկտեմբերի 8-ին ԵԱՀԿ ԱԳ նախարարների 23-րդ խորհրդի շրջանակներում ՄԽ համանախագահ երկրների ԱԳ նախարարների համատեղ հայտարարությունում ընդգծվում է, որ ԼՂ հակամարտության բացառապես խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի և այդ առումով դատապարտվում են հրադադարի խախտումները, կոչ է արվում իրագործել Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի գազաթափողովների պայմանավորվածությունները: Համանախագահները 2017 թ. մայիսի 18-ի իրենց հայտարարությունում ուղղակիորեն մատնանշում են Ադրբեջանին, որպես նախահարձակ կողմ:

3. Շարունակվել են ջանքերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, ցեղասպանությունների ու մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման նպատակով: Ընդլայնվել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող երկրների և վարչատարածքային միավորների շրջանակը:

4. Ջանքեր են գործադրվել՝ ուղղված Ռուսաստանի Դաշնության հետ դաշնակցային հարաբերությունների առավել խորացմանը, բազմաոլորտ համագործակցության ամրապնդմանը: Տեղի է ունեցել ՀՀ Նախագահի պաշտոնական մեկ, աշխատանքային երկու այց ՌԴ և բազմակողմ հարթակում նախագահների մակարդակով 6 հանդիպում: ՀՀ վարչապետը և Ազգային ժողովի նախագահը պաշտոնական այցեր են կատարել Ռուսաստանի Դաշնություն: Ակտիվ զարգացում են ապրել միջգերատեսչական կապերը, ապակենտրոնացված համագործակցությունը:

5. Հայ-ամերիկյան բարեկամական գործընկերությունը կարևոր տեղ է զբաղեցրել Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում: 2016 թ. հոկտեմբերի 10-ին Նյու Յորքում կազմակերպվել է «Հայաստան. ներդրումային համաժողովը», որին մասնակցել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը: Տարբեր մակարդակներով շփումներ են կայացել ԱՄՆ-ի նոր վարչակազմի հետ: Հոկտեմբերի 7-ին Վաշինգտոնում կայացել է հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը:

6. ՀՀ արտաքին քաղաքական օրակարգում կարևոր տեղ է զբաղեցրել Եվրոպական միության հետ բազմաոլորտ հարաբերությունների ընդլայնումը: Հայաստանը միացել է ԵՄ հետազոտությունների և նորարարության «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրին: 2017 թ. մարտի 21-ին Երևանում նախաստորագրվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին համաձայնագրի տեքստը: ՀՀ Նախագահը այցելել է Բրյուսել, հանդիպումներ ունեցել ԵՄ ղեկավարության հետ:

7. Ուշադրության կենտրոնում է եղել անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունների առավել զարգացումը: Տեղի է ունեցել ՀՀ Նախագահի և Վրաստանի վարչապետի երկու հանդիպում: 2017 թ. փետրվարին

«Վարչապետը պաշտոնական այցով այցելել է Վրաստան: Հայաստանի և Իրանի նախագահների միջև տեղի է ունեցել երկու հանդիպում՝ Իրանի նախագահի Հայաստան կատարած պաշտոնական այցի և Հայաստանի Նախագահի՝ Իրանի նախագահի երդմնակալության արարողությանը մասնակցելու նպատակով Իրան կատարած այցի շրջանակներում: Շարունակվել են աշխատանքներն Իրանի և Վրաստանի հետ՝ տարածաշրջանային տրանսպորտային և էներգետիկ ծրագրերի իրագործման ուղղությամբ:

8. «Նախագահն ունեցել է աշխատանքային մեկ այց Ղազախստան և երկու այց Ղրղզստան, «Վարչապետը պաշտոնական այցով այցելել է Թուրքմենստան: Տեղի են ունեցել Տաջիկստանի և Թուրքմենստանի նախագահների պաշտոնական այցերը Հայաստան:

9. Շարունակվել են զարգանալ և ընդլայնվել եվրոպական պետությունների հետ Հայաստանի հարաբերությունները: Կայացել են բարձր մակարդակի մի շարք փոխայցելություններ: 2017 թ. մարտին «Նախագահը պաշտոնական այց է կատարել Ֆրանսիա:

10. Շարունակվել են ակտիվ ջանքերը՝ հայ-չինական հարաբերությունների առավել զարգացման ու ամրապնդման ուղղությամբ: Ուշադրության կենտրոնում էր Ճապոնիայի հետ համագործակցության զարգացումը: Ապրիլի 24-26-ը պաշտոնական այցով Հայաստան այցելեց Հնդկաստանի փոխնախագահ Համիդ Անսարին:

11. Ակտիվացել են Մերձավոր Արևելքի և Ծոցի երկրների հետ շփումները: «Նախագահն այցեր է իրականացրել ԱՄԷ և Քաթարի Պետություն: Հայաստանը շարունակել է քայլեր ձեռնարկել ամերիկյան աշխարհամասի պետությունների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Գործնական քայլեր են ձեռնարկվել աֆրիկյան պետությունների հետ Հայաստանի հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ:

12. Հայաստանը շարունակել է ակտիվ ներգրավվածությունը միջազգային կառույցներում և բազմակողմ ձևաչափերում:

13. 2016 թ. հոկտեմբերի 14-ին Երևանում կայացել է ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի գագաթաժողովը, որի ընթացքում ընդունվեցին Մինչև 2025 թ. ՀԱՊԿ հավաքական անվտանգության ռազմավարությունը, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ» հայտարարությունը:

14. 2017 թ. մայիսի 2-ին ՀԱՊԿ գլխավոր քարտուղար է նշանակվել Յուրի Իսաչատուրովը:

15. Հայաստանն ակտիվ ներգրավված է եղել ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում, ԱՊՀ-ում: Բնականոն զարգացել են ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները:

16. 2016 թ. նոյեմբերի 26-27-ը Անտանանարիվոյում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովին որոշում ընդունվեց կազմակերպության 17-րդ գագաթաժողովը Երևանում անցկացնելու մասին:

17. Ակտիվ աշխատանքներ են տարվել արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի ամրապնդման ուղղությամբ: Մշակվել և կառավարության կողմից հաստատվել են երկրների թիրախավորման տնտեսական չափանիշները, թիրախային երկրների ցանկը,

օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների տնտեսական գործունեության կատարողականի գնահատման չափանիշները:

18. Զգալի աշխատանքներ են տարվել Հայաստանի նկատմամբ միջազգային հանրային բարենպաստ կարծիքի ձևավորման ուղղությամբ:

19. Դեպի Հայաստան զբոսաշրջության խթանման նպատակով մի շարք երկրների քաղաքացիների համար դյուրացվել է Հայաստան մուտքի արտոնագիր ստանալու գործընթացը կամ վերացվել է մուտքի արտոնագրի պահանջը:

20. ԱԳՆ կողմից համակողմանի ակտիվ աջակցություն է ցուցաբերվել միջխորհրդարանական կապերի զարգացմանը, միջազգային կազմակերպությունների խորհրդարանական ձևաչափում փոխգործակցության սերտացմանը:

21. Արտաքին գործերի նախարարությունը շարունակել է համակարգել Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը և նպաստել դրանց խորացմանը:

## 2.2. ՀՀ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐ

1. ԵԱՏՄ համակարգման ուղղությամբ՝ համակարգվել են ՀՀ գործադիր մարմինների աշխատանքները մի շարք ուղղություններով, ինչպիսիք են՝ տնտեսական և ֆինանսական քաղաքականության համակարգումը, արդյունաբերական և գյուղատնտեսական զարգացումը, առևտուրը, տեխնիկական կարգավորումը, մաքսային համագործակցությունը, էներգետիկական և ենթակառուցվածքները, մրցակցության պաշտպանությունը և հակամենաշնորհային կարգավորումը, ինչպես նաև ներքին շուկաները, թվայնացումը և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը: Արդյունքում 2017 թ. ընթացքում կազմակերպվել և ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել՝ հանձնաժողովի 25 նիստի, ԵԱՏՀ խորհրդի 9 նիստ, միջպետական խորհրդի՝ 3 նիստ, և բարձրագույն խորհրդի՝ 1 նիստ: Այս ուղղություններով և նիստերի ընթացքում քննարկվել է 433-ից ավելի հարց, ընդ որում՝ 305-ը կողմնակալի նիստերի ընթացքում և 128-ը խորհրդի նիստերի ընթացքում:

2. ԵՄ ստացման համաձայնագրի մշակման աշխատանքների շրջանակում համակարգվել են ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ոլորտային համագործակցության գլխի վերաբերյալ ոլորտային քննարկումները, ընթացիկ աշխատանքները, ՀՀ-ԵՄ Բյուջետային աջակցության ծրագրերի վերաբերյալ քննարկումները: Համագործակցության շրջանակում իրականացվում է նաև ԵՄ-ից ստացված նյութերի քննություն, պատասխանատու գերատեսչություններին հանձնարարականների կազմում և ներկայացում, հանձնարարականների կատարման արդյունքների և ներկայացված առաջարկությունների ամփոփում և ներկայացում ԵՄ:

2017 թ. մարտի 21-ին նախաստորագրվել է Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ):

ՀՀ-ԵՄ համատեղ գործընկերության առաջնահերթությունների վերաբերյալ քննարկումներն արդեն իսկ ավարտվել են: Վերջինս կարևոր դերակատարում կունենա հաջորդ

փուլում, որն է Միասնական աջակցության շրջանակ 2017-2020 թթ. փաստաթուղթը: Այս փաստաթղթի նախագիծը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:

3. Կայուն զարգացման նպատակների ազգայնացման գործընթացի շրջանակներում.

- 2016 թ. հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ են մտել «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված Կայուն զարգացման 17 նպատակները՝ ընդունված 2015 թ. սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի գագաթաժողովում: ՄԱԿ-ի անդամ երկրների կառավարություններից ակնկալվում է ստանձնել հանձնառություններ և մշակել ազգային ծրագրեր՝ 17 նպատակներին հասնելու համար: Երկրներն առաջնային պատասխանատվություն ունեն իրականացնելու հետևողական գործողություններ և դիտարկելու նպատակների իրագործման առաջնթացը:

- ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների համաշխարհային գործընթացի հայաստանյան աշխատանքները կանոնակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 21.02.2017 թ. N 155-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ բաղկացած 4 ենթախմբերից՝ սոցիալական, տնտեսական, էկոլոգիական, իրավական և ժողովրդավարական հավասարության:

- Տնտեսական ոլորտային ենթախմբի նիստերը կայացել են ըստ ժամանակացույցի՝ 2017 թ. հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին: Թիրախներն ազգայնացվել են խմբագրման և մասնակի փոփոխության ճանապարհով՝ առանց էապես շեղվելու ՄԱԿ ԿԶՆ գլոբալ թիրախների բուն իմաստից: Ցուցանիշները ձևավորվել են՝ հիմք ընդունելով ՄԱԿ ուղղորդիչ ցուցանիշները: Աշխատանքների իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է միջգերատեսչական հանձնաժողով:

4. Բյուջետային աջակցությունների ուղղությամբ համակարգվել և վերահսկվել են ԵՄ, ՎԶԵԲ հակաճգնաժամային ֆոնդի, Համաշխարհային բանկի և Ասիական զարգացման բանկի բյուջետային աջակցությունները, որոնց համագումարը գերազանցում է 200 մլն ԱՄՆ-ի դոլարը: Բյուջետային աջակցությունները նպատակ են ունեցել աջակցել ՀՀ-ում մի շարք առանցքային ոլորտների զարգացմանը և արդիականացմանն ուղղված բարեփոխումներին, ինչպիսիք են ջրային, քաղաքացիական ծառայության, ընդերքի, թվայնացման, հարկային և մի շարք այլ ոլորտներ:

5. Այլ նպատակային աշխատանքների ուղղությամբ.

- Մասնակցություն է ցուցաբերվել ԱՊՀ տնտեսական խորհրդի 73-րդ և 74-րդ նիստերին, որոնց շրջանակներում քննարկվել են մինչև 2020 թ. ԱՊՀ անդամ պետությունների միջև մի խումբ ինովացիոն ծրագրերի իրականացման, 2017-2020 թթ. ԱՊՀ անդամ պետությունների միջև աշխատանքի ընդհանուր շուկայի և միգրացիայի կարգավորմանն ուղղված ծրագրերի, հիմնական ընկերությունների կողմից խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման մասին, ինչպես նաև ԱՊՀ անդամ պետությունների միջև ապահովագրական ծառայությունների բարելավման մասին և մի շարք այլ հարցեր: Օրակարգի հարցերի վերաբերյալ ՀՀ գերատեսչությունների կողմից առաջարկված դիտողություններն ու

առաջարկությունները պաշտպանվել են ԱՊՀ տնտեսական խորհրդի նիստերի ընթացքում և ընդունվել խորհրդի անդամների կողմից:

- Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի օրակարգի ձևավորման նպատակով հանրապետական գործադիր մարմիններում շրջանառվել և հավաքագրվել են ընթացիկ տարում կայանալիք և հանձնաժողովի նիստում քննարկման ենթարկա հարցերի, ինչպես նաև համագործակցության ընդլայնմանն ուղղված առաջարկությունների նախագծային տաբերակները դրանք ամերիկյան կողմի հետ բանակցելուց հետո ձևավորվող օրակարգ ներառելու նպատակով:

- ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրում նախատեսված թվային Հայաստանի օրակարգի ձևավորման արդի հրամայականով պայմանավորված հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել միջազգային կառույցների հետ փոխգործակցության ընթացիկ մեխանիզմների կատարելագործմանն ուղղված՝ դրանց վերափոխման հիմքում դնելով «խելացի» պետական կառավարում ապահովելու սկզբունքը: Ըստ այդմ, նախատեսվում է վերաթողարկվող Mulberry պետական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում ավելացնել նոր ֆունկցիոնալություն, որը թույլ կտա փաստաթղթի մակարդակով ապահովել դրա շարժի հսկման հնարավորությունը (traceability) և իրական ժամանակում տեղեկանալ նշված փաստաթղթի մշակման արդյունքներին, տնօրինողին և տեսնել տվյալ փաստաթուղթը փոփոխող կապերն այլ փաստաթղթերի հետ:

- 2017 թ. մայիսի 16-ին Թեհրան քաղաքում Եվրասիական ֆոնդային բորսաների ֆեդերացիայի (ԵՖԲՖ, FEAS) գլխավոր ասամբլեայի արտահերթ նիստի ժամանակ, գլխավոր ասամբլեան որոշում է կայացրել ֆեդերացիայի գլխամասային գրասենյակը Ստամբուլից Երևան տեղափոխելու վերաբերյալ: ԵՖԲՖ գլխամասային գրասենյակի ադմինիստրատիվ կառավարումն ստանձնելու խնդրանքին մեծապես օժանդակել է ՀՀ ՄՏԻԲ նախարարությունը:

- Օժանդակվել և համակարգվել են ծրագրերի իրականացման գրասենյակների աշխատանքները՝ այսպես 2017 թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության կողմից Ծրագրերի իրականացման գրասենյակների (ԾԻԳ) և միջազգային կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ կազմակերպվել են օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի եռամսյակային կատարողականների վերաբերյալ քննարկումներ:

- Շարունակվել են Ճյուղային մարմինների ղեկավարների հետ համատեղ ԾԻԳ-երի քանակի, ինչպես նաև դրանց պահպանման ծախսերի կրճատման շուրջ քննարկումները, որի արդյունքում 2017 թ. ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- դադարեցվել է «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը,

- դադարեցվել է «Հայջրմուկոյոյոյի» ՓԲԸ-ի գործունեությունը և վերջինիս վարկային ծրագրերի պորտֆելի կառավարումը փոխանցվել է ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեին,

- դադարեցվել է «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը և հիմնվել է Գյուղատնտեսական զարգացման հիմնադրամը:

- 2017 թ. ընթացքում իրականացվել է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» վարկային ծրագրի միջոցառումների իրականացման գործընթացի համակարգումը, որի նպատակն է ենթակառուցվածքային ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը՝ ուղղված մի շարք մարզերում տեղական տնտեսության զարգացմանը, զբոսաշրջային գրավչության բարձրացմանը, այդ թվում՝ մշակութային ժառանգության վերականգնմանը և զբոսաշրջային երթուղու զարգացմանը: Ներդրումները կուղղվեն հանրային ենթակառուցվածքների, ճանապարհների, ջրամատակարարման բարելավմանը, հասարակական տարածքների, պատմական շենքերի, թանգարանների վերականգնմանը և այլն: Բանկի հետ համատեղ շարունակվել են մակրոտնտեսական կանխատեսումների կարողությունների զարգացման աշխատանքները:

- 2017 թ. ընթացքում իրականացվել է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ տարվող աշխատանքների համակարգում: Հիմնվելով Ասիական զարգացման բանկի Հայաստանի հետ գործընկերության նոր ռազմավարության վրա, համատեղ քննարկումների արդյունքում մշակվել է Հայաստանի Հանրապետության 2018-2020 թթ. երկրի գործառնությունների բիզնես պլանը, որն ընդգրկում է ԱԶԲ կողմից Հայաստանին տրամադրվող վարկերը և տեխնիկական աջակցությունը: Հաշվի առնելով Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի իրականացման միջոլորտային բնույթը, շարունակվել է ծրագրի աշխատանքների համակարգումը: Արդյունքում ծրագրի շրջանակներում նախատեսված 46 դպրոցներից հաստատվել է սեյսմիկ անվտանգության տեսակետից առաջնահերթ կարգով բարելավման անհրաժեշտություն ունեցող հանրապետությունում առկա 20 դպրոցների ցանկը, որոնք ենթակա են առաջնահերթ կարգով ուժեղացման և (կամ) նորի կառուցման՝ համաձայն վերանայված շինարարական նորմերի և դպրոցների շենքերի ուժեղացման ուղեցույցների: Մշակվել և ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թ. օգոստոսի 23-ի N 118-Ա հրամանով հաստատվել է Համաշխարհային բանկի «Աղետների և դրանց հետևանքների նվազեցման գլոբալ նախաձեռնության» «Անվտանգ դպրոցներ» ծրագրի տեխնիկական աջակցության շրջանակներում մշակված Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող դպրոցական շենքերի սեյսմակայուն վերակառուցման և նոր դպրոցական շենքերի նախագծման ուղեցույցը:

- Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ կենտրոնական բանկի և KfW Գերմանական զարգացման բանկի կողմից մշակված Գյուղատնտեսական ապահովագրության ներդրման

պիլոտային ծրագրի կայացմանը: Ծրագիրը նպատակ ունի համահարթեցնել գյուղատնտեսության մեջ զբաղված և վերջինիս վրա ապավինող ՀՀ քաղաքացիների եկամուտները՝ նվազեցնելով անբարենպաստ, անկանխատեսելի բնակլիմայական երևույթների ազդեցությունը տնային տնտեսությունների եկամուտների վրա:

### 2.3. ՍՓՅՈՒՌՔ

1. ՀՀ սփյուռքի նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ սփյուռքահայերին խորհրդատվական ծառայություններ տրամադրելու, բիզնես ծրագրեր առաջարկելու, ներդրումների սահուն իրականացմանն օգնելու համար՝ «Մեկ պատուհան» կառուցակարգը:

2. ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայքում բացվել է «Ներդրումներ Հայաստանում» բաժին, որտեղ ներկայացված են ներդրումներին վերաբերող ՀՀ օրենսդրությունը, արտոնությունները, բիզնես ծրագրերը և այլ նյութեր, (ավելի քան 200 հատ): Սփյուռքի գործարարներին ու առևտրաարդյունաբերական պալատներ են ուղարկվել բիզնես ծրագրեր, ինչպես նաև նրանց տեղեկացվել է Հայաստանում ներդրումներ իրականացնելու բոլոր հարթակների մասին (ընդհանուր առմամբ՝ շուրջ 1200 գործարարի):

3. ՀՀ սփյուռքի նախարարության Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական շտեմարանում բացվել է «Գործարարներ» բաժինը, որտեղ մուտքագրվել են ավելի քան 1700 սփյուռքահայ գործարարների տվյալներ:

4. Սփյուռքում հայապահպանությանն ուղղված միջոցառումների շրջանակում իրականացված ձեռնարկներից են 10 մեկօրյա նոր դպրոցների բացումը, շուրջ 80 հազար կտոր ուսումնական գրականության առաքումը (250 դպրոց), «Սփյուռք» ամառային դպրոցի դասընթացների կազմակերպումը 2017 թ. (266 մասնակիցներ՝ 30 երկրից), «Արի տուն» երիտասարդական ծրագիրը (1055 մասնակից՝ 36 երկրից) և այլն:

5. Հայաստան-սփյուռք 6-րդ համաժողովին (սեպտեմբերի 18-20-ը, 2017 թ.) մասնակցել է 1.837 հրավիրյալ (1.363-ը՝ արտերկրից)՝ աշխարհի 71 երկրից: Համաժողովն ունեցել է 3 լիագումար նիստ, 4 թեմատիկ ուղղություն, որոնցում տեղի են ունեցել քննարկումներ՝ նվիրված ՀՀ տնտեսական զարգացման, արտաքին քաղաքական, հայապահպանության հիմնախնդիրներին, ՀՀ պաշտպանական քաղաքականությանը:

Միաժամանակ՝ սեպտեմբերի 19-20-ը երևանում տեղի է ունեցել Հայկական առևտրային ցանցերի համաժողով, որին, մասնավորապես, ներկայացվել են ներդրումային դաշտի բարելավման վերաբերյալ առաջարկները, հարկային նպաստավոր դրույքաչափերը, որակավորված աշխատուժի առկայությունը և այլ հնարավորություններ: Համաժողովին մասնակցել է շուրջ 250 գործարար՝ սփյուռքից:



## 2.4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իսկանացվել են, ՀՀ զինված ուժերի կարիքներից ելնելով, ՍՌՏ ներկրումների, պաշտպանական վերափոխումներին խորհրդատվական աջակցության, ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների՝ միջազգային զորավարություններին և վարժանքներին մասնակցության, անձնակազմի՝ արտերկրում վերապատրաստման, ՀՀ զինված ուժերի և ՌԴ զինված ուժերի զորքերի (ուժերի) Միացյալ խմբավորման և Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ միավորված տարածաշրջանային համակարգի ձևավորման, խաղաղապահ առաքելություններին մասնակցության, պաշտպանության ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման, զինված ուժերի փոխգործունակության ամրապնդման ուղղությամբ պլանավորված աշխատանքները: Համաձայնեցվել և ուժի մեջ է մտել ՀՀ-ՆԱՏՕ ԱԳԳԾ 2017-2019 թթ. փաստաթուղթը, անցկացվել է ՀՀ-ՆԱՏՕ պլանավորման և վերանայման գործընթացի նպատակների կատարման հերթական գնահատումը:

2. Շարունակվել են Պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՌՎ) արդյունքների իրականացման, այդ թվում՝ «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» կառավարման սկզբունքի ներդրման և ՀՀ զինված ուժերում ինստիտուցիոնալիզացման, առաջավոր փորձի ընդհանրացման աշխատանքները: Շարունակվել են Պաշտպանության պլանավորման գործընթացի ներդրման և այն «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծում արտացոլելու աշխատանքները:

3. Պետական և ռազմական կառավարման համակարգի կատարելագործման շրջանակներում վերանայվում են ՀՀ զինված ուժերի կառուցվածքը և զորքերի կառավարման համակարգը, մշակման փուլում է գտնվում ՀՀ պաշտպանության ռազմավարական պլանավորման կարգի նախագիծը, մշակվել է ՀՀ ՊՆ ստորաբաժանումների գործունեության վերանայման և կառուցվածքային փոփոխությունների հայեցակարգը, որի հիման վրա նախատեսվում է իրականացնել կառուցվածքի օպտիմալացում և գործառույթային պարտականությունների բարեփոխումներ:

4. Ներդրվել է «Դիտակետ» ծրագիրը, որի շնորհիվ առաջին անգամ բոլոր զորացրված զինծառայողները մասնակցելու են բազմաշերտ և ընդգրկուն սոցիարցման՝ գնահատելու ծառայության պայմանների, արդյունավետության և ձեռք բերած փորձին առնչվող բոլոր հարցերը, ինչպես նաև համակարգն՝ առհասարակ: Հարցման ընդհանրացված արդյունքները հենք են դառնալու նպատակաուղղված բարեփոխումների համար:

5. Մշակվել է «ՀՀ ՁՌԻ զորամասերի և կառավարման մարմինների ծախսերի հաշվառման անձնագրի օրինակելի ձև» նախագիծը: Փաստաթղթի գործարկումը հնարավորություն կընձեռի կանոնակարգելու և ամբողջական տեսքի բերելու նյութատեխնիկական միջոցների հաշվառումը, բարելավելու զորամասերի տնօրինության տակ գտնվող միջոցների պահպանության և արդյունավետ օգտագործման վերահսկելիությունը:

6. Մշակվել է ՀՀ զինվորական կոմիսարիատի և դրա տարածքային ստորաբաժանումների գործունեության արդիականացման և բարեփոխումների հայեցակարգը, որի արդյունքում նախատեսվում է զինվորական կոմիսարիատի համակարգի լայնածավալ օպտիմալացում:

7. Մոդելավորվել, մշակվել և պիլոտային ծրագրով գործարկվել են զինապարտների հաշվառման և զորակոչի կազմակերպման ավտոմատ կառավարման համակարգն ու էլեկտրոնային տվյալների բազան, որի արդյունքում նախատեսվում է համակարգն ամբողջությամբ օպտիմալացնել:

8. Մարտական հերթապահության կատարելագործման նպատակով իրականացվել են ծավալուն աշխատանքներ՝ ուղղված դիտարկման միասնական համակարգի մշակմանն ու ներդրմանը: Շարունակվել են նաև մարտական դիրքերի շրջանում անշարժ և կառավարվող ջերմատեսիլ, գիշերային և ցերեկային տեսադիտարկման համակարգերի (սարքերի) տեղադրման, հակառակորդի կողմից դիտարկվող և գնդակոծվող հատվածներում փոս-ճանապարհների կառուցման, բարձրադիր և դժվարամատչելի հենակետեր տանող ճանապարհների սարքավորման ու բարեկարգման աշխատանքները:

9. Մեկնարկվել է «Թումո-բանակ» ծրագիրը, որը հայկական բանակի զինծառայողներին հնարավորություն կտա յուրահատուկ կրթական միջավայրում ձեռք բերելու գիտելիքներ և հմտություններ, որոնք կբարձրացնեն նրանց մրցունակությունը թե՛ ծառայության ընթացքում և թե՛ զորացրվելուց հետո: Ծրագրում ներառված են հետևյալ ուղղությունները՝ համակարգչային ծրագրավորում, ոռոտաշինություն, համակարգչային գրաֆիկա, թվային երաժշտության ստեղծում:

10. Հաստատված գործողությունների ծրագրի համաձայն՝ աշխատանքներ և միջոցառումներ են իրականացվել ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման համար: Աշխատանքներ են իրականացվել հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների ստեղծման, հաշվապահական հաշվառման տեղեկությունների կառավարման ավտոմատ համակարգի (ՏԿԱՀ) մշակման և ներդրման ուղղությամբ:

11. ՀՀ պաշտպանության նախարարությունում թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով 2017 թ. հունվարի 11-ից մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնում գործարկվել է 1-28 «Թեժ գիծ» ծառայությունը, որը զինծառայողներին և քաղաքացիական անձանց հնարավորություն է ընձեռում անվճար զանգի միջոցով վեր հանելու ՀՀ զինված ուժերին և զինվորական ծառայությանն առնչվող ցանկացած խնդիր: Հունվարի 11-ից մինչև օրս «թեժ գծով» ստացվել է շուրջ 13.000 զանգ: Իրականացվում է զանգերի քանակական և որակական տվյալների ընթացիկ վերլուծություն, դուրս են բերվում համակարգային բնույթի խնդիրները, և մշակվում են դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ:

12. ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել «Պաշտպանության մասին» ու «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ նոր օրենքների նախագծերը, որոնցում, ի թիվս ՀՀ կառավարության ծրագրում նշված հարաբերությունների, օրենսդրական կարգավորում են ստացել նաև «Պատիվ ունեն» և «Ես եմ» ծրագրերը:

13. Ընդունվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքը և դրա կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 2017 թ. փետրվարի 2-ի N 86-Ն որոշումը, որի արդյունքում ներդրվել է վնասների հատուցման նոր համակարգ:

14. Սահմանված երաշխիքների և փոխհատուցումների մասին իրազեկվածության բարձրացման նպատակով մշակվել, զորամասեր է առաքվել և «www.mil.am» կայքէջում տեղադրվել է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները» տեղեկատվական ձեռնարկը:

15. Հաստատվել է ՀՀ ՊՆ զորամասերում կին զինծառայողներով համարված ստորաբաժանումների կազմավորման փորձնական ներդրման և ներքին ու պահակային ծառայությունների կատարելագործման աշխատանքների իրականացման պլան-ժամանակացույցը:

16. Շարունակվում է բարեվարքության ամրապնդման նախաձեռնության շրջանակում իրականացվող ինքնագնահատման գործընթացը, որի նպատակն է պարզել առկա կոռուպցիոն ռիսկերի և մեխանիզմների շրջանակը և մշակել բարեվարքության ամրապնդման գործողությունների ծրագիր: ՄԹ ֆինանսավորմամբ ԵԽ կողմից իրականացվում է «Զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանում» ծրագիրը, որի նպատակն է ՀՀ պաշտպանության ոլորտի օրենսդրությունը և գործող ընթացակարգերը համապատասխանեցնել ԵԽ չափանիշներին՝ ուշադրություն դարձնելով նաև ՄԻԵԴ նախադեպային իրավունքին:

17. Շարունակվել է ռազմակրթական բարեփոխումներին միջազգային փորձագիտական աջակցությունը: Ուշադրության կենտրոնում են եղել ՀՀ ՌՈՒՀ-երի ուսումնական ծրագրերի վերափոխումը, դասախոսական կազմի վերապատրաստումը, մեթոդական աջակցության ցուցաբերումը և հրավիրյալ դասախոսների կողմից պարապմունքների անցկացումը: ՊՌՎ արդյունքների իրագործման շրջանակներում շարունակվել է անձնակազմի կառավարման ոլորտի բարեփոխումներին փորձագիտական աջակցությունը:

18. Աշխատանքներ են իրականացվում արևմտյան պետությունների պահեստազորային սպաների պատրաստության տարրերի ներդրման միջոցով «Պատիվ ունեն» ծրագրի հետագա կատարելագործման համար: Շարունակվել են արհեստավարժ սերժանտական համակարգի կատարելագործման և տեղակայելի դաշտային հոսպիտալի կարողությունների զարգացման աշխատանքները: 2017 թ. ապրիլին հիմնադրվել է Խաղաղապահ ուժերի ուսումնական կենտրոնը:

19. Բացվել է ռազմաբժշկական ուսումնական կենտրոն, որտեղ ՀՀ ՁՈւ բուժականների և սանհրահանգիչների պատրաստության համար օգտագործվում են միջազգային ամենաարդիական դաշտային բուժօգնության պարագաները, տեսական գիտելիքները և գործնական փորձը:

20. Իր գործունեությունն է շարունակել սահմանամերձ համայնքներում համակարգման ենթակա հարցերի լուծման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը: Կազմվել և իրականացվում է հանրային և ոչ պետական կազմակերպությունների միջոցներով սահմանամերձ համայնքներում 2017-2018 թթ. զարգացման և անվտանգության միջոցառումների ծրագիրը:

### 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

3.1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ, ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

#### Արտահանում.

2017 թվականի հունվար-օգոստոս ժամանակահատվածում ապրանքների արտահանումը կազմել է 1383.2 մլն ԱՄՆ-ի դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 246.3 մլն ԱՄՆ-ի դոլարով (21.7 %-ով): Դեպի ԱՊՀ երկրներ, ԵՄ երկրներ և այլ երկրներ արտահանումն աճել է համապատասխանաբար 33.0% , 32.6% և 11.0%-ով:

2017 թվականի հունվար-օգոստոս ժամանակահատվածում ապրանքների ներմուծումն ըստ ծագման երկրի հատկանիշի կազմել է 2497.4 մլն ԱՄՆ-ի դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 515.4 մլն ԱՄՆ-ի դոլարով (26.0%-ով): ԱՊՀ, ԵՄ և այլ երկրներից ներմուծումն աճել է համապատասխանաբար 21.7%, 21.0% և 30.5%-ով:

Ներմուծման աճը մեծապես պայմանավորվել է միջանկյալ օգտագործման (արտադրական նպատակներով) և կապիտալ արտադրանքի ներմուծման աճով:

Արտահանման աճի տեմպերը մեծացնելու համար հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք կրելու են շարունակական բնույթ, մասնավորապես՝

1. Արտոնյալ առևտրային ռեժիմ ունեցող շուկաների մուտքի հնարավորությունների օգտագործման շրջանակն ընդլայնելու ուղղությամբ.

- ԵԱՏՄ շուկաներ հայաստանյան ապրանքատեսակների արտահանման խնդիրներին օպերատիվ լուծումներ տալու նպատակով Ռուսաստանի Դաշնության «Վերին Լարս» մաքսային կետի և ՀՀ կառավարության կողմից նշանակված պաշտոնյաների մասնակցությամբ ձևավորվել է աշխատանքային խումբ: Արդյունքում՝ հատկապես ձմռան և գարնան ամիսներին այդ գործում առաջացած խոչընդոտների հաղթահարման համար ապահովվել է օպերատիվ արագ արձագանքմամբ:

- ՀՀ պաշտպանության նախարարության հետ քննարկումների արդյունքում ձևավորվել են անհրաժեշտ այլընտրանքային օդային փոխադրումների հնարավորություններ՝ Լարսի ճանապարհը փակ լինելու դեպքում օժանդակելու դրանց առաջնահերթ օդային փոխադրումներին՝ հատկապես շուտ փչացող ապրանքատեսակների մասով:

- Մշակվել և ԵԱՏՄ հանձնաժողովին է ներկայացվել տեղական արտադրատեսակների առանձնահատկությունները սահմանող ստանդարտներ, որոնց ընդունումը հնարավորություն կտա առանց խոչընդոտների ԵԱՏՄ անդամ երկրներ շուկայահանելու և արտահանելու տեղական արտադրատեսակները և պաշտպանելու տեղական արտադրողներին: Մասնավորապես, այդ արտադրատեսակներից են հանքային ջրերը, կոնյակի սպիրտը, հայկական կոնյակը, նարինեն, բաստուրման, սուջուփը, կերակրի աղը և մածունը:

- ՀՀ-ում առկա լոգիստիկ կազմակերպությունների հետ, որոնք արտերկրում, մասնավորապես, ԵԱՏՄ երկրներում, ունեն համապատասխան լոգիստիկ ենթակառուցվածքներ (պահեստային և գրասենյակային տարածքներ), քննարկումներ են կազմակերպվել պետություն-մասնավոր հատված համագործակցության ձևաչափով՝ հայկական փոքր և միջին ձեռնարկությունների արտադրանքի ներկայացմանն աջակցության և արտահանման հնարավորությունների օգտագործման համար: Մասնավորապես, այդ կազմակերպություններն են «Այս Հաուս», «Սպայկա» և մի քանի այլ ընկերություններ:

- Սանկտ Պետերբուրգի ադմինիստրացիայի հետ արտահանման և ներկրման համատեղ ընկերություն հիմնելու նպատակով մշակվել և գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ վաճառքի ու իրացման «Ագրոպոլիս» կենտրոնի ղեկավարությանն է ներկայացվել արտահանող և ներմուծող համատեղ կազմակերպություն հիմնելու ծրագրի նախնական տարբերակը:

- Ապահովվել է ԵՄ Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի հասանելիությունը՝ հնարավորություն տալով բարելավելու ավելի քան 6200 ապրանքատեսակի զրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով ապրանքների մուտքը ԵՄ շուկա:

- Եվրոպական միության շուկա մուտքը դյուրացնելու համար 2016 թ. նոյեմբերին ՀՀ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը դարձել է հավատարմագրման եվրոպական համագործակցության ասոցացված անդամ, և ստորագրվել է ասոցացված անդամակցության համաձայնագիր: Այն հնարավորություն է ընձեռում մի քանի տարվա համապատասխանեցման աշխատանքներից հետո հասնելու անդամակցության: Արդյունքում՝ Հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրված լաբորատորիաների կողմից ներկայացված փորձաքննության արդյունքները կճանաչվեն ԵՄ երկրներում՝ նվազեցնելով հայաստանյան ապրանքներն արտահանողների վարչարարական բեռը և ծախսերը:

2. Տարածաշրջանային երկրների շուկաներում հայկական ապրանքների մուտքի ապահովման և արտահանման զգալի ավելացման համար՝

- բանակցություններ են վարվել Իրանի Իսլամական Հանրապետության Ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի հետ՝ Հայաստանում կատարված սերտիֆիկացման արդյունքները ճանաչելի դարձնելու և Հայաստանում պարենային և ոչ պարենային արտադրանքի համապատասխանության գնահատման մարմինների ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր բացելու շուրջ: Դրա արդյունքում 2017 թ. հունիսի 14-ին Թեհրանում ստորագրվել է «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ԻԻՀ ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի միջև համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը, ինչը թույլ կտա Հայաստանում կատարված համապատասխանության գնահատման արդյունքները ճանաչելի դարձնել Իրանի Իսլամական Հանրապետությունում: Մշակվել և 2017 թ. հուլիսին իրանական կողմին փոխանցվել է փոխըմբռնման նոր հուշագիր, որի ստորագրման արդյունքում հնարավոր կդառնա իրանական և ԵՍՏ շուկաներում պարենային և ոչ պարենային արտադրանքի նկատմամբ կիրառվող անվտանգության պարտադիր նորմերի փորձարկումներ իրականացնող համապատասխանության գնահատման մարմինների (փորձարկման լաբորատորիաների) մասնաճյուղերի հիմնումը ՀՀ-ում և Իրանում:

- աշխատանքներ են կատարվում Իրանի հետ սահմանագծին ազատ տնտեսական գոտու ձևավորման համար: Մշակվել են ազատ տնտեսական գոտու ստեղծման հայեցակարգային մոտեցումներ և գործարար ծրագիր, դրան համապատասխան՝ իրականացվում են գոտու կառուցապատման աշխատանքներ: Ներդրումային ծրագրերի իրականացման շրջանակներում առաջիկա 10 տարվա ընթացքում ակնկալվում է 50-60 ընկերության մուտք, 120-150 մլն ԱՄՆ-ի դոլարի ներդրումներ, 1000-1500 նոր աշխատատեղ:

- դեպի Իրան մուտք գործելու համար հայաստանյան մարդատար ավտոմեքենաների համար սահմանված չափազանց մեծ երաշխիքային վճարները փոխարինված են ապահովագրությամբ, և նախկինում պահանջվող արժեքային շեմը նվազեցված է երեք անգամ:

- հայ-իրանական համատեղ ներմուծող/արտահանող ընկերություն ստեղծելու համար հանդիպումներ են տեղի ունեցել ԻԻՀ արդյունաբերության, հանքերի ու առևտրի նախարարության և «Արագ» ազատ տնտեսական գոտու ղեկավարության հետ: Նշված կառույցի ստեղծումը կնպաստի Հայաստանից Իրան ապրանքների արտահանմանը, ինչպես նաև կաջակցի իրանական ապրանքների մուտք գործելուն Հայաստանի համար արտոնյալ ռեժիմ ունեցող շուկաներ:

- Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած այցի արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել սննդամթերքի արտահանման գործում:

3. Վերազգային կորպորացիաների ցանցերում հայաստանյան կազմակերպությունների արտադրանքի ներկայացվածության ապահովման համար՝ վերազգային կորպորացիաների հետ իրենց ցանցերում հայկական արտադրանքի ներկայացվածության ապահովման վերաբերյալ քննարկումներ են կազմակերպվել: Մասնավորապես, կազմա-

կերպվել է METRO AG ընկերության ռուսաստանյան ներկայացուցչության պատվիրակության այցը: Բանակցություններ են վարվել սննդամթերքի և հագուստի արտահանման շուրջ: Արդեն իսկ պայմանագիր է կնքվել «Սևանի իշխան» ընկերության հետ, և նախատեսվում են համաձայնություններ նաև հագուստի արտահանման մասով: Հայկական պանրի արտահանման շուրջ ընկերությունները բանակցություններ են վարում նաև ռուսական «Լենտա» և x5 առևտրային ցանցերի հետ:

2017 թ. 7 ամսվա ընթացքում արձանագրվել է Հայաստանից ձկան արտահանման ավելի քան 85 % կազմող աճ: Նույն ժամանակահատվածում ավելի քան 21 %-ով աճ է արձանագրվել նաև մանածագործական ապրանքների (այդ թվում՝ տրիկոտաժե արտադրանքի) արտահանման գործում:

4. Գործարար կապերի խթանման և արտերկրում հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման համար՝

- կազմակերպվել է ընդհանուր առմամբ 7 գործարար համաժողով, մասնավորապես՝
  - սեպտեմբերին կազմակերպվեց «Հայաստանը՝ որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրով համաժողովը, որին հրավիրվել և մասնակցել է շուրջ 250 անձ,

- Հայաստանի ոսկերիչների ասոցիացիայի (AJA) հետ համատեղ հոկտեմբերին Երևանում կազմակերպվել է Համաշխարհային ոսկերչական կոնֆեդերացիայի (CIBJO) տարեկան համաժողով, որին մասնակցել է ավելի քան 80 պատվիրակ՝ 25 երկրից,

- 2016 թ. դեկտեմբերի 21-ին Երևանում կազմակերպվել է «Հայաստան-Իրան» գործարար համաժողովը: Համաժողովին մասնակցել է ավելի քան 170 գործարար: Ստորագրվել է համագործակցության 5 հուշագիր: Եվս 4 գործարար համաժողով կայացել է երկկողմ՝ Հայաստան-Իրան, հայ-չվեյցարական, Հայաստան-Իտալիա, հայ-վրացական, հայ-տաջիկական համագործակցության շրջանակներում.

- 2016 թ. սեպտեմբերից ի վեր կազմակերպվել և (կամ) ապահովվել է հայկական ավելի քան 550 ընկերության մասնակցությունը 14 ցուցահանդեսի, այդ թվում՝ «Москвиз» 2016, 2017, «World food Moscow-2016», «CPHI Worldwide», «Текстильлегпром» 2016, 2017, «Արտադրված է Հայաստանում-2016», «Հայաստան էքսպո-Թեհրան», «ArmHiTec-2016», «Եվրասիական շաբաթ» 2016, 2017, «JUNWEX YEREVAN SHOW», «Պրոդ Էքսպո-2017»: Դրանց արդյունքում կնքվել է ավելի քան 4.3 մլրդ դրամ ընդհանուր արժեքով 113 պայմանագիր: Միայն 2017 թ. կազմակերպված 5 միջոցառման գծով ապահովվել է 50 ընկերության մասնակցությունը, որից 11-ը նոր արտահանող են: Կայացել են հանդիպումներ շուրջ 1200 հնարավոր գործընկերների հետ, 34 ընկերություն կնքել է 81 արտահանման պայմանագիր կամ իրականացրել տեղում վաճառք՝ 3.3 մլրդ դրամ ծավալով.

- ՄԱԱԶԿ (UNDO) «Հայաստանի արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերի մրցունակության բարձրացում՝ արդիականացման և շուկան մատչելի դարձնելու միջոցով» ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների ընթացքում ընդլայնվում են հայկական թեթև արդյունաբերության ոլորտի ընկերությունների արտահանման հնարա-

վորությունները: Մասնավորապես, 2017-2018 թթ. ընթացքում նախատեսվում է տալ 14 մլն ԱՄՆ-ի դոլարի չափով պատվեր: 4 ընկերության կողմից 2017 թ. 1-ին կիսամյակի ընթացքում ռուսական հագուստի Dimanche և Smena ցանցերի հետ կնքվել է 6 արտահանման պայմանագիր, իրականացվել է 267.8 հազ. ԱՄՆ-ի դոլարի չափով արտահանում: Նախատեսվում է պայմանագրերի կնքում՝ ևս 6 ընկերության հետ:

5. Գերակա ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերի և արտահանման խրախուսման շրջանակներում՝

- ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնություն է ստացել 28 ընկերություն: Ընկերությունների ներդրումային ծրագրերով նախատեսված է մոտավորապես 440 մլն ԱՄՆ-ի դոլարի ներդրում և շուրջ 2985 նոր աշխատատեղի ստեղծում:

- տրամադրվել են ԱԱՀ վճարման ժամկետի հետաձգման արտոնություններ. 2016 թ. 4-րդ եռամսյակում՝ 1 ներդրումային ծրագրի, որի շրջանակներում ներմուծվող ապրանքների ընդհանուր արժեքը՝ 71.4 մլն դրամ, 2017 թվականին՝ 19 ներդրումային ծրագրի, որոնց շրջանակներում ներմուծվող ապրանքների ընդհանուր արժեքը՝ 35.5 մլրդ դրամ:

6. Արտահանման ապահովագրման ծառայությունների ընդլայնման համար՝

- արտահանման ապահովագրության գործակալության կողմից 2016 թ. դեկտեմբերի դրությամբ ապահովագրված գործարքների արժեքը հասել է 2 մլրդ դրամի սահմանաչափին, որն ավելի քան 5 անգամ գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը: 2017 թ. 8 ամսվա ընթացքում ապահովագրված գործարքների արժեքը գերազանցել է 2.594 մլրդ դրամը:

- ներդրվել է նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրության ծառայություն, որի շրջանակներում ամբողջովին լուծվել է արտահանողի՝ շրջանառու կապիտալի նկատմամբ պահանջարկը՝ ինչպես արտադրության, այնպես էլ՝ տարածամկետ վճարման սպասման փուլերում:

#### Գործարար միջավայր.

1. WB «Doing Business» զեկույցի շրջանակում հաստատվել է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2017 թ. միջոցառումների ծրագիրը: Հաստատված 49 միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ՀՀ դիրքը 190 երկրների շարքում 38-րդ տեղից, այլ հավասար պայմաններում, կբարելավվի 12 կետով:

2. Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված իրավական կարգավորումների շրջանակներում՝

- նվազեցվել է գյուղատնտեսության ոլորտի ջերմոցային տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների կողմից սպառվող բնական գազի սակագինը:

- հստակորեն սահմանվել են հարկը, տուրքը կամ այլ պարտադիր վճարը չվճարելու՝ հանցագործություն համարվող բոլոր գործողությունները, ինչպես նաև կրկնակի բարձրացվել է դրանք չվճարելու խոշոր չափի նվազագույն շեմը՝ 2 միլիոնից դառնալով 4 մլն դրամ:



- հաստատվել են ԱԱՀ գումարներն արտահանողներին վերադարձնելու պարզեցված ընթացակարգեր՝ մինչև 20 մլն ԱԱՀ գումարների վերադարձի համար սահմանելով 4 օր.

- ոչ պետական մարմիններին (լիազորված օպերատորներ՝ Հայփոստ, Արդշինբանկ, Ամերիաբանկ և Կոնվերս բանկ) վերապահվել են պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որոշ գործառույթներ:

3. Գործարարների հետ քննարկումների արդյունքում խնդիրների բացահայտման և հնարավոր լուծումների մշակման ուղղությամբ Ռուսաստանի Դաշնությունից ավմաստի հումքի մատակարարումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հստակեցվում են ընթացակարգերը: Արդյունքում՝ կսկսվեն ավմաստի հումքի կանոնավոր մատակարարումները ՌԴ Գոսխրանից:

4. ՓՄՁ սուբյեկտներին, սկսնակ ձեռնարկատերերին և նորարարության զարգացմանն աջակցություն ցուցաբերելու համար՝

- ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 10956 աջակցություն, այդ թվում՝ սկսնակ գործարարների ձեռներեցության, ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական, ՓՄՁ միջազգայնացման, վարկային երաշխավորությունների տրամադրման և այլ ուղղություններով.

- «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ կողմից 2016 թ. սեպտեմբեր ամսից ի վեր տրամադրվել է 63 վարկ՝ շուրջ 2.3 մլրդ դրամ գումարի չափով արտոնյալ վարկեր.

- ՏՏ ոլորտում երկարաձգվել է հարկային արտոնություններից օգտվելու նախկին ժամկետը՝ 2020 թ. հունվարի 1-ի փոխարեն արտոնություններից օգտվելու ժամկետը սահմանվել է 5 տարի: 2016 թ. սեպտեմբերից մինչև այժմ հավաստագրվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի 144 սկսնակ ընկերություն:

5. Ստեղծարար և նորարարական բիզնեսների ու տեխնոլոգիական զարգացմանն ուղղված՝

- 2017 թ. փետրվարին նախաստորագրվել է ՀՀ և ԻԻՀ միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության փոխըմբռնման հուշագիրը.

- 2017 թ. մարտին «Ֆիլիպ Մորիս Ինթերնեյշնլ» ընկերության հետ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ Հայաստանում հետազոտությունների և մշակումների կենտրոն հիմնելու նպատակով: Շարունակվել են նաև բանակցություններն այլ վերազգային ընկերությունների հետ՝ վերջիններիս դեպի Հայաստան գրավելու և համատեղ ծրագրեր իրագործելու նպատակով.

- մեկնարկել են Հայաստանում նորարարական համակարգի զարգացման նոր ուղղվածությունների և ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները:

Ներդրումներ.

1. Ներդրումների պաշտպանության և վստահության մակարդակի բարձրացման համար՝
  - մշակվել է օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենք.
  - ներդրվել է վերաբնակեցման (ռեդոմիցիլացիա) ինստիտուտը. կապահովվեն օտարերկրյա նոր 5-10 ընկերության մուտք և գրանցում Հայաստանում:
2. Ներդրումային ծրագրերի և դրանց իրականացման լրացուցիչ հնարավորությունների ձևավորման համար՝
  - ստեղծվել է «Մեդրիի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ն.
  - հիմնադրվել է Հայաստանի ներդրողների ակումբ. մեկնարկել է 2 ծրագիր՝ շուրջ 250 մլն ԱՄՆ-ի դոլարի ներդրումով.
  - 2017 թվականի 8 ամսվա արդյունքներով պետական և համայնքային բյուջեներից, վարկային ծրագրերով և մասնավոր հատվածի ֆինանսավորմամբ ներդրումային ծրագրերի կատարողականը կազմել է շուրջ 376,0 մլն ԱՄՆ-ի դոլար.
  - 2017 թվականի առաջին կիսամյակում տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ստացումների (ներհոսքի) ծավալը կազմել է շուրջ 1.024 մլն ԱՄՆ-ի դոլար, այդ թվում՝ ուղղակի ներդրումները՝ շուրջ 328 մլն ԱՄՆ-ի դոլար (2016 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ ավելացում՝ համապատասխանաբար 36.6 % և 26.3%).
  - ներդրվել է ներդրումների խթանման և ներդրողների սպասարկման «մեկ պատուհանի» սկզբունքով գործող համակարգը:

ՀՀ-ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ՝

ՈԼՈՐՏԸ	2017 թվականի կատարողականի կանխատեսումը	2017 թվականի 8 ամսվա կատարողականը	Տոկոսը
Աշխատանք և սոցիալական ոլորտ	\$4,665,318	\$1,800,000	39%
Առողջապահություն	\$41,792,371	\$18,700,000	45%
Արդարադատություն	\$4,729,252	\$2,500,000	53%

<sup>1</sup> Աղյուսակը ներառում է տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվող պետական, այդ թվում՝ վարկային կամ դրամաշնորհային միջոցներով իրականացվող, պետություն – մասնավոր հատված համագործակցության ներդրումային ծրագրերը, ինչպես նաև այն մասնավոր ներդրումային ծրագրերը, որոնք պետության կողմից ստացել են հարկային, մաքսային կամ այլ արտոնություններ: Մասնավոր հատվածի կողմից ներկայումս իրականացվող մի շարք ներդրումային ծրագրեր ներառված չեն աղյուսակում:

Բնապահպանություն	\$4,126,624	\$1,400,000	34%
Գյուղատնտեսություն	\$101,280,000	\$22,614,000	22%
Էներգետիկա և բնական պաշարներ	\$220,235,708	\$155,388,141	71%
Պետական գույքի կառավարում	\$21,523,370	\$582,500	3%
Պետական եկամուտներ	\$7,795,914	\$3,200,000	41%
Քաղաքաշինություն	\$111,502,646	\$31,980,000	29%
Քաղաքացիական ավիացիա	\$1,000,000	\$349,720	35%
Կրթություն և գիտություն	\$18,958,455	\$6,650,000	35%
Մշակույթ	\$2,112,427	\$177,169	8%
Սպորտ և երիտասարդություն	\$7,135,016	\$1,500,000	21%
Տարածքային կառավարում և զարգացում	\$79,190,679	\$45,070,000	57%
Տնտեսական զարգացում և ներդրումներ	\$88,870,134	\$42,069,000	47%
Տրանսպորտ, կապ և SS	\$119,535,368	\$42,040,000	35%
ԸՆԴԱՄԵՆԸ	\$834,453,282	\$376,020,530	45%

#### Զբոսաշրջություն.

1. ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցությամբ Հայաստանում կազմակերպվել է ՄԱԿ ԶՀԿ Աֆիլացված անդամների 38-րդ նստաշրջանը: Նստաշրջանին մասնակցել են ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղար Թալեր Ռիֆահին և այլ բազմաթիվ միջազգային հեղինակավոր պաշտոնյաներ:

2. Դեպի Հայաստան սահմանային անցման գործընթացի դյուրացման համար՝

- 2016 թ. նոյեմբերի 10-ից Զինաստանի քաղաքացիները մուտքի արտոնագիր կարող են ստանալ նաև սահմանային անցման կետերում կամ առցանց.

- Արաբական Միացյալ Էմիրությունների քաղաքացիներին թույլատրվել է այցելել և մնալ ՀՀ տարածքում՝ առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում՝ նրանց ազատելով մուտքի վիզա ձեռք բերելու պահանջից.

- 2017 թ. մարտի 1-ից ՌԴ քաղաքացիները կարող են Հայաստան այցելել նաև ներքին անձնագրերով.

- Քաթարի Պետության քաղաքացիների համար սահմանվել է առանց մուտքի վիզայի ռեժիմ՝ 2017 թ. հունիսի 10-ից.

- Ճապոնիայի քաղաքացիների համար 2017 թ. սեպտեմբերի 6-ից սահմանվել է առանց մուտքի վիզայի ռեժիմ:

3. ՀՀ-ում մատչելի ավիափոխադրումների ապահովման համար 2016 թ. Դեկտեմբերի 15-ից Գյումրու «Շիրակ» օդանավակայանից ռուսական «Պոբեդա» բյուջետային ավիաընկերությունն սկսեց իրականացնել շաբաթական 3 չվերթ՝ Մոսկվա-Գյումրի-Մոսկվա երթուղիով, իսկ հայկական ավիափոխադրող «Տարոն-Ավիա» ավիաընկերությունը 2017 թ. ապրիլի 25-ից սկսած չվերթներ է իրականացնում Գյումրի-Կրասնոդար-Գյումրի, Գյումրի-Սամարա-Գյումրի, Գյումրի-Դոնի Ռոստով-Գյումրի, և 2017 թ. հունիսի 30-ից՝ նաև Գյումրի-Մոսկվա-Գյումրի ուղղություններով:

4. Հայաստան ընդհանուր այցելությունների թիվը կազմել է՝

- 2015 թ. հունվար-հունիսին՝ 1.066.779,
- 2016 թ. հունվար-հունիսին՝ 1.086.466, աճը 2015 թ. հունվար-հունիսի համեմատ կազմել է 1.8 %,

- 2017 թ. հունվար-հունիսին՝ 1.350.791, աճը 2016 թ. հունվար-հունիսի համեմատ կազմել է 24.3%:

5. Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է՝

- 2015 թ. հունվար-հունիսին՝ 489.500,
- 2016 թ. հունվար-հունիսին՝ 501.118, աճը 2015 թ. հունվար-հունիսի համեմատ կազմել է 2.4 %,

- 2017 թ. հունվար-հունիսին՝ 622.381, աճը 2016 թ. հունվար-հունիսի համեմատ կազմել է 24.2 %:

### 3.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

#### Բյուջետային բլոկ.

1. ՀՀ պետական բյուջեի կատարման գործընթացը լրացուցիչ կանոնակարգելու նպատակով սահմանվել են մի շարք ֆիսկալ կանոններ: Դրա հետ մեկտեղ հաստատվել է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և ռիսկերի կառավարման կարգը:

2. Մշակվել և ամփոփվել է ՀՀ 2018-2020 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի ամբողջական փաստաթուղթը:

3. Մշակվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և դրան հարակից 4 ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

4. Անցկացվել է պետական ծախսերը կազմելու՝ ՀՀ պետական բյուջեն ձևավորելու գործընթացի ավտոմատացված համակարգ մշակելու և վերջինս պետական կառավարման համակարգում գործող այլ ավտոմատացված համակարգերի հետ ինտեգրելու՝ տեղեկատվության փոխանակման հնարավորություն ստեղծելու աշխատանքների ձեռքբերման մրցույթ, որից ելնելով՝ նախատեսվում է 2019 թ. ներդնել պետական ծախսերը կազմելու ավտոմատացված համակարգ:

5. ՊՈԱԿ-ների գործունեության թափանցիկության և արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է 2018 թ. ավարտին ՊՈԱԿ-ների հաշիվների վարումը կազմակերպել գանձապետարանի միջոցով:

Պետական գնումների ոլորտ.

1. Հաստատվել է «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը և դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը՝ գնման ձևերի նվազեցման, ընթացակարգերի կազմակերպման, պարզեցման, համակարգի թափանցիկության և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների սահմանափակման նպատակով:

2. Ընդլայնվել է էլեկտրոնային գնումների համակարգն օգտագործող պատվիրատուների շրջանակը, մեծացել է համակարգով իրականացվող գնումների ծավալը: Էլեկտրոնային գնումների համակարգում են ներառվել նաև ՀԲ-ի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի հաշվին կատարվող գնումները:

Լիցենզավորման ոլորտ.

1. Տրամադրվել է մեկ խաղատան կազմակերպման լիցենզիա: Ուժը կորցրած են ճանաչվել 2 ինտերնետ շահումով խաղերի և 2 խաղատան, ինչպես նաև աուդիտորական ծառայության իրականացման 3 լիցենզիաներ:

2. 43 անձ հաշվառվել է որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող: Դադարեցվել է 13 անձի ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը, մերժվել է 4 անձի ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի տրամադրումը:

3. Գանձվել է 2 546 038 454 դրամ պետական տուրք:

4. Լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության ոլորտում տեղում իրականացված ստուգումների արդյունքում կիրառվել է 10,2 մլն, իսկ ստացված 331 հաշվետվության ուսումնասիրության արդյունքում՝ 8,2 մլն դրամի չափով տուգանքներ:

Ֆինանսական շուկայի վերլուծության և գարգացման ոլորտ.

1. Մշակվել և հավանություն է տրվել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, որը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:

2. Մշակվել և հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով:

3. Ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև՝ ուղղված ֆինանսական և կապիտալի շուկայի զարգացման նպատակով համաձայնեցված և հետևողական գործողությունների իրականացմանը:

Ոչ ֆինանսական ոլորտ.

1. Մշակվել և հավանության են արժանացել ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտեր:
2. Նախատեսվում է լիցենզիաները տրամադրել էլեկտոնային եղանակով:

Եկամուտների քաղաքականություն.

1. Կատարվել են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի կիրարկումն ապահովող միջոցառումների իրականացման աշխատանքներ, որոնց շրջանակներում մշակվել և ընդունվել են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտեր:

2. Կատարվել են գույքահարկով հարկման համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրություններ, համակարգի վերանայման կապակցությամբ հարկային բեռի փոփոխություններին վերաբերող վերլուծություններ, որոնց արդյունքում մշակվել է անշարժ գույքի հարկի միասնական բանաձև, որը թույլ է տալիս հողի արժեքից որոշակի սահմանված գործակիցների կիրառմամբ հաշվարկել հողի և դրա բարելավումների արժեքը, ինչն էլ սահմանված է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում: Համակարգի վերանայման վերաբերյալ առաջարկությունների ամբողջական փաթեթն արդեն պատրաստ է:

3. Ուսումնասիրվել է պետական սեփականություն հանդիսացող ազգային պարկերի և ռեզերվացիաների կառավարման առաջադեմ փորձը: Հաշվի առնելով նաև «Սևան» ազգային պարկի առանձնահատկությունները՝ մշակվել է «Սևան» ազգային պարկի կառավարման բարեփոխման վերաբերյալ հայեցակարգային առաջարկություն, որով նախատեսվում է պարկի կառավարման միջազգային մրցույթ հայտարարել և հաղթող կազմակերպությանը տրամադրել հարկային արտոնություններ:

4. «Սևան» ազգային պարկի տնտեսական և ռեկրեացիոն գոտիներում գույքահարկի դրույքաչափերի վերաբերյալ առաջարկի մշակման շրջանակներում իրականացվել է ուսումնասիրություն, թե զբոսաշրջային կենտրոններում ինչպե՛ս են հարկվում հյուրանոցները: Ուսումնասիրության արդյունքում առավել համահունչ է ընտրվել Սինգապուրի օրինակը: Վերջինիս հյուրանոցների գույքահարկի հաշվարկման մոտեցումները հիմք են ընդունվել՝ պարկի տարածքում պարապուրդի շեմի որոշման համար: Սահմանվել են պարապուրդի շեմից ցածր գտնվող գույքային միավորների համար դրույքաչափի պրոգրեսիվ բազմապատկիչ, որն ավելի խիստ է հարկում պարապուրդի շեմից ավելի ցածր գտնվող գույքային միավորը:

5. Տնտեսավարող սուբյեկտների միջսահմանային գործունեությանը և միջպետական առևտրին նպաստելու համար կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի շրջանակն ընդլայնելու նպատակով ստորագրվել է «ՀՀ կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան:

6. 2017 թ. մարտի 2-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության տարածքում մի մաքսային մարմնից մյուս մաքսային մարմին իրականացվող տարանցման առանձնահատկությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. նոյեմբերի 3-ի N 1930-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով հանվել է ներքին տարանցման ժամանակ օտարերկրյա ապրանքների տեղափոխման դեպքում մինչև ԵԱՏՄ անդամակցությունը ՀՀ-ում օգտագործվող «փոխադրման ամփոփագրի» կիրառությունը: Բացի դրանից, սահմանվել է, որ ներքին տարանցման դեպքում օտարերկրյա ապրանքները տեղափոխվում են «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ մաքսային մարմիններ ներկայացնելով տարանցման հայտարարագիր, որը լրացվում է հայտարարատուների կողմից, իսկ որպես այլընտրանք սահմանվել է, որ տարանցման հայտարարագրի փոխարեն մաքսային մարմիններ կարող են ներկայացվել տրանսպորտային (փոխադրման), առևտրային կամ այլ փաստաթղթեր՝ փաստաթղթերի վերաբերյալ թերթիկով: Այս դեպքում՝ տարանցման հայտարարագիրն ավտոմատ հայտարարագրման էլեկտրոնային համակարգում ձևավորվում է մաքսային մարմինների կողմից:

#### Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում.

1. Մշակվել է Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների բարեփոխումների հայեցակարգը, որը հանրային լայն քննարկումներից հետո սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ քննարկման:

2. Շարունակվել է ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման գործընթացը:

3. Հաստատվել է ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը:

#### Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրում և զարգացում.

1. Սպասարկվում են ՀՀ ֆինանսների նախարարությունում գործող քառասուն միավոր սերվերային համակարգերը, ինչպես նաև համակարգչային լոկալ և գլոբալ ցանցերը:

2. Իրականացվել են ՀՀ ֆինանսների նախարարության նոր կայքի ([www.minfin.am](http://www.minfin.am)) նախագծման և ներդրման աշխատանքները:

3. Իրականացվել են ՀՀ ֆինանսների նախարարությունում գործող թվային հեռախոսակայանի ներդրման աշխատանքները, որում գործում է 750 հեռախոսահամար:

4. Իրականացվել են ՀՀ ֆինանսների նախարարությունում գործող համակարգչային տեխնիկայի և կիրառական ծրագրային ապահովումների արդիականացումն ու սպասարկումը:

5. Իրականացվել են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական գնումների նոր կայքի ([www.gnumner.am](http://www.gnumner.am)) նախագծման և ներդրման աշխատանքներ:

6. Գանձապետական գործառնական օր ([clienttreasury.minfin.am](http://clienttreasury.minfin.am)) համակարգում 2017 թ. 8 ամսվա ընթացքում գեներացվել են մոտավորապես 200 հասանելիության հավաստագրեր և օգտատերերի անվանումներ:

7. Մակրոտնտեսական քաղաքականության վարչության համար նախագծվել և իրականացվել է մաքսային և հարկային տվյալների ցուցանիշներով շտեմարան ([foxik.minfin.am](http://foxik.minfin.am)):

#### Մակրոտնտեսական քաղաքականության ոլորտ.

1. ՌԴ ֆինանսների նախարարության հետ պետական ֆինանսների կառավարման ոլորտում երկկողմ համագործակցության շրջանակներում մշակվել է միջոցառումների ծրագիր, որով նախատեսվում է 2017-2020 թթ. մշակել դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդել՝ ՀՀ ֆինանսների նախարարության համար:

Միաժամանակ, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ բանակցություններ են վարվել հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության մոդելի մշակման և ներդրման համար տեխնիկական աջակցություն ստանալու նպատակով, ինչպես նաև մշակվել է համապատասխան տեխնիկական առաջադրանք:

2. Տնտեսական աճը չտուգանող նոր հարկաբյուջետային կանոնների ներդրման նպատակով ԱՄՀ-ից ներգրավվել է տեխնիկական աջակցություն, որի շրջանակներում միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա ԱՄՀ-ի կողմից առաջարկվել են նոր հարկաբյուջետային կանոններ: Առաջարկությունների հիման վրա ՀՀ ՖՆ կողմից մշակվել է հարկաբյուջետային կանոնների փաթեթ, ինչի հիման վրա նախատեսվում է վերանայել պարտքի և դեֆիցիտի գործող կանոնները, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով սահմանել նոր հարկաբյուջետային կանոններ: Այդ նպատակով մշակվել է համապատասխան նախագծերի փաթեթ և սահմանված կարգով դրվել է շրջանառության մեջ:

#### Պետական պարտքի կառավարման ոլորտ.

1. ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի զարգացման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդները ՀՀ կենտրոնական բանկից տեղափոխվել է ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ-ի ժամանակակից ծրագրային լուծումներով և պարտքի կառավարման գործիքներով գործարքներ իրականացնելու հնարավորություններով օժտված առևտրային հարթակ.

- պարտատոմսերով գործարքներն իրականացվում են (T+n) սկզբունքով՝ հետաձգելով գործարքի իրականացման օրն աճուրդի օրվանից.



- պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումներն իրականացվում են մրցակցային առաջարկությունների հիման վրա, իսկ աճուրդի միջին կշռված եկամտաբերությամբ պարտատոմսերը վաճառվում են միայն աճուրդի ժամանակ պարտատոմս գնած գործակալներին ու մանրածախ վաճառքի գանձապետական պահառու համակարգի ներդրողներին:

- կարճաժամկետ պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկում տեղաբաշխվում է վերաբացումների միջոցով՝ մեկ թողարկմամբ համախմբելով տարբեր ժամկետայնության կարճաժամկետ պարտատոմսերը:

2. Ներդրվել է Գանձապետական պահառուի միջոցով պարտատոմսերի մանրածախ վաճառքի առցանց համակարգ (gp.minfin.am):

3. Ընդլայնվել է Գանձապետական պահառուի միջոցով վաճառվող պարտատոմսերի գործիքակազմը: Եթե նախկինում ներդրողները Գանձապետական պահառուի միջոցով կարող էին ձեռք բերել միայն կարճաժամկետ պարտատոմսեր, ապա այժմ նաև՝ միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր:

4. Հաստատվել է պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների վարքագծի գնահատման և ընտրության կարգը, որին համապատասխան հրապարակվել են առաջնային շուկայի մասնակիցների (գործակալների) և պոտենցիալ մասնակիցների գործունեության 2016 թ. հոկտեմբերից մինչև 2017 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածի եռամսյակային գնահատականները:

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

1. Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի համար Հայաստանում ստեղծվելու և գործելու բարենպաստ պայմանների ձևավորման շրջանակներում գործարկվել է ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի գրանցման էլեկտրոնային համակարգ, որը ներկայումս գտնվում է կատարելագործման փուլում: Զուգահեռաբար պատրաստվում են ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի վերաբերյալ պոտենցիալ ներդրողներին տրամադրման ենթակա տեղեկատվական նյութեր: Իրականացնում են մշտական մոնիթորինգ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի պրակտիկ խնդիրների նկատմամբ և անհրաժեշտության դեպքում տրամադրում ՀՀ օրենսդրության վերաբերյալ պարզաբանումներ:

2. Արժեթղթավորման ոլորտի զարգացմանը նպաստելու նպատակով մշակվել է «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը նպատակ ունի իրավական կարգավորման մակարդակում վերացնելու արժեթղթավորման ոլորտում բացահայտված գործնական խնդիրները: Միևնույն ժամանակ իրականացվել է արժեթղթավորման ոլորտի զարգացման համար անհրաժեշտ նախապայմանների և ոչ իրավական խոչընդոտների ուսումնասիրություն և վերլուծություն, որոնց հիման վրա մշակման փուլում է արժեթղթավորման ոլորտի,

հատկապես՝ ենթակառուցվածքների և շուկայի մասնակիցների կարողությունների զարգացման ծրագիրը:

3. Չաշխատող ակտիվների վերագործարկման մեխանիզմների ներդրման նպատակով մշակվել է Չաշխատող ակտիվների վերագործարկումը խթանող մեխանիզմների ներդրման վերաբերյալ հայեցակարգի նախագծի նախնական տարբերակը: Միևնույն ժամանակ աշխատանքներ են կատարվում միջազգային կառույցների հետ չաշխատող ակտիվների կառավարման վերջնական բիզնես մոդելի մշակման համար, որի արդյունքում կվերջնականացվի օրենսդրական փոփոխությունների փաթեթը:

4. Կենսաթոշակային խնայողությունները ՀՀ տնտեսության իրական հատված ուղղելու նպատակով իրականացվել և շարունակում են իրականացվել կապիտալի շուկայի զարգացմանն ուղղված քայլեր, մասնավորապես, տեղական մի քանի խոշոր ընկերությունների հետ (այդ թվում՝ «ՀԵՑ», «Գազպրոմ Արմենիա», «Վեոլիա Ջուր») կատարվում են աշխատանքներ՝ վերջիններիս կողմից պարտատոմսերի և բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից դրանց հնարավոր վարկանշման համար:

Ակտիվ աշխատանքներ են իրականացվում «ՀԵՑ» և «Գազպրոմ Արմենիա» ընկերությունների հետ՝ թողարկումների հետ կապված հաշվարկների իրականացման, թողարկման պլանի մշակման համար, որպեսզի վերջիններս կայացնեն համապատասխան որոշումներ:

5. Պետական բաժնեմասի՝ ֆոնդային բորսայում հրապարակային առաջարկի միջոցով մասնավորեցման նպատակով ներկայացվել են մասնավորեցման եղանակների, գնահատման մոդելների վերաբերյալ հիմնական մոտեցումները, իսկ, մասնավորապես, «Վեոլիա Ջուր» ընկերության հետ կապված՝ ՀՀ կենտրոնական բանկը համագործակցում է միջազգային ներդրումային ընկերության՝ Goldman Sachs-ի հետ, որը ներկայացրել է իր մասնակցությամբ ընկերության արժեթղթերի վաճառքի մեխանիզմը:

### 3.3. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1. Ստվերային տնտեսության ծավալների կրճատման ուղղությամբ իրականացվող հետևողական աշխատանքի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում հաջողվել է ապահովել 1,139,451.1 մլն դրամ հարկային և մաքսային եկամուտներ (ներառյալ ԱԱՀ վերադարձի գումարը), ինչը շուրջ 6.6 տոկոսով կամ 70,867.1 մլն դրամով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշը, իսկ նույն ժամանակաշրջանում հարկային և մաքսային եկամուտներն առանց ԱԱՀ վերադարձի գումարների կազմել են 1,082,122.6 մլն դրամ, ինչը շուրջ 6.3 տոկոսով կամ 63,852.4 մլն դրամով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշը:

2. Կրճատվել են ՀՀ պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակներին վերաբերող գերավճարները և ապառքները, մասնավորապես, ՀՀ պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակներին վերաբերող գերավճարները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել են 6.401.2 մլն դրամով՝ 2017 թ. սեպտեմբերի 1-ին կազմելով 265,484.7 մլն դրամ, իսկ չկատարված հարկային պարտավորությունները 2017 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 122,750.0 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 7,459.1 մլն դրամով:

3. ԱԱՀ-ի վերադարձված գումարը կազմել է 57,328.5 մլն դրամ, ինչը շուրջ 16%-ով կամ 7,920.1 մլն դրամով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշից:

4. Հարկային ստուգումներն առավել հասցեական և արդյունավետ դարձնելու նպատակով կատարելագործվել է ստուգման ենթակա ռիսկային հարկ վճարողների ընտրողականության ավտոմատ համակարգը, ինչը նաև հնարավորություն է ընձեռել շուրջ 47.8% կրճատել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների և ուսումնասիրությունների թիվը:

5. Հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի նոր կառուցվածքը: Մասնավորապես, լուծարվել են հարկային (տարածքային) տեսչությունները, վերջիններիս փոխարեն ստեղծվել է 3 վարչություն, և դրանք ներառվել են կոմիտեի աշխատակազմի ստորաբաժանումների կազմում: Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կրճատվել է նաև մաքսատների թիվը:

6. Գործարկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ մոնիթորինգային կենտրոնը, որի կողմից 2017 թ. օգոստոսի 31-ի դրությամբ իրականացված մոնիթորինգի արդյունքներով հարկ վճարողներին ուղարկվել է 3040 ծանուցում:

7. Օրինապահ հարկ վճարողներին խրախուսելու և նրանց հետ գործընկերային հարաբերությունները զարգացնելու նպատակով ներդրվել է «Օրինապահ հարկ վճարող» կարգավիճակի տրամադրման համակարգը, ինչն այդ կարգավիճակն ունեցող հարկ վճարողներին մի շարք հանգամանքներում տալիս է մրցակցային առավելություններ: 2017 թ. առաջին ութ ամսվա արդյունքներով՝ օրինապահ հարկ վճարողի հավաստագիր է տրամադրվել 129 հարկ վճարողի, որոնց ցանկերը հրապարակվել են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

8. ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան՝ հարկային ապառքներ կուտակած հարկ վճարողներին աջակցելու նպատակով ընդունվել են հարկային համաներում նախատեսող համապատասխան օրենքներ, որոնցով սահմանվել են հարկ վճարողների հարկային պարտավորությունների համար հաշվեգրված տույժերից ու տուգանքներից ազատում, հատուկ ուշադրություն է հատկացվել միկրոձեռնարկատիրության ոլորտին. ինքնազբաղված անձինք ազատվել են հարկերից, իսկ փաստացի գործունեություն չիրականացնող, գույք և հարկային պարտավորություններ չունեցող

հարկ վճարողներին պարզեցված ընթացակարգով լուծարվելու հնարավորություն է ընձեռվել:

9. Ընդլայնվել է օտարերկրյա ֆիզիկական անձանց ԱԱՀ-ի վերադարձի կիրառության շրջանակը՝ գնումների մեծության նվազագույն սահմանաչափը 2 անգամ իջեցվել է՝ 100 հազ. դրամի փոխարեն սահմանվելով 50 հազ. դրամի չափով:

10. Արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության շրջանակներում՝ արտահանողներին ԱԱՀ-ի գումարների վերադարձման ընթացակարգը պարզեցնելու և ժամկետները կրճատելու նպատակով 2017 թ. ապրիլի 13-ից ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 333-Ն որոշումը, որով, մասնավորապես, սահմանվել են ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների՝ մինչև 20 մլն դրամի հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարների միասնական հաշիվ մուտքագրման պարզեցված ընթացակարգը և ժամկետները:

Միաժամանակ, 01.09.2016 - 31.08.2017 թթ. ժամանակահատվածում 20 մլն դրամից ավելի հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարներն օրենքով նախատեսված մինչև 180 օրվա ընթացքում վերադարձնելու պայմաններում դրանք փաստացի վերադարձվել են միջինը 77 օրվա ընթացքում:

11. Ընդլայնվել են ոչ ռիսկային համարվող երկրներից կատարվող ներմուծումների մասով գործարքի գնի մեթոդով մաքսային արժեքի որոշման շրջանակները, և վերանայվել են մաքսային արժեքի հայտարարագրման մոտեցումները: Գործարկվել է մաքսային արժեքի էլեկտրոնային հայտարարագրման համակարգը, որը նվազագույնի է հասցնում մաքսավոր-հայտարարատու շփումները՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: Արդյունքում՝ բարելավվել է գործարքի գնի մեթոդով մաքսային արժեքի որոշման գործընթացը՝ այդ մեթոդով մաքսային արժեքի որոշման տեսակարար կշիռը հասցնելով շուրջ 68 %-ի:

12. 2017 թ. հունվարի 1-ից տնտեսավարող սուբյեկտների համար ապահովվել է մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի հասանելիությունն առանց որևէ վճարի վճարման:

### 3.4. ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ

#### Էներգետիկա.

1. Մշակվել և ընդունվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը: Ժամանակացույցով նախատեսված են փուլային ազատականացման միջոցառումներ՝ մինչև 2020 թ.:

2. ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանն ու միջպետական առևտրի զարգացմանը նպաստող իրավական պայմանների ստեղծման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել

«Էներգետիկայի մասին», «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

3. «Էներգոհիմպես» ՓԲԸ-ի և «Գլոբալ Ինթերնեյշնալ Էներջի» կորպորացիայի միջև ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև էլեկտրական էներգիայի փոխհոսքեր իրականացնելու մասին պայմանագիր, որը թույլ է տալիս օպտիմալացնել ՀՀ-ում էլեկտրական էներգիայի արտադրման և սպառման ռեժիմները:

4. Հավանություն է տրվել ՀՀ կառավարության, «Դեբեդ Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Հայաստանի ներդրողների ակումբ» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի միջև շրջանակային համաձայնագրի ստորագրմանը, որի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում կկառուցվի 76 ՄՎտ դրվածքային հզորությամբ «Շնող» հիդրոէլեկտրակայանը:

5. Մշակվել և շրջանառվել է Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկ, որի արդյունքում ակնկալվում է օրենսդրական դաշտի կատարելագործում՝ հիդրոէներգետիկայի հետագա զարգացումն ապահովելու համար:

6. ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած՝ Արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայանի կառուցման ներդրումային ծրագրի առաջին փուլում նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մասրիկի տեղանքում կառուցել «Մասրիկ-1» արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայան՝ շուրջ 55 ՄՎտ հզորությամբ: 2017 թ. ապրիլի 28-ին հայտարարվել է «Մասրիկ-1» արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայանի մրցույթի նախատրակավորման հրավերը, նախատրակավորման շեմը հաղթահարել են տասն ընկերություն և կոնսորցիում: Նախատեսվում է, որ մրցույթի հաջորդ փուլի մասին կհայտարարվի 2017 թ. աշնանը: Ակնկալվում է, որ մրցութային գործընթացը կավարտվի 2018 թ. սկզբին, և մրցութում հաղթող ճանաչված ընկերությունը կամ կոնսորցիումը ձեռնամուխ կլինի 55 ՄՎտ պիկային հզորությամբ առաջին խոշոր արևային համակարգային կայանի կառուցման աշխատանքների մեկնարկին:

7. Ըստ տրամադրված լիցենզիաների՝ փոքր (մինչև 1 ՄՎտ) հզորությամբ 11 արևային ֆոտովոլտային էլեկտրակայանները գտնվում են կառուցման փուլում: Դրանց գումարային հզորությունը կազմում է 10 ՄՎտ:

8. Վերականգնվող էներգետիկայի ոլորտում մինչև 150 կՎտ հզորությամբ 131 ինքնավար էներգաարտադրողների 01.09.2017թ. դրությամբ տրվել են տեխնիկական պայմաններ, որից 89-ը (գումարային 1,126 ՄՎտ հզորությամբ) արդեն միացել են ցանցին:

9. Վերականգնվող էներգետիկայի ոլորտում ինքնավար էներգաարտադրողների մասսայականացմանն ուղղված խթանիչ միջոցառումների իրականացման նպատակով մշակվել և շրջանառության մեջ են դրվել «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ

կատարելու մասին» և «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

10. Ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր իրանական «Մապնա» ընկերության հետ ՀՀ-ում 50 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայանների համար ներդրումներ կատարելու հնարավորությունների վերաբերյալ:

11. ՀՀ Գեղարքունիքի մարզի մի շարք համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ մինչև 1250 հա, առանց մրցույթի՝ վարձակալության հիմունքներով տրամադրվել է «Աքսես Ինֆրա Սենթրալ Էյժա Լիմիթեդ» ընկերությանը՝ վերջինիս կողմից հողմային էներգիայի կիրառմամբ էլեկտրական էներգիայի արտադրության առաջնեկային ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով: Նախատեսվում է կառուցել մոտավորապես 130 ՄՎտ գումարային հզորությամբ հողմային էլեկտրակայան:

12. Ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր իսպանական «Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս. Էլ.» ընկերության հետ ՀՀ-ում հողմաէլեկտրակայանի կառուցման ծրագրի վերաբերյալ: Փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է ՀՀ-ում 100-150 ՄՎտ հզորությամբ էլեկտրակայանների կառուցում:

13. 2017 թ. մարտի 22-ին ԱՄԷ-ի մայրաքաղաք Աբու Դաբիում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր ԱՄԷ-ում գրանցված «Օուշն Հոլդինգ» ՍՊԸ-ի հետ՝ Հայաստանում արևային էներգետիկայի նախագծերի զարգացման նպատակով ներդրումների իրականացման վերաբերյալ: Փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է 2017-2019 թթ. ընթացքում կատարել 100 մլն ԱՄՆ-ի դոլարի ներդրում՝ Հայաստանում ոլորտում առկա լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառմամբ արևային ֆոտովոլտային կայանների կառուցման, շահագործման և տեխնիկական սպասարկման նպատակով:

14. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագրի դրամա-շնորհի համաձայնագրի շրջանակներում «Կարկառ» կոչվող հարթակում ավարտվել են 2 նեղ հորատանցքերի հորատման աշխատանքները: Ներկայումս նշված կայանի կառուցման ծրագրի համար ընթանում են բանակցություններ՝ հնարավոր ներդրողների ներգրավման նպատակով: Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից հորատման արդյունքների մասին հաշվետվությունները տրամադրվել են Երկրաջերմային էներգիայի ոլորտում մոտավորապես 50 խոշոր միջազգային կազմակերպություններին:

15. ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 2017-2018 թթ. Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլը, որով սահմանվել են նոր միջոցառումներ, որոնք կօժանդակեն ՀՀ էներգա-խնայողության քաղաքականության հետագա ձևավորմանը և դրա իրականացման կոնկրետ քայլերի որոշակիացմանը:

16. Մշակվել և ՀՀ ԱՎԾ կողմից պաշտոնապես հրապարակվել է 2015 թ. ՀՀ էներգետիկ հաշվեկշիռը, մեկնարկել են նաև 2016 թ. էներգետիկ հաշվեկշռի մշակման աշխատանքները:

17. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

18. 2017 թ. մարտի 20-ին Երևանի ԶԷԿ-ի հարակից տարածքում տեղի է ունեցել նոր ԶԷԿ-ի կառուցման հիմնարկերի արարողությունը:

19. ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում լիազորված կազմակերպությունների միջև սահմանված կարգով կնքվել են 31 ծառայությունների մատուցման մասին պայմանագրեր և ներկայացվել են ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունների հաստատմանը: Մայիսի 10-ին մեկնարկել է Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի 2017 թ. ՊՆՎ-ն, որի ընթացքում, բացի պլանավորված վերանորոգման աշխատանքներից, իրականացվել են նաև Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և համակարգերի գործիքային հետազոտություններ:

20. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարությունը:

21. Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում մաքուր էներգիայի զարգացմանն աջակցելու և արևի, կենսազանգվածի, ջերմային պոմպի, քամու և այլ վերականգնվող աղբյուրներից էներգիայի և կենսավառելիքի ստացման ծրագրերի իրականացման նպատակով 2017 թ. օգոստոսին մեկնարկել է «էներգաարդյունավետ» վարկային ծրագիրը:

22. 2016 թ. նոյեմբերին ՀՀ ԷԵՊԲՆ-ի նախաձեռնությամբ մեկնարկել է «Լուսավոր սահման» նախաձեռնությունը, որի շրջանակներում սահմանամերձ 17 բնակավայրերում նվիրատվության եղանակով տեղադրվել են 16480 լուսադիոդային լամպեր՝ 3296 տներում: Ծրագիրը շարունակական է և նախատեսում է ընդգրկել Հայաստանի և Արցախի բոլոր սահմանամերձ բնակավայրերը:

23. Ընդունվել են ՀՀ կառավարության որոշումները՝ սոցիալապես անապահով խավերի համար բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագները նվազեցնելու և ջերմոցային տնտեսությունների, վերամշակող կազմակերպությունների համար խթանող սակագներ սահմանելու միջոցառումների մասին:

24. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանվել են՝

- 2017 թ. հունվարի 1-ից բնական գազի խթանիչ սակագներ՝ ջերմոցային տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների համար, ինչպես նաև անապահով ընտանիքների համար՝ բնական գազի նվազեցված սակագին,

- 2017թ. փետրվարի 1-ից անապահով խավի և մյուս սպառողների համար էլեկտրաէներգիայի նվազեցված սակագներ:

25. էլեկտրական էներգիայի արտադրություն, սպառում, ներմուծում և արտահանում՝

- 2017 թ. հունվար-օգոստոս ամիսներին արտադրվել է 5123,1 մլն կՎտ/ժ էլեկտրական էներգիա՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 4804,8 մլն կՎտ/ժ էլեկտրական էներգիայի դիմաց, կամ աճը կազմել է 6,6%,

- 2017 թ. հունվար-օգոստոս ամիսներին էլեկտրական էներգիայի արտահանումը կազմել է 954,9 մլն կՎտ/ժ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի՝ 868,7 մլն կՎտ/ժ-ի դիմաց, աճը կազմել է 9,9%:

- 2017 թ. հունվար-օգոստոս ամիսներին սպառումը նույն ժամանակաշրջանի ներքին շուկայում կազմել է 4117,6 մլն կՎտ/ժ՝ նախորդ տարվա 3841,3 մլն կՎտ/ժ-ի դիմաց, կամ աճը կազմել է 7,2%:

26. Բնական գազի ներկրում և իրացում՝

- 2017 թ. հունվար-օգոստոս ամիսներին բնական գազի ներկրումը կազմել է 1512.7 մլն խոր. մ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 1242.9 մլն խոր. մ-ի դիմաց, աճը կազմել է 21.7%:

#### Բնական պաշարներ

1. Օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների բոլոր անձնագրերը, ինչպես նաև երկրաբանական տեղեկությունների 91 տոկոսը թվայնացվել և տեղադրվել են [www.geo-fund.am](http://www.geo-fund.am) կայքում: Երկրաբանական տեղեկությունների 100% թվայնացումը նախատեսվում է ավարտել 2017 թ. դեկտեմբերին:

2. Ընդերքի արդյունավետ և պատասխանատու օգտագործման, ինչպես նաև Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցության համար հայտ է ներկայացվել և հաստատվել 2017 թվականի մարտի 9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության խորհրդի կողմից, և Հայաստանի Հանրապետությանը շնորհվել է ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ:

3. Բնական պաշարների կառավարման միասնական համակարգի ձևավորման նպատակով մշակվել և ՀՀ Նախագահի 2017 թ. հուլիսի 15-ի ՆԿ-100-Ա կարգադրությամբ հաստատվել է Բնական պաշարների կառավարման հայեցակարգը:

4. Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը, որի նպատակն է ձևավորել համապարփակ քաղաքականություն:



5. Կատարվել են լրացումներ և փոփոխություններ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում, որոնցով սահմանվել են ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի՝ մրցութային կարգով տրամադրման և ընդերքօգտագործման թափոնների ու դրանց օբյեկտների կառավարման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման պահանջները:

6. 2017 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցման, կառավարման և սպասարկման ժամանակ վերջինիս ֆիզիկական կայունության պահպանման, հնարավոր ռիսկերի բացահայտման և կանխարգելիչ միջոցառումների իրականացման, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների մշակման օբյեկտների շահագործման, փակման, փակումից հետո նախատեսված միջոցառումների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների ապահովման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 7 որոշում:

7. 2017 թվականի սեպտեմբերին ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով մրցութային կարգով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 3 որոշում:

8. Օգտակար հանածոների արդյունահանում

2017 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում օգտակար հանածոներ արդյունահանող ընկերությունների կողմից իրականացվել է 143.6 մլն դոլարին համարժեք դրամի ներդրում:

2017 թ. հունվար-օգոստոս ամիսների ընթացքում արդյունահանված հանքաքարի ծավալը կազմել է 21.6 հազ. տ, որը գրեթե համընկնում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ, սակայն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտադրված ապրանքային արտադրանքն աճել է շուրջ 29.68%-ով, աճել է նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ռոյալթիի վճարները՝ շուրջ 85%-ով:

9. Օգտակար հանածոների պաշարների հայտնաբերում և գնահատում

2017 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված ընդերքօգտագործման թույլտվություններով նախատեսվում է առաջիկա 3 տարվա ընթացքում ներդնել շուրջ 2.5 մլրդ դրամ:

10. 2017 թ. հունվար-օգոստոս ամիսների ընթացքում հաստատվել են ոչ մետաղական օգտակար հանածոների նոր պաշարներ, որի արդյունքում օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշիռը համարվել է շուրջ 548 հազ. խոր. մ պաշարներով, իսկ 2016 թ. նոյեմբերին հաստատվել են մետաղական օգտակար հանածոների նոր պաշարներ, որի արդյունքում մետաղային օգտակար հանածոների պաշարների հաշվեկշիռն ավելացել է 2.2 մլն. տ հանքաքարով:

Ջրային տնտեսություն.

1. 01.01.2017թ.-ից 5 ջրամատակարար ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցվել է մեկ կառավարչի՝ 15 տարի ժամկետով:

Ջրային կոմիտեի, «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» ԿԲԸ և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ միջև ստորագրված վարձակալության պայմանագրի համաձայն 2017թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 856,500.0 հազար դրամի չափով վարձակալության վճար:

2. Համաձայն վարձակալության պայմանագրի՝ կոմիտեն համաձայնություն է տվել իրականացնելու 2017 թ. պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը: Պայմանագրի շրջանակներում, անկախ տեխնիկական աուդիտորի ընտրության նպատակով հայտարարված միջազգային մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Sachsen Wasser GmbH» ընկերությունը և ստորագրվել է պայմանագիր:

3. Ջրային ոլորտի ծրագրերի իրականացման լիազորությունները վերապահվել են «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին; «Համայնքային զարգացման ծրագրերի գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը դադարեցվել է:

4. «Հայաստանի գյուղական համայնքների ջրամատակարարման և կոյուղու համակարգերի բարելավման և զարգացման տեխնիկատնտեսական ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներդրումային ծրագրի մշակման համար նախնական ընտրվել է 65 չսպասարկվող բնակավայր, ինչպես նաև ներկայացվել է ՀՀ Կոտայքի և Վայոց ձորի մարզերի սպասարկման տարածք ներգրավելու ներդրումային ծրագիր:

5. Ավարտվել է Երևանի Աերացիայի կեղտաջրերի մաքրման կայանի մեխանիկական մաքրման մասի շինարարությունը, իսկ Սևանի և Մեծամորի կեղտաջրերի մաքրման կայանների նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակման փուլում են:

6. Ոռոգում-ջրառ իրականացնող «Ջրառ» ՓԲԸ-ների և ոռոգման ջուր մատակարարող 14 ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունքներով ապահովվել է 97.601 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը:

7. Մեկնարկել են 29 մլն խոր. մ ծավալով ՀՀ Արարատի մարզում Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիրը, պատվարների հիմքի և իրականացվել են դաշտային գեոտեխնիկական հետազոտություններն ու նախագծի մոբիլիզացիոն աշխատանքները:

8. Ավարտվել են ՀՀ Շիրակի մարզի Կապսի ջրամբարի շինարարական թունելի մուտքային, ելքային հարակից լանջերի մաքրման աշխատանքները:

9. Մշակվել է ՀՀ Արմավիրի մարզում 10.2 մլն խոր. մ ծավալով, 4384 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակի բարձրացման և շուրջ 2.1 մլն ԿՎտ/ժ

էլեկտրաէներգիայի տարեկան տնտեսման նպատակով Մաստարայի ջրամբարի կառուցման նախագիծը:

10. ԵԶԲ-ի աջակցությամբ իրականացվող (50 մլն ԱՄՆ-ի դոլար) ոռոգման համակարգերի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում մեկնարկել է Արարատյան դաշտում և նախալեռնային գոտում մեխանիկական ոռոգման 8 ինքնահոս համակարգերի մայր և միջտնտեսային ջրանցքների վերականգնման աշխատանքների նախագծման մրցութային գործընթացը: Միաժամանակ իրականացվում են նաև Գառնի մայր ջրանցքի և Գառնիի, Հացավանի համայնքների ներտնտեսային ցանցի շինարարական աշխատանքները:

11. ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի շրջանակներում կատարվում են Մեղրիի ինքնահոս համակարգի շինարարական աշխատանքները, ինչպես նաև Քաղցրաշենի, Գեղարդալճի և Բաղրամյան-Նորակերտ ինքնահոս համակարգերի կառուցման շինարարական աշխատանքները:

12. Հաստատվել է Ոռոգման ջրամատակարարման ոլորտում ջրի փաստացի օգտագործումը հաշվի առնող կառավարման հայեցակարգը:

13. Համաձայն «Ոռոգման նպատակով 2017 թ. Սևանա լճից ջրառի մասին» ընդունված որոշման՝ Սևանա լճից 2017 թ. ոռոգման շրջանում ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170 մլն խոր. մ: Ընդունվել է ՀՕ-116-Ն օրենքը, ըստ որի 2017 թ. Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակը լրացուցիչ ավելացվել է 100 մլն մ<sup>3</sup>-ով և սահմանվել է մինչև 270 մլն մ<sup>3</sup>:

2017 թ. օգոստոսի 31-ի դրությամբ, Սևանա լճից բաց է թողնվել 245.004 մլն մ<sup>3</sup> ջուր, իսկ Սևանա լիճ է տեղափոխվել 99.871 մլն մ<sup>3</sup> ջրաքանակ, և այն կշարունակվի մինչև տարեվերջ: Սևանա լճի մակարդակը 2017 թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել է 1900,65 մ: Սևանա լճից ջրի բացթողումն սկսվել է 2017 թ. մայիսի 7-ից:

14. «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություն» ծրագրին հատկացվել է 137200.0 հազ. դրամ. ընթացքի մեջ են Արփա-Սևան թիվ 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքները:

15. Վերականգնվել են ՀՀ Արմավիրի Բագարանի համայնքի տարածքում 40/1-41 սահմանային սյան հատվածում Արաքս գետի ափի ամրացման, ինչպես նաև Արթիկ քաղաքի Բմբուլենց և Մովրովի հեղեղատարների առաջնահերթ հատվածների (1-ին փուլ) մաքրման և ափերի ամրացման, ՀՀ Վայոց ձորի Շատինի համայնքում հողի սահքի հետևանքով վտանգված Հերմոն-Ելփին ջրագծի վերականգնման աշխատանքները: Ներկայումս իրականացվում են ՀՀ Սյունիքի մարզում Մ-2 Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական ավտոմայրուղու (Արաքս գետի ափ, 379+200 կմ) քանդված շուրջ 40 մ հատվածի ամրացման աշխատանքները:

16. Իրականացվել են 107.7 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և նորոգման աշխատանքներ:

### 3.5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Բույսերի պաշտպանության, հակահամաճարակային անասնաբուժական միջոցառումների շարունակական իրականացման արդյունքում հանրապետությունում ապահովվել է կայուն բուսասանիտարական և անասնահամաճարակային իրավիճակ:

2. Հստակեցվել է գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորման քաղաքականությունը, և մշակվել է սուբսիդավորման ուղղությունների հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագիրը:

Հայեցակարգով գյուղատնտեսության սուբսիդավորման գործընթացի համար սահմանվել են միասնական մոտեցումներ՝ նախանշվել են սուբսիդավորման գործիքի կիրառմամբ գյուղատնտեսության ինտենսիվացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, ոլորտի արդյունաբերականացմանն ուղղված միջոցառումները: Վերջինս հիմք է հանդիսացել գյուղատնտեսության ոլորտում մեկնարկած և առաջիկայում նախատեսվող հետևյալ ծրագրերի իրականացման համար՝

- գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության,
- գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր մոտեցումների կիրառման,
- գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ազրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման,
- հակակարկտային ցանցերի ներդրման,
- կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման,
- ինտենսիվ պտղատու այգիների հիմնման:

3. Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով՝ ֆինանսական վարձակալությամբ՝ լիզինգով 3-10 տարի մարման ժամկետով, 9% տոկոսադրույքով, տոկոսադրույքի 7 տոկոսային կետի սուբսիդավորմամբ տրամադրվել է գյուղատնտեսական տեխնիկա: 2017 թ. ապրիլի 1-ից մինչև հուլիսի 30-ը ընկած ժամանակահատվածում տնտեսավարողներին է տրամադրվել շուրջ 80 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 44 տրակտոր: Ծրագիրը շարունակվում է:

4. Հանրապետությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում խաղողի և պտղատու այգիների հակակարկտային ցանցերի համար կտրամադրվեն 7 տարի մարման ժամկետով, 2% տոկոսադրույքով մատչելի վարկեր: Ծրագրի իրականացման արդյունքում

նախադրյալներ կստեղծվեն տարեկան շուրջ 1350 հա խաղողի ու պտղատու այգիներում հակակարկտային ցանցերի ներդրման համար:

5. Հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում վարկավորման ժամկետը սահմանվել է մինչև 5 տարի, նախորդ ծրագրի 2 տարվա փոխարեն: Վարկավորման գումարը կկազմի 3-10 մլն դրամ՝ նախորդ ծրագրի 3 մլն դրամի փոխարեն: Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողներին և գյուղատնտեսական կոոպերատիվներին վարկերը կտրամադրվեն 3% տոկոսադրույքով, իսկ հանրապետության մնացած համայնքների տնտեսավարողներին՝ 5% տոկոսադրույքով:

6. Մշակվել է Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է 2018-2022 թթ. վարկերը տրամադրել 2% տոկոսադրույքով՝ 3 տարի մարման ժամկետով:

7. Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման պետական աջակցության ծրագրի շրջանակներում ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած, ինտենսիվ, մինչև 10 հեկտար այգետնկումներ կատարող տնտեսավարողներին տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորմամբ կցուցաբերվի պետական աջակցություն:

8. Մշակվել և հավանություն է տրվել Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման պիլոտային ծրագրին, որի շրջանակներում ագրովերամշակման ոլորտի տնտեսավարողներին կտրամադրվեն 150.0 մլն դրամ առավելագույն չափով, 1 տարի մարման ժամկետով և տարեկան մինչև 12 % տոկոսադրույքով վարկեր, որոնց մինչև 9 տոկոսային կետը կսուբսիդավորվի, այնպես, որ տնտեսավարողներին վարկերը տրամադրվեն 3 % տոկոսադրույքով:

2017 թ. սեպտեմբերի 29-ի դրությամբ նշված ծրագրից օգտվելու համար ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել 19 նախնական հայտ՝ 1864.0 մլն դրամի չափով:

9. Ավարտվել են գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնադրման հետ կապված անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները: Մրցույթի արդյունքներն ամփոփվել են, և ներկայումս գործընթացը գտնվում է ձեռք բերված գյուղտեխնիկայի ներմուծման փուլում: Ձեռք է բերվել 7 միավոր տրակտոր, 7 գութան և 4 շարքացան: Ծրագրի շրջանակներում նախատեսված ներդրման արդյունքում ակնկալվում է մշակել շուրջ 16 հազ. հա հողատարածք, որը կհանդիսանա լրացուցիչ եկամտի աղբյուր և կնպաստի գյուղացիական տնտեսությունների կենսապայմանների բարելավմանն ու գործունեության արդյունավետության բարձրացմանը:

10. Հաշվետու ժամանակահատվածում համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում՝

- արոտագտագործողների սպառողական կոոպերատիվներում կաթնատվությունն ավելացել է 13 %-ով,

- վաճառվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակն ավելացել է համապատասխանաբար 7.5 և 7.0 հազ. գլխով,

- արժեշղթայի զարգացման բաղադրիչում ընդգրկված տնտեսավարողների արտադրանքի աճը կազմել է 851.0 մլն դրամ,

- բարելավված արոտների տարածքը կազմել է 48 հազ. հա:

Առավել արդյունք կապահովվի ներդրումային ծրագրերի լիարժեք իրականացման երրորդ տարվանից հետո:

#### Սննդամթերքի անվտանգություն.

1. Ծառայությունում բացվել է սպասարկման նոր կենտրոն՝ ապրանքների ներմուծման ընթացակարգերը և դրանց վրա ծախսվող ժամանակը կրճատելու նպատակով: Կենտրոնն առավել համակարգված ու կենտրոնացված ծառայություններ է մատուցում սպառողներին ու տնտեսավարողներին՝ էականորեն նվազեցնելով վարչարարությունը, կրճատելով ծառայությունների մատուցման ժամանակահատվածը, բացառելով տեղեկատվություն ստանալու նպատակով մի քանի ստորաբաժանում դիմելու անհրաժեշտությունը, նվազագույնի հասցնելով տնտեսավարող-պաշտոնյա շփումը, ապահովելով տնտեսավարողներին սերտիֆիկատների, տեղեկանքների և այլ փաստաթղթերի էլեկտրոնային տրամադրումը:

2. Սահմանվել և հաստատվել է հանրապետությունից արտահանվող բեռ արտադրող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի արտահանողների արտադրական գործունեության տվյալների բազայի վարման հետ կապված հարաբերությունները, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերը, անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքներն արտահանելու նպատակով ներկայացվող հայտերի քննարկման ընթացակարգերը, ինչպես նաև դրանց իրականացման հետ կապված հարաբերությունները:

3. Էապես պարզեցվել է ՀՀ-ում արտադրված սեզոնային մրգերի արտահանման վարչարարությունը, ինչպես նաև մշակվել են այդ գործընթացը հնարավորինս արագ, արդյունավետ և տնտեսավարողի համար մատչելի դարձնելու մեխանիզմներ:

4. Ծառայության կայքում տեղադրվել է սննդամթերքի ներմուծման ռիսկերի էլեկտրոնային հաշվիչ, որը ներմուծող տնտեսավարողներին հնարավորություն է ընձեռում ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության մակարդակը:

5. Աշխատանքներ են տարվել սննդամթերքի փոխադրամիջոցներին ներկայացվող պահանջների ապահովման նպատակով տնտեսավարողներին իրազեկման ուղղությամբ,

մասնավորապես, մշակվել և հաստատվել է սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը: Ծառայությունը 2017 թ. օգոստոսի 1-ից՝ 42՝ միս և 119՝ հաց տեղափոխող փոխադրամիջոցներին տրամադրել է սանիտարական անձնագրեր:

6. Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել դաբադի նկատմամբ ՀՀ տարածքի անասնահամաճարակային գոտևորման իրականացման ուղղությամբ, որն ուղարկվել է ՌԴ ԳՆ՝ անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության ծառայություն ՀՀ-ից ջերմային վերամշակված կենդանական ծագման արտադրանքից բացի, նաև թարմ պաղեցված մսամթերքի արտահանման հնարավորության հարցը քննարկելու համար:

7. Սահմանված ժամանակացույցի համաձայն պետական գնումներով պարտադիր սպանդանոցային ծագման մսի ձեռքբերման և իրացման ապահովման նպատակով ծառայությունը ծանուցել է 17 պետական մարմինների և մսի իրացմամբ զբաղվող 613 տնտեսավարողների, և ժամանակացույցի համաձայն պետական գնումներով արդեն ձեռք է բերվում սպանդանոցային ծագման միս:

8. Աշխատանքներ են կատարվել միս իրացնող տնտեսավարող սուբյեկտներին՝ ըստ ռիսկայնության դասակարգելու և սպառողներին մատչելի և տեսանելի ձևով իրազեկելու ուղղությամբ: Մսի իրացման պահանջները բավարարող և բարեխիղճ տնտեսավարողներին ծառայության կողմից տրամադրվել են համապատասխան տեղեկատվական թերթիկներ:

9. Ծառայությունը բանկերի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել լիզինգով ջերմային պայմաններն ապահովող մեքենաներ ձեռք բերելու ուղղությամբ:

10. Սպանդանոցային կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում «Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի ու «Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն» ՀԿ-ի աջակցությամբ կազմակերպվել են դասընթացներ, որոնց մասնակցում է շուրջ 40 մասնակից (ֆիզիկական և իրավաբանական անձինք), որոնք ցանկություն են հայտնել Հայաստանի Հանրապետությունում կառուցել և շահագործել սպանդանոցներ: Ներկայումս Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության սննդի շղթայի օպերատորների բազայում գրանցված է 15 սպանդանոց՝ Հայաստանի Հանրապետության Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Շիրակի մարզերում և Երևան քաղաքում:

Նախատեսվող սպանդանոցների կառուցման արդյունքում կապահովվեն Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում սպանդանոցային մորթի կազմակերպումը և իրականացումը: Նշված ծրագրի շրջանակներում կտրամադրվեն մասնագիտական խորհրդատվություն, ֆինանսական և տարածքների հատկացման հարցում աջակցություն:

11. ՀՀ-ից ԵՄ ձկան և մեղրի արտահանման նպատակով կազմվել է 2017 թ. ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը, և ամփոփվել են 2016 թ. Ձկնաբուծա-

կան և մեղվաբուծական տնտեսություններում իրականացված մշտադիտարկման շրջանակներում պլանով նախատեսված ձկան՝ 150 և մեղրի՝ 130 նմուշների լաբորատոր փորձաքննության արդյունքները, որոնք 2017 թ. առաջին եռամսյակում ներկայացվել են Եվրոպական հանձնաժողովի առողջության և սննդամթերքի անվտանգության գլխավոր տնօրինություն:

### 3.6. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

#### Տրանսպորտ.

1. Միասնական երթուղային ցանցի ձևավորման նպատակով՝

- իրականացվել են բոլոր համայնքների երթուղային հասանելիության ուսումնասիրություններ, որի արդյունքում բացահայտվել են 220 չսպասարկվող համայնքներ, մշակվել է համապատասխան երթուղային հասանելիության ցանց, ապահովվել է շուրջ 40% չսպասարկվող համայնքների ներառում գործող երթուղային ցանցում:

- մշակվել և ընդունվել է միասնական երթուղային ցանցի տեխնիկական առաջադրանքը՝ 2017 թ. ընթացքում պիլոտային ծրագրի իրականացման և 2018-2019 թթ. ընթացքում ներդնելու նպատակով:

- մշակվել է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը նախատեսում է ներմարզային և միջմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների մրցույթների համակցում:

2. Գազաբալունային սնման համակարգով կահավորված տրանսպորտային միջոցների շահագործումը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործընթացը կանոնակարգելու նպատակով մշակվել են «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենսդրական փաթեթներ:

#### Ճանապարհաշինություն.

1. ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների քարտեզներն ընդգրկվել են Google map-ի բազայում:

2. ՀՀ ճանապարհային ցանցի թվայնացման նպատակով գույքագրվել և քարտեզագրվել են միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները:

3. Ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի ստեղծման նպատակով մեկնարկվել են 3441 կմ երկարությամբ ճանապարհների գույքագրման, քարտեզագրման և թվայնացման աշխատանքները: Ներկա պահին իրականացվել են 1231 կմ ճանապարհների գույքագրումը և քարտեզագրումը:

4. Ճանապարհների մաքրման և սպասարկման աշխատանքների առցանց հսկողության ապահովման նպատակով կապալառուների կողմից տեղադրվել են Թրեյքերներ, որոնք հնարավորություն են տալիս հսկել նշված տեխնիկայի աշխատանքային ռեժիմը:



5. Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների պահպանման ծրագրով ՀՀ 2017 թ. ութ ամսում ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվել են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների ընթացիկ ամառային (2950.3 կմ) և ընթացիկ ձմեռային (3477.1 կմ), ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների (3 հատ), կամուրջների (5 հատ) և պարսպող հարմարանքների (627669 գծ.մ) պահպանման աշխատանքներ, նշագծվել է 1895.9 կմ ավտոճանապարհ՝ 4.2 մլրդ դրամ ընդհանուր արժեքով:

6. Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի շրջանակներում՝

- ԱԶԲ աջակցությամբ իրականացվող Տրանշ 1-ով աշխատանքներն ավարտվել են, ճանապարհահատվածները գտնվել են հետավարտական թերությունների վերացման փուլում:

- ԱԶԲ աջակցությամբ իրականացվող Տրանշ 2-ով իրականացվել են շուրջ 500,000 մ<sup>3</sup> հողային աշխատանք, 6 կմ բետոնե պատվածք, շուրջ 3300 մ<sup>3</sup> կառուցվածքային բետոն: Ընդհանուր առմամբ իրականացվել են շուրջ 14,2 մլն ԱՄՆ-ի դոլարի աշխատանքներ:

- ԵՆԲ-ի աջակցությամբ իրականացվող Տրանշ 3-ով իրականացվել են ընդհանուր առմամբ 300,000 մ<sup>3</sup> հողային աշխատանք, շուրջ 3000 մ<sup>3</sup> կառուցվածքային բետոն: Ընդհանուր առմամբ իրականացվել են շուրջ 1,9 մլն եվրոյի աշխատանքներ:

- ԱԶԲ Տրանշ 3-ով Թալին-Լանջիկ ճանապարհահատվածում իրականացվել են շուրջ 250,000 մ<sup>3</sup> հողային աշխատանք, շուրջ 1500 մ<sup>3</sup> կառուցվածքային բետոն: Ընթանում են նաև 9 ուղեանցերի շինարարական և հաղորդակցողիների տեղափոխման աշխատանքները: Ընդհանուր առմամբ իրականացվել են շուրջ 1,9 մլն ԱՄՆ-ի դոլարի աշխատանքներ:

7. Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի շրջանակներում՝ ԵՆԲ-ի աջակցությամբ իրականացվել են շուրջ 241040 խոր. մ հողային աշխատանքներ, վերականգնվել է շուրջ 1912 գծ. մ ջրահեռացման համակարգ, կառուցվել է շուրջ 3578 գծ.մ հենապատեր, ասֆալտապատվել է 6.6 կմ ճանապարհ: Վերակառուցվել է շուրջ 280 գծ. մ երկարությամբ թունել, կառուցվել են շուրջ 57 մ թռիչքով նոր կամուրջ, կատարվել է գոյություն ունեցող կոմունիկացիաների տեղափոխություն: Ընդհանուր առմամբ իրականացվել են շուրջ 10,5 մլն եվրոյի աշխատանքներ:

8. Կենսական նշանակություն ունեցող ճանապարհացանցի բարելավման ծրագրի շրջանակներում ՀԲ աջակցությամբ իրականացվել են շուրջ 43628 խոր. մ հողային աշխատանքներ, վերականգնվել է շուրջ 14564 գծ. մ ջրահեռացման համակարգ, կառուցվել են 3264 գծ. մ հենապատեր, ասֆալտապատվել է 29.8 կմ ճանապարհ: Ընդհանուր առմամբ իրականացվել են շուրջ 6,8 մլն ԱՄՆ-ի դոլարի աշխատանքներ:

Կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ.

1. Հաշվետու ժամանակաշրջանում զգալի աճել է նաև տարբեր տեխնոլոգիաներով ինտերնետից օգտվողների (բաժանորդների) թիվը, որը 2014 թ. կազմել է 50.03%, 2015 թ.՝ 55.29%, 2016 թ.՝ 60.39%: Այդ թվում՝ շարժական ինտերնետից օգտվողների (բաժանորդների) թիվը հաշվետու տարվա ընթացքում աճել է 17%-ով:

2. ՀՀ կառավարության և «Թեքնոլոջի Էնդ Սայնս Դայնամիքս» ընկերության միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվայնացման, հեռահաղորդակցության և ինովացիոն ոլորտների խթանման նպատակով ընկերությունն արտերկրում բացել է 4 գրասենյակ, և նախատեսում է ևս 16 գրասենյակների ստեղծում՝ 3 մլն ԱՄՆ-ի դոլարի ընդհանուր ներդրումային ծավալով:

3. 2017 թ. հունիսի 1-ից նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ արտաքին առևտրի «մեկ պատուհանում» համատեղ գործարկվել է ՀՀ-ի կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականությամբ սարքերի ներմուծման լիցենզիաների՝ բացառապես էլեկտրոնային եղանակով տրամադրման համակարգ, որի շնորհիվ ավելի են կրճատվել պարզաբանումների և լիցենզիաների տրամադրման ժամկետները՝ օրենքով սահմանված 2 առանձին եռօրյա ժամկետով գործընթացները միավորվել են մեկ էլեկտրոնային հայտի մեջ, և նախկին 6-օրյա գործողությունն իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում. բացառվել է հայտատուների՝ լիազոր մարմին ներկայանալու անհրաժեշտությունը, ներկայացվող հայտերը կարող են լրացվել նաև ոչ աշխատանքային օրերին և ժամերին, գործընթացը դարձել է թափանցիկ:

4. Մշակվել է պետություն-մասնավոր համագործակցությամբ տվյալների մշակման ժամանակակից կենտրոնների ստեղծման հայեցակարգ:

5. Փոստային կապի համակարգի կատարելագործման և մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով մշակվել և ընդունվել է «Հայփոստ» ՓԲ ընկերության մասնավորեցման հայեցակարգը, որը նախատեսվում է մասնավորեցնել 2017-2020 թթ. ընթացքում:

### 3.7. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱ

1. Հայաստանի Հանրապետությունում մատչելի ավիափոխադրումների ապահովման և Գյումրու «Շիրակ» օդանավակայանի վերագործարկման ու զարգացման նպատակով Գյումրու «Շիրակ» օդանավակայանում աերոնավիգացիոն ծառայությունների մատուցման սակագներն իջեցվել են 50 %-ով, իսկ օդերևութաբանական ծառայությունների սպասարկման վճարները հանվել են: Արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 15-ից ռուսական «Պորբեդա» բյուջետային ավիաընկերությունն սկսեց շաբաթական 3 չվերթ հաճախականությամբ կանոնավոր չվերթներ իրականացնել Մոսկվա-Գյումրի-Մոսկվա երթուղով,

իսկ «Ձմեռ 2017-2018» աերոնավիգացիոն շրջանում ավիաընկերությունն ավելացրել է չվերթների հաճախականությունը՝ հասցնելով 4-ի: Հայկական ավիափոխադրող «Տարոն-Ավիա» ավիաընկերությունը 2017 թվականի ապրիլի 25-ից սկսած Գյումրու «Շիրակ» օդանավակայանից չվերթներ է իրականացնում Գյումրի-Կրասնոդար-Գյումրի, Գյումրի-Սամարա-Գյումրի, Գյումրի-Դոնի Ռոստով-Գյումրի, և 2017 թվականի հունիսի 30-ից նաև՝ Գյումրի-Մոսկվա-Գյումրի ուղղություններով:

2. Պարզեցվել և արդիականացվել է տեղական և օտարերկրյա ավիաընկերություններին օդային հաղորդակցությունների իրականացման համար թույլտվությունների տրամադրման գործընթացը, կրճատվել են նախկինում պահանջվող փաստաթղթերի ցանկը և թույլտվությունների տրամադրման ժամկետները, ինչպես նաև ներդրվել է մեկ պատուհանի սկզբունքը:

3. Ավիաընկերությունների թույլտվությունների տրամադրման առցանց համակարգի ներդրման նպատակով գլխավոր վարչությունը մշակել է հայտերը ներկայացնելու առցանց համակարգ և, ֆինանսավորում ստանալու նպատակով, բանակցություններ է վարել ԱՄՆ ՄՁԳ-ի ներկայացուցիչների հետ, կազմվել է համապատասխան տեխնիկական առաջադրանք և ամերիկյան գործընկերների հետ կնքվել է փոխըմբռնման հուշագիր: Այժմ ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից իրականացվում են ներքին համաձայնեցման աշխատանքներ, որոնց ավարտվելուն պես՝ կհայտարարվի մրցույթ:

4. Գյումրու «Շիրակ» օդանավակայանի բարեկարգման և սպասարկման ծառայությունների ընդլայնման նպատակով օդանավակայանի կառավարչի կողմից մշակվել է 2018-2021 թվականների միջև ընկած ժամանակաշրջանի համար «Ձվարթնոց» միջազգային օդանավակայանի Մաստեր-պլանը, որում արտահայտված է Գյումրու «Շիրակ» օդանավակայանում կատարման ենթակա ներդրումների հստակ նկարագիրը, մասնավորապես, համաձայն «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվության, ըստ 2017 թվականի առաջին կիսամյակում կնքված պայմանագրերի, Գյումրու «Շիրակ» օդանավակայանում նախատեսվում է իրականացնել շուրջ 665 000 000 (վեց հարյուր վաթսուհինգ միլիոն) դրամի ներդրումային աշխատանքներ, իսկ մինչև 2017 թվականի նոյեմբերի վերջը նախատեսվում է կառուցել սարքավորումների պահեստ, կաթսայատուն և ջեռուցման համակարգ, ինչպես նաև բոլոր տերմինալներում տեղադրել նոր ապակիներ:

5. ՀՀ-ում փոքր ավիացիայի ոլորտի զարգացման պոտենցիալը գնահատելու նպատակով 2017 թվականին գլխավոր վարչությունը ՀՀ մի շարք գերատեսչությունների հետ համատեղ ուսումնասիրել է տարբեր ուղղություններով տրանսպորտային հոսքերը, ինչպես նաև գլխավոր վարչության կողմից ուսումնասիրվել են Ստեփանավան, Զեբնուկ, Սիսիան, Գորիս, Կապան և Մեղրի (Ագարակ) քաղաքների օդանավակայանների վերագործարկման հնարավորությունները և գնահատումները:

6. 2017 թվականի ապրիլին մեկնարկել են ՀՀ-ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու համաձայնագրի շուրջ պաշտոնական բանակցությունները: Համաձայնագրի տեքստը բանակցությունների արդյունքում վերջնականացվել է, և ՀՀ-ում անցել է ներպետական համաձայնեցման փուլը: ԵՄ-ում համաձայնեցման փուլի ավարտից հետո այն պատրաստ կլինի ստորագրման:

7. Աշխատանքներ են տարվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ՝ մշակելով և հաստատելով տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների մասով համաձայնեցված քաղաքականության ճանապարհային քարտեզ, որի նպատակն է ԵՏՄ անդամ-պետությունների ավիաընկերությունների համար հավասար պայմանների ապահովումը, ԻԿԱՕ-ի կիրառվող չափանիշների ներդրումն ու կիրառումն անդամ-պետությունների կողմից և ոլորտային այլ կարևոր խնդիրներին համատեղ արձագանքումը: 2017 թվականի օգոստոսի 14-ին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի ժամանակ նշված ճանապարհային քարտեզն արժանացել է հավանության և հաստատվել է:

8. ՀՀ օդային տարածքում 290 թռիչքային մակարդակից (FL290) բարձր ժամը 00:00-ից մինչև 06:00-ն «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (Free Route Airspace) հայեցակարգի (այսուհետ՝ ARMFRA) ներդրմանն ուղղված աշխատանքների շրջանակներում ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից մշակվել և հաստատվել է ARMFRA հայեցակարգի աշխատանքային ծրագիրը:

Եվրակոնտրոլ կազմակերպության ցանցային կառավարչի հետ քննարկվել են հայեցակարգի ներդրման խնդիրները, և տրվել են համապատասխան լուծումներ:

Մշակվել է ՀՀ աերոնավիագացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ հրապարակելու համար հայեցակարգի ներդրման վերաբերյալ տեղեկատվության նախագիծը: Հայեցակարգն ամբողջովին կներդրվի 2017 թվականի դեկտեմբերի 7-ին, ինչի մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության աերոնավիագացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ կիրապարակվի 2017 թ. հոկտեմբերի 12-ին:

9. ՀՀ օդանավակայանների 2017 թվականի հունվար-օգոստոս ամիսների վիճակագրությունը՝ 2016 թվականի հունվար-օգոստոս ամիսների հետ համեմատած կազմել է՝

- 2017 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ օդանավակայաններում ուղևորահոսքը կազմել է 1.667.173 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցելով 25.5 տոկոս աճ,

- 2017 թվականի հունվար-օգոստոս ամիսներին «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում ուղևորահոսքը կազմել է 1.610.930 մարդ՝ 2016 թվականի նույն ամիսների հետ համեմատած գրանցելով 21.9 տոկոս աճ,

- «Շիրակ» օդանավակայանում 2017 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ուղևորահոսքը կազմել է 56.243 մարդ՝ 696.1 տոկոսով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը (7065 մարդ),

- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում 2017 թվականի առաջին ութ ամիսներին բեռնափոխադրումը կազմել է 14.985 տոննա ապրանք, որը 54 տոկոսով գերազանցում է 2016 թվականի նույն ամիսների ցուցանիշը,
- «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում 2017 թվականի հունվար-օգոստոս ամիսներին գրանցվել է 7157 թռիչք-վայրէջք՝ նախորդ տարվա նույն ամիսների ցուցանիշը գերազանցելով 22.1 տոկոսով,
- 2017 թվականի օգոստոս ամսին Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում ուղևորահոսքը կազմել է 281.345 մարդ՝ 10.2 տոկոսով գերազանցելով նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը,
- 2017 թվականի օգոստոս ամսին Գյումրու «Շիրակ» օդանավակայանում ուղևորահոսքը կազմել է 11.972 մարդ: Նախորդ տարվա նույն ամսին ուղևորահոսք չի եղել:

### 3.8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

1. Մեկնարկել է ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների 6 խմբի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացը:

2. Մշակվում են ՀՀ Տավուշի մարզի 55 համայնքի տարածքները ներառող միկրո-ռեգիոնալ մակարդակի 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր: Նախագծային աշխատանքների ավարտը նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա վերջը:

3. Հանրապետությունում տարբեր նշանակության շենքերի ու շինությունների սեյսմակայունության բարձրացման ծրագրային փաստաթղթերի մշակման ռազմավարական ուղենիշեր ապահովելու նպատակով ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

4. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում՝ ՀՀ 2017 թ. պետական բյուջեով նախատեսված 560.0 մլն դրամի հաշվին լուծվել է ծրագրի շահառու ճանաչված 86 ընտանիքի (82-ը՝ Գյումրի, 1-ը՝ Սպիտակ, 3-ը՝ գյուղ. բնակավայրեր) բնակարանային խնդիրը: Դրանով ավարտվել է ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքում ձևավորված պետական պարտավորությունների կատարումը:

5. Մշակվել են բազմաբնակարան բնակարանային ֆոնդի պահպանմանն ու շահագործմանը վերաբերող խնդիրների կանոնակարգման, ինչպես նաև բազմաբնակարան շենքի կառավարման հետ կապված հարցերը կարգավորող օրենսդրական դաշտի վերանայման վերաբերյալ առաջարկություններ: Համապատասխան իրավական ակտերի վերջնական լրամշակման աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև տարեվերջ:

6. «Կառուցապատման ներդրումային ծրագրերի մշակում» գերակա խնդրի կատարման շրջանակներում կոմիտեի կողմից համակարգվել են հետևյալ ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքները՝

- Երևան քաղաքի 33-րդ թաղամասի (ներկայիս Ֆիրդուսի շուկայի տարածք) կառուցապատման ներդրումային ծրագիր: Թաղամասի կառուցապատման ծրագրով նախատեսվում է իրականացնել հասարակական նշանակության և բնակելի կառուցապատման օբյեկտների, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակցության նոր ուղիների կառուցումը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 3-4 տարում: Ներկայումս մշակվել է թաղամասի կենտրոնական հրապարակի նախագիծը, ընթանում են տարածքի իրացման աշխատանքներն ու առանձին հատվածների հողային աշխատանքները:

- Երևան քաղաքում հայկական ազգագրական «Նոյ» թաղամասի ներդրումային ծրագիր: Ծրագրով նախատեսվում է «Դավա Գառդեն Մոլ» առևտրազվարճային համալիրին հարող տարածքում ստեղծել Հայաստանի տարբեր տարածաշրջանների բնակավայրերի ավանդույթներին ու ճարտարապետական դիմագծին բնորոշ ազգագրական թաղամաս: Ներկայումս ընթանում են ինժեներական ենթակառուցվածքների նախագծերի մշակման աշխատանքները:

- Երևան քաղաքում «Հին Երևան» կառուցապատման ներդրումային ծրագիր:

Գլխավոր պողոտայի մոտավորապես 2.2 հա մակերեսով տարածքում (*Աբովյան-Փ. Բուզանդ-Ե. Կողբացի-Արամի փողոցներով սահմանափակվող հատված*) նախատեսվում է իրականացնել 19-20-րդ դարերի ճարտարապետական քաղաքաշինական միջավայրի վերականգնումը՝ պատմական կառույցների հիմնական ֆոնդում ներառված և ներկայումս ապամոնտաժված կամ տեղափոխման ենթակա կառույցներով:

Ծրագրի իրագործման գործընթացը կրում է շարունակական բնույթ և ավարտին կհասցվի 3-4 տարվա ընթացքում. այն նախատեսվում է իրականացնել փուլային եղանակով: Կոմիտեն համակարգում է նշված ծրագրի իրականացման, ինչպես նաև դրանում ներառված առանձին հատվածների նախագծային փաստաթղթերը համապատասխան լիազոր մարմինների հետ համաձայնեցման գործընթացը:

Ծրագրում ներառված տարածքի իրացված մասերում առաջիկայում կսկսվեն հողային աշխատանքներ:

8. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի համակարգմամբ 44 կառուցապատման ներդրումային ծրագրերն իրականացվում են պետական և մասնավոր վարկային միջոցների հաշվին (որոնցից 23-ը՝ պետական և 21-ը՝ մասնավոր):

Նշված 44 ծրագրերի 2017 թ. ընդհանուր կատարողականի կանխատեսման ցուցանիշը կազմում է 111 502 646 ԱՄՆ-ի դոլար, որից՝

- պետական ֆինանսավորմամբ իրականացվող 23 ծրագրի կանխատեսման ցուցանիշը կազմում է 6 002 646 ԱՄՆ-ի դոլար (կամ 2017 թ. ընդհանուր կատարողականի նկատմամբ՝ 5%),

- մասնավոր վարկային միջոցների հաշվին իրականացվող 21 ծրագրի կանխատեսման ցուցանիշը կազմում է 105 500 000 ԱՄՆ-ի դոլար (կամ 2017 թ. ընդհանուր կատարողականի նկատմամբ՝ 95%):

Ընդ որում, ներդրումային ծրագրերով նախատեսված կառույցների գերակշռող թվի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման ակտիվ փուլում:

Առաջիկայում նախատեսվում են կառուցապատման ներդրումային նոր ծրագրեր՝ մոտավորապես 100 մլն ԱՄՆ-ի դոլարի չափով (իրագործման ցուցանիշը՝ 25%):

9. Կոմիտեի պատվիրատվությամբ Երևանի Աբովյան հրապարակին հարող զբոսայգու հարակից տարածքում իրականացվում է «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնի կառուցումը:

10. Երևանից-Զվարթնոց միջազգային օդանավակայան ավտոճանապարհի բարելավմանն առնչվող խնդրի շրջանակներում, հաշվի առնելով նշված ճանապարհահատվածի ծանրաբեռնվածությունն ու տրանսպորտային հոսքերի անհավասարաչափ բաշխվածությունը, առաջարկվել է իրականացնել 3680 մ ընդհանուր երկարությամբ շրջանցիկ ճանապարհի կառուցում, որի արդյունքում կբեռնաթափվի և կկրճատվի Երևանից դեպի օդանավակայան և Էջմաձին տանող ճանապարհը:

#### **4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ**

##### **4.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

1. «Կրթության բարելավում» վարկային ծրագրով 2016 թ. ՀՀ Արմավիրի, Տավուշի և Լոռու մարզերում գործարկվել են 24 նախակրթարան (որից 15-ը՝ գյուղական, այդ թվում՝ 2-ը՝ սահմանամերձ, 9-ը՝ քաղաքային համայնքներում), և 2017 թ. ՀՀ Արագածոտնի, Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում՝ 23 նախակրթարան (որից 18-ը՝ գյուղական, 5-ը՝ քաղաքային համայնքներում), ընդհանուր առմամբ՝ նախատեսված 1200 սովորողի համար:

2. Ստեղծվել և գործարկվում են հանրակրթական ուսումնական հաստատությունների անհատական կայքէջերը, որոնցում տեղադրվում են հաստատությունների եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները և բյուջեի նախագիծը: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պարբերաբար մշտադիտարկում է բոլոր դպրոցների կայքէջերը՝ գործընթացը տեսադաշտում պահելու և անհրաժեշտ տեղեկատվությունների հանրային հասանելիությունն ապահովելու համար: ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների անհատական կայքէջերում՝ <http://schoolsite.am/> միջավայրում, տեղադրված են 2017 թ. առաջին և երկրորդ եռամսյակների ֆինանսական հաշվետվությունները: Երևանի քաղաքապետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները տեղադրված են Երևանի քաղաքապետարանի [www.yerevan.am](http://www.yerevan.am) պաշտոնական կայքում: ՀՀ մարզպետարանների ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների անհատական կայքէջերում տեղադրված են 2017 թ. առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունները:

3. Հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի

կանոնադրությունը, համաձայն որի դպրոցի կառավարման մարմնի՝ խորհրդի անդամ չի կարող առաջադրվել դպրոցի տնօրենի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր) անձը և այլ լրացումներ և փոփոխություններ:

4. Մշակվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման գործող բանաձևը խնդիրներ է առաջացնում փոքր, թերկոմպլեկտավորված դպրոցների ծախսերի պլանավորման համար: Դասարանի փոքր միջին խտություն ունեցող դպրոցների համար պլանավորված միջոցները չեն համապատասխանում հանրակրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ կարիքներին: Ընդ որում, 10-ից փոքր դասարանի միջին խտություն ունեցող դպրոցները կազմում են ընդհանուր դպրոցների թվի շուրջ 30 տոկոսը: Միաժամանակ, մեծաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցներն ստանում են իրենց փաստացի ծախսերն զգալիորեն գերազանցող գումար, ինչն ստեղծում է անհավասար պայմաններ: Դպրոցների ֆինանսավորման բանաձևի վերանայումը պայմանավորված է նշված խնդիրների կարգավորման և հանրային միջոցների թափանցիկ, արդյունավետ ու արդարացի բաշխման անհրաժեշտությամբ:

5. Հանրապետության 13 դպրոցներում 2017 թ. սեպտեմբեր ամսվանից ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Ես և շրջակա աշխարհը» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցում՝ ֆինանսական կրթության տարրերի ներառմամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է դպրոցների ցանկը: Վերապատրաստվել է այդ դպրոցների 46 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 1600 սովորող: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել են նշված առարկաների փորձնական ծրագրերը:

6. Հանրապետության 1257 դպրոցների մեկական 2-րդ և 3-րդ դասարաններում 2017 թ. սեպտեմբեր ամսվանից ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցում՝ ձեռնարկատիրական տարրերի ներառմամբ: Վերապատրաստվել է այդ դպրոցների 1359 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 62900 սովորող: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է նշված առարկայի փորձնական ծրագիրը:

7. Հանրապետության շուրջ 220 դպրոցների մեկական 10-րդ դասարաններում 2017 թվականի սեպտեմբեր ամսվանից ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Ձեռնարկատիրություն» առարկայի ուսուցում: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է դպրոցների ցանկը: Վերապատրաստվել է այդ դպրոցների շուրջ 220 ուսուցիչ:



Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 6300 սովորող: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է նշված առարկայի փորձնական ծրագիրը:

8. ՀՀ ԿԳՆ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի և մենթոր դպրոցների կողմից իրականացվել է գործընկեր դպրոցների անհատական կարիքների վերհանում և անհատական կրթական ուղիների մշակում: 13 մենթոր դպրոցները հեռահաղորդակցային կապի միջոցով գյուղական և սահմանամերձ համայքների 42 գործընկեր դպրոցների շուրջ 1700 սովորողի մասնակցությամբ իրականացրել են հեռավար դասեր՝ բնագիտական առարկաներից՝ 7-12-րդ դասարաններում: Հեռավար դասերի անցկացման նպատակն է ակտիվացնել միջդպրոցական համագործակցությունը, լրացնել մանկավարժական կադրերի բացը սահմանամերձ կամ փոքր դպրոցներում, աջակցել ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացմանը և ապահովել հավասարապես որակյալ կրթություն ՀՀ բոլոր աշակերտների համար: Տեսադասերի կիրառումն արտադասարանական ժամերին խթանել է բնագիտական առարկաների հանդեպ աշակերտների հետաքրքրության բարձրացմանը:

9. «Արմաթ» ինժեներական խմբակ - լաբորատորիաներում 2016 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ընդգրկված է եղել 67 հանրակրթական ուսումնական հաստատություն և շուրջ 1400 սովորող: 2017 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ համանուն ծրագրում ընդգրկված է 208 հանրակրթական ուսումնական հաստատություն և շուրջ 4700 սովորող:

10. «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագիրն ստացել է միջազգային ճանաչում: Մեծ Բրիտանիայի (ՄԲ) ճանաչման ազգային գործակալության (UK NARIC) զեկույցը հաստատել է ԱԲ-ն որպես միջազգային լավագույն դպրոցական ծրագրերին (UK A-levels, US AP) համազոր ծրագիր, ԱԲ-ն ներառվել է Մեծ Բրիտանիայի բուհական ընդունելության միասնական համակարգում՝ UCAS-ում, որպես միջազգային որակավորումներին (European Baccalaureate, International Baccalaureate) համազոր հանրակրթական ծրագիր ՀՀ-ից, ԱԲ-ն ճանաչվել է միջազգայնորեն առաջատար մի շարք բուհերի կողմից: Մեկնարկել է ԱԲ ծրագրում դպրոցների ներգրավման գործընթացը. ՀՀ մարզերի և Արցախի 21 դպրոց ներառվել է ԱԲ-ի դպրոցների թեկնածության փուլում: Մեկնարկել է ԱԲ ծրագրում ուսուցիչների ներգրավման գործընթացը. ընտրական փուլերը հաղթահարել և մասնագիտական զարգացման ծրագրում ներառվել է ՀՀ մարզերի և Արցախի շուրջ 110 ուսուցիչ:

11. Ընդլայնվել է Կայուն դպրոցական սննդի» ազգային ծրագիրը՝ 2017 թ. ծրագրում ընդգրկվել է նաև ՀՀ Տավուշի մարզը: ՄԱԿ-ի ՊՀԾ-ի հետ համատեղ աշխատանքներ են ընթացել ՀՀ Տավուշի մարզը Ազգային ծրագրին նախապատրաստելու ուղղությամբ: Իրականացվել է ընդհանուր թվով 75 դպրոցների տնօրենների վերապատրաստում (գումարը՝ 5033 ԱՄՆ-ի դոլար): Խոհանոցների վերանորոգում իրականացվել է 25 դպրոցներում (գումարը՝ 40.820 ԱՄՆ-ի դոլար), որոնցում սովորում է 2755 աշակերտ: Խոհանոցային սարքավորումներ տրամադրվել են 61 դպրոցի (գումարը՝ 238.755 ԱՄՆ-

ի դուլար), որոնցում սովորում է 6610 աշակերտ: Թվով 14 դպրոցի խոհանոցային սարքավորումներ կտրամադրվեն մինչև տարվա վերջ (շուրջ 27.000 ԱՄՆ-ի դուլար), երբ այդ դպրոցներում այլ կառույցների կողմից (աջակցությամբ) կիրականացվեն հիմնանորոգումներ:

12. Ներդրվել է համընդհանուր ներառական կրթության համակարգը ՀՀ Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերում, ձևավորվել են 6 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ՝ Գորիս, Կապան, Սիսիան, Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան քաղաքներում, ինչպես նաև «Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը»: ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում, նախկին հատուկ հանրակրթական դպրոցներում սովորող՝ շուրջ 260 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ ընդգրկված են հանրակրթական դպրոցում: ՀՀ-ում ներառական կրթության մեջ ընդգրկված է շուրջ 5800 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա:

13. ՀՀ սահմանամերձ և սոցիալական աջակցություն ստացող 39 համայնքի 49 դպրոցի 1-12-րդ դասարանի սովորողներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվում են անվճար դասագրքեր:

14. «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքներ են ընթանում Մեծամորի թիվ 2, Արարատի, Մարտունու թիվ 2, Հրազդանի թիվ 1 և Նոյեմբերյանի ավագ դպրոցներում: Մասնավորապես՝

- Մեծամորի թիվ 2 ավագ դպրոցում (գումարը՝ 540 573,000 հազ. դրամ) ավարտվել են ուժեղացման, տանիքի, էլեկտրամատակարարման, ներքին և արտաքին ջուր-կոյուղու մոնտաժային աշխատանքները: Ներկայումս կատարվում են տարածքի բարեկարգման և ներքին հարդարման աշխատանքները: Հիմնանորոգման աշխատանքները, համաձայն պայմանագրի, նախատեսվում է ավարտել 2018 թ. հոկտեմբերին,

- Արարատի ավագ դպրոցում (գումարը՝ 476 831.000 հազ. դրամ) ավարտվել են ուժեղացման, տանիքի, էլեկտրամատակարարման, ներքին և արտաքին ջուր-կոյուղու մոնտաժային աշխատանքները: Ներկայումս կատարվում են տարածքի բարեկարգման և ներքին հարդարման աշխատանքները: Հիմնանորոգման աշխատանքները համաձայն պայմանագրի, նախատեսվում է ավարտել 2018 թ. ապրիլին,

- Մարտունու թիվ 2 ավագ դպրոցում (գումարը՝ 179 695,000 հազ. դրամ) ավարտվել են ուժեղացման, էլեկտրամատակարարման, ներքին ջուր-կոյուղու մոնտաժային աշխատանքները: Ներկայումս կատարվում են տարածքի բարեկարգման, ջեռուցման համակարգի, տանիքի կառուցման և ներքին հարդարման աշխատանքները: Հիմնանորոգման աշխատանքները համաձայն պայմանագրի նախատեսվում է ավարտել 2018թ.-ի սեպտեմբերին,

- Հրազդանի թիվ 1 ավագ դպրոցում (գումարը՝ 230 984,000 հազ. դրամ)- ավարտվել են ուժեղացման, էլեկտրամատակարարման, ներքին ջուր-կոյուղու մոնտաժային աշխա-

տանքները: Ներկայումս կատարվում են տարածքի բարեկարգման, տանիքի կառուցման և ներքին հարդարման աշխատանքները: Հիմնանորոգման աշխատանքները համաձայն պայմանագրի նախատեսվում է ավարտել 2018 թ. մայիսին:

- Նոյեմբերյանի ավագ դպրոցում (գումարը՝ 103 071,000 հազ. դրամ)- ավարտվել են ուժեղացման, էլեկտրամատակարարման, ներքին ջուր-կոյուղու մոնտաժային աշխատանքները: Ներկայումս կատարվում են տարածքի բարեկարգման, արտաքին ջուր-կոյուղու մոնտաժային և ներքին հարդարման աշխատանքները: Հիմնանորոգման աշխատանքները համաձայն պայմանագրի նախատեսվում է ավարտել 2018 թ. մայիսին:

15. ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ ներքին հարդարման աշխատանքներ են իրականացվել Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարանում (գումարը՝ 28 610,120 հազար դրամ), Ապարանի մարզառազմական վարժարանում (գումարը՝ 35 836,020 հազ. դրամ), որոնց ֆինանսավորումը իրականացվել է ՀՀ 2015 թ. - ի պետական բյուջեի միջոցների հաշվին: Հարդարման աշխատանքներ են իրականացվել նաև Սպիտակի պետական քոլեջում (գումարը՝ 10 028,885 հազ. դրամ), Ստեփանավանի ավագ դպրոցում (գումարը՝ 54 149,136 հազ. դրամ), Երևանի թիվ 115 ավագ դպրոցում (գումարը՝ 28 162,080 հազ. դրամ), Հայաստանում չինարենի խորացված ուսուցմամբ դպրոցում (գումարը՝ 17 643,355 հազ. դրամ):

16. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է 25 նախնական մասնագիտական և 79 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն:

Ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, շենքային պայմանները բարելավելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացվել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների օպտիմալացման (խոշորացման) մասին որոշման նախագծերը: Որոշման նախագծերում առաջարկվել է ՀՀ-ում գործող ՆՄԿՈՒ ուսումնական հաստատություններից 14-ը (Երևանում՝ 2, Աբովյանում՝ 3, Սևանում՝ 2, Բերդում՝ 2, Կոտայքում՝ 3, Արմավիրում՝ 2) միացման, միաձուլման, վերակազմակերպման ձևերով միավորել, ինչի արդյունքում վերոնշյալ 14 ուսումնական հաստատությունից կգործի 6-ը:

17. Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ ներքոնշյալ ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով ներդրվել է դուալ կրթական համակարգ.

- Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության գծով (15 ուսանող),

- Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ՝ «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտության գծով (14 ուսանող),

- Երևանի պետական հումանիտար քոլեջ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության գծով (20 ուսանող),

- Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ՝ «Զբոսաշրջություն» (19 ուսանող), «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտությունների գծով (16 ուսանող):

Գործընթացը, ինչպես նաև դրանից բխող միջոցառումներն իրականացվում են բացառապես Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ֆինանսավորմամբ՝ Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի «Վարպետաց դասընթացներ ՄԿՈՒ ոլորտում» ենթածրագրի շրջանակներում:

18. Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամի աջակցությամբ 9 ՄԿՈՒ հաստատությունում՝ Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջներում, Արարատի պետական քոլեջում, Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջում, Վարդենիսի Բաղեյանի պետական քոլեջում և Հրազդանի արհեստագործական ուսումնարանում, Մարալիկի արհեստագործական պետական ուսումնարանում, Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջում տեղադրվել են «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ, որոնք օգտագործվում են՝

- ֆորմալ ուսուցման (համապատասխան մասնագիտության առկայության դեպքում),
- արտաուսումնական խմբակների պարապմունքների,
- կարճաժամկետ ուսուցման ծրագրերի ընթացքում:

Յուրաքանչյուր հաստատությունում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում վերոնշյալ ուսուցման ձևերով ուսուցանվող անձանց միջին թիվը տարեկան կազմում է 200 մարդ:

19. Մշակվել է Հայաստանի Հանրապետությունում ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման հայեցակարգը:

20. Մշակվել է բուհերում կառավարման արդյունավետության ցուցանիշների ներդրման հայեցակարգը:

21. Մշակվել է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը:

22. Միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի համար հայտարարված մրցույթների արդյունքում, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններում 2017-2018 ուսումնական տարում ուսանելու համար գործուղվել է ՀՀ 206 քաղաքացի (ՉԺՀ՝ 17, Բուլղարիա 4, Ռումինիա՝ 6, Լեհաստան՝ 5, Հորդանան՝ 8, Վրաստան՝ 9, ՌԴ՝ 157):

23. Մշակվել է բարձրագույն կրթության ֆինանսական համակարգի բարեփոխման նպատակով անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման օրենսդրական նախադրյալների վերաբերյալ նախագիծ:

24. Մշակվել է ուսանողների ֆինանսական աջակցության և կրթաթոշակների տրամադրման նոր սկզբունքների վերաբերյալ տեղեկանք:

25. Քննարկվել և կարծիքներ են ներկայացվել ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմին ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմնի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ:

#### 4.2. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ սոցիալ-ժողովրդագրական վիճակի բարելավմանը, արտագաղթի կանխարգելմանը, երիտասարդ մայրերի աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանն ուղղված նոր պետական ծրագրերի ներդրման նպատակով մշակվել է «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվել է երիտասարդ մայրերի համար բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալուն նախապատրաստելու աջակցության իրավունքը, ինչպես նաև երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության իրավունքը: ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը՝ երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպման ծրագրի ներդրման նպատակով:

2. Բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագնային քաղաքականության մեջ սոցիալական աստիճանականությունն ապահովելու նպատակով ներդրվել են նոր մոտեցումներ, մասնավորապես, ընտանիքի սոցիալական վիճակի բարելավման նպատակով խնդիր է դրվել բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագնային քաղաքականության մեջ սոցիալական աստիճանականությունն ապահովող մոտեցումների ներդրումը, որի իրականացման նպատակով 2016 թ. նոյեմբերի 3-ին ՀՀ կառավարությունն ընդունել է N 1122-Ն որոշումը (բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման համար մեղմացված սակագնով պետք է վճարեն սոցիալապես անապահով այն ընտանիքները, որոնք հաշվառված են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ունեն 20.00 միավորից բարձր անապահովության միավոր): Համապատասխան որոշմամբ հաստատվել է, որ սոցիալապես անապահով ընտանիքները գազի սպառման դիմաց պետք է վճարեն նվազ սակագնով՝ 100 դրամ (յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝ մինչև 600 խոր. մ ծախսի դիմաց):

2017 թ. առաջին ութ ամիսների ընթացքում բնական գազի և էլեկտրաէներգիայի ցածր սակագնից օգտվել է համապատասխանաբար 75000 և 123500 ընտանիք:

3. Սոցիալական պաշտպանության ոլորտում ընդլայնվել են էլեկտրոնային ծառայությունները, այդ թվում՝

- 2016 թ. դեկտեմբերից 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի դիմումը կարող է ներկայացվել առցանց (2017թ. ութ ամիսների ընթացքում երեխայի ծննդյան միանվագ նպաստ է նշանակվել 26605 անձի, որից՝ 12544-ն առցանց դիմումի հիման վրա),

- 2017 թ. հունվարից երեխայի ծննդյան միանվագ նպաստ, խնամքի նպաստ, չաշխատող անձին մայրության նպաստ, ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ և աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումը կարող է ներկայացվել սոցիալական ապահովության պետական ծառայության ցանկացած տարածքային բաժին՝ անկախ շահառուի հաշվառման վայրից,

- ներդրվել է ծրագրային գործիք, որի կիրառմամբ 2017 թ. մարտ ամսվանից, աշխատանքային ստաժը հավաստող փաստաթղթեր ստանալու համար անհրաժեշտ արխիվային հարցումները կատարում է, ինչպես նաև կենսաթոշակ նշանակելու (տեսակը փոխելու, վերահաշվարկելու) համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ԱՊՀ երկրների միջև կնքված միջպետական համաձայնագրի մասնակից պետությունից համապատասխան տեղեկատվությունը հարցման միջոցով ստանում է սոցիալական ապահովության պետական ծառայությունը: Դրական պատասխանի դեպքում, անկախ հարցման պատասխանն ստանալու օրվանից, կենսաթոշակի իրավունքն իրացվում է (կենսաթոշակի գումարները վճարվում են) դիմելու օրվանից,

- աշխատանքներ են տարվել 3-րդ և 4-րդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի, խնամքի նպաստի և թաղման նպաստի դիմումներն առցանց ներկայացնելն ապահովելու ուղղությամբ:

4. Արմատապես վերանայվել են անապահովության գնահատման մոտեցումներն ու մեթոդաբանությունը: Նոր կարգում հնարավորինս ներառվել են տնտեսապես ակտիվ անձանց աշխատանքի շուկայում ունեցած վարքագծի գնահատականները, դրանով խթանելով աշխատանքային գործունեություն ծավալելու իրենց ցանկությունը, ինչպես նաև ավելացել է երեխա ունեցող ընտանիքների անապահովության գնահատման հարցում երեխաների առկայության հանգամանքի կշիռը՝ դիտարկելով նման ընտանիքներին՝ աղքատության տեսանկյունից ավելի ռիսկային:

5. ՀՀ կառավարություն են ներկայացվել «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն», «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն», «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն», «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն», «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն», «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմա-

կերպությունները երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների վերակազմավորելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

«Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թ. սեպտեմբերի 22-ի նիստում:

2017 թ. հուլիսի 13-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թթ. ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը, միաժամանակ ընդլայնվել են նախարարության համակարգի երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում տրամադրվող ծառայությունների տեսակներն ու ծառայություն ստացողների շրջանակը:

Նախարարության համակարգի մասնագիտացված մանկատներում խնամվող երեխաների կարիքների դասակարգման նպատակով իրականացվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն», «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» և «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ներում խնամվող երեխաների կարիքների գնահատում՝ ըստ առողջական վիճակի և խնամքի ցուցանիշների, որի հիման վրա ընդունվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թ. հուլիսի 7-ի «Ըստ ֆունկցիոնալ անկախության՝ մասնագիտացված մանկատներում խնամվող երեխաների կարիքների դասակարգման մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 92-Ա/1 հրամանը:

«Երեխայի իրավունքների մասին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերը գտնվում են մշակման փուլում:

«Երևանի երեխաների խնամքի ու պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի վերակազմակերպման արդյունքում հաստատությունում խնամվող 66 երեխայից 51-ը վերադարձել է կենսաբանական ընտանիք, իսկ 15 երեխայի խնամքը կազմակերպվել է այլ հատուկ դպրոցներում:

Ներկայումս երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնում ծառայություններ են տրամադրվում 101 երեխայի՝ 66 ընտանիքից: Հատուկ կարիքներով երեխաների թիվը 36-ն է 31 ընտանիքից: Հաշմանդամ երեխաների թիվը 19՝ 18 ընտանիքից:

6. Ընթացքի մեջ է հաշմանդամության գնահատման համակարգի վերանայման գործընթացը, նախատեսվում է ներդնել անձի կարիքների և կարողությունների բազմակողմանի գնահատման նոր մոդել, որի հիմքում ընկած է Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ԱՀԿ ՖՄԴ) գաղա-

փարախոսությունն ու սկզբունքները: Նոր մոդելը հնարավորություն է տալիս առավել օբյեկտիվ և բազմակողմանի գնահատել անձի կարողությունները և սահմանել հաշմանդամությունը հաշվի առնելով, ոչ միայն նրա առողջական խնդիրը, ախտորոշումը, կարողությունը, այլև այն միջավայրային գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են նրա գործունեության վրա: Այս ուղղությամբ մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացվել ՀՀ կառավարության մի շարք որոշումների նախագծեր, որոնց ընդունումից հետո 2018 թ. հունվարի 1-ից նախատեսվում է հաշմանդամության սահմանման համար առաջնակի դիմողների բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնել ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների հիման վրա: Բացի այդ ներդրվել են բժշկասոցիալական փորձաքննության իրականացման նոր մեխանիզմներ:

Հաստատվել է բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող չափորոշիչների կիրարկման՝ հաշմանդամության հանգեցնող հիվանդությունների և ախտաբանական վիճակների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը, որով լրամշակվել և հստակեցվել է հաշմանդամության սահմանման չափորոշիչների կիրառման մեթոդական ուղեցույցը՝ սահմանագծելով «հիվանդություն ունեցող անձ» և «հաշմանդամություն ունեցող անձ» հասկացությունները:

7. Սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրվում է իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգ, որի շրջանակում մշակվել (լրամշակվել) է սոցիալական պաշտպանության ոլորտի ավելի քան 80 ծրագրերի մշտադիտարկման և գնահատման իրականացման գործիքակազմը՝ տեղեկանքները, անձնագրերը և ցուցանիշները: Ընթացքի մեջ են ծրագրերի վերլուծման և գնահատման աշխատանքները: Արդեն գնահատվել է սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող 17 ծրագիր, որոնցից 2-ը գնահատվել են անարդյունավետ, իսկ 1-ը՝ ցածր արդյունավետությամբ:

8. Կամավորական աշխատանքի բազմաոլորտ ներդրման նպատակով ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած հայեցակարգի հիման վրա մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունմամբ՝

- ամրագրվում են կամավոր աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու լիարժեք իրավական կարգավորումները,

- սահմանվում են կամավոր աշխատանք կատարող անձանց և կամավոր ներգրավելու իրավասություններ ունեցող կազմակերպությունների հստակ շրջանակը, կամավոր աշխատանքի հիմնական ձևերը (կամավոր ներգրավելու իրավասություն ունեցող կազմակերպությունների միջոցով կատարվող կամավոր աշխատանքները կամ անհատի (խմբի) կողմից ինքնուրույն կատարվող կամավոր աշխատանքները) ու տեսակները (կարճաժամկետ, միջին ժամկետով և երկարաժամկետ), ինչպես նաև կամավոր աշխատանքների կատարման և գործունեության իրականացման բնագավառները,



- հատուկ մասնագիտական գործունեություն կամ աշխատանք պահանջող բնագավառներում կամավորական գործունեության և կամավոր աշխատանքների կատարման տարիքային սահմանափակումներն ու առանձնահատկությունները, փոխհարաբերությունների պայմանագրային կարգավորումները,

- կամավոր աշխատանքի ընթացքում կատարված ծախսերի փոխհատուցման մեխանիզմներն ու կամավոր աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերից ապահովագրության, ինչպես նաև իրավական, սոցիալական և այլ երաշխիքները,

- գործատուների (հատկապես գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվողների) համար աշխատանքային հարաբերությունների ձևավորման, փոփոխման և դադարման նոր ճկուն հիմքերի ապահովման, աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի առանձին դրույթներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների համապատասխանեցման, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների ամբողջական կարգավորման նպատակով մշակվել և շրջանառության է դրվել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

- ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսված աշխատավարձերի համամասնորեն աճի ապահովման նպատակադրմամբ պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության միասնական համակարգի կատարելագործման նպատակի շրջանակներում «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների հստակեցման, օրենքում ամբողջական լուծում չգտած հարցերի կարգավորման նպատակով մշակվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը: Նախագծերը քննարկվել են ՀՀ կառավարության 2017 թ. սեպտեմբերի 22-ի նիստում և հավանության արժանացել,

- ՀՀ օրենսդրությամբ աշխատողների համար սահմանվել են մեկօրյա գործուղումների դեպքում օրապահիկի վճարման երաշխիք նախատեսող կարգավորումներ:

9. ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների հիմնահարցերի լուծման ռազմավարությունը և դրա իրականացման 2017-2021 թթ. միջոցառումների ծրագիրը, որով ամրագրվել են հետևյալ գերակայությունները՝

- խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման ներկա համակարգի կատարելագործում և խնամքի այլընտրանքային ծառայությունների տրամադրման

համակարգի ներդրում, վճարովի և համավճարի սկզբունքով խնամքի ծառայությունների տրամադրման համար իրավական կարգավորումների ապահովում,

- տարեցների առողջության և ակտիվ ապրելակերպի ապահովում՝ տարեց հասակում առողջության, անկախության և արժանապատվության պահպանում,

- պետության կողմից տարեցների խնամքի ծառայությունները ոչ պետական կազմակերպություններին մրցակցային սկզբունքով պատվիրակման համար անհրաժեշտ հիմքերի և մեխանիզմների ստեղծում,

- տարեց մարդկանց համայնքային կյանքին և որոշումների կայացմանը մասնակցության և սոցիալական ներառման ապահովում,

- տարեցներին խնամքի ծառայություններ տրամադրող մասնագետների պատրաստում և վերապատրաստում:

10. ՀՀ կառավարության 2017 թ. սեպտեմբերի 7-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1135-Ն որոշումը, որով, սկսած 2018 թ. հունվարի 1-ից, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգերի զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամներին կենսաթոշակ և պարգևավճար նշանակելու (վերահաշվարկելու) և վճարումն ապահովելու՝ վճարման ցուցակները վճարող կազմակերպություններին (բանկերին) տրամադրելու համար ձևավորելու գործառույթներն իրականացվելու են պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի («Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի) միջոցով: Ընդ որում, սկսած 2018 թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի կենսաթոշակառուի կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարվելու է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով:

11. Սոցիալական աշխատողների կարողությունների զարգացման գործընթացի որակի և արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվող վերապատրաստումները վերահիմաստավորվել են ներդրված նոր շարունակական կրթության համակարգի միջոցով, որի շրջանակներում, մասնավորապես, մշակվել ու կիրառվում է սոցիալական պաշտպանության ոլորտի պետական ծառայողների անհատական կրեդիտների հաշվարկման և հաշվառման կառուցակարգը՝ հիմնված 20 հաշվարկային գործոնի վրա և 2017 թ. հուլիս ամսին հաշվարկվել են առաջին փուլի կրեդիտները: Սոցիալական պաշտպանության ոլորտի աշխատողների շարունակական կրթության համակարգի շրջանակներում մեկնարկվել են նաև «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման

երկամյա դասընթացները, որոնց շրջանակներում սոցիալական աշխատողներն ստանում են սոցիալական աշխատանքի համապարփակ գիտելիքներ:

#### 4.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1. Առողջապահական ծառայությունների նպատակայնության, հետազոտելիության ապահովման, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման, որակի կառավարման գործուն մեխանիզմների ներդրման, առողջապահական կարիքների ճշգրիտ գնահատման համար անհրաժեշտ լիարժեք տեղեկատվության հավաքագրման նպատակով ներդրվել է միասնական էլեկտրոնային առողջապահության համակարգ, մասնավորապես՝

- Սկսվել է Համաշխարհային բանկի կողմից մշակված միասնական էլեկտրոնային առողջապահության (e-health) համակարգի ներդրման ծրագիրը՝ այս փուլում մշակելով ներդրման ճանապարհային քարտեզը, հստակեցնելով շահառուների շրջանակը, պատասխանատու անձանց և աշխատանքների հանձնման ժամկետները:

- Իրականացվել է պետական մասնակցությամբ շուրջ 380 ԲՀ-ների տեխնիկական հագեցվածության գույքագրում:

- e-health համակարգում մշակվել են պետական պատվերի շրջանակներում իրականացվող գրանցումների և հաշվետվությունների ձևերը:

- Փորձարկվել և իրական աշխատանքի են անցել սերվերային համակարգերն ու e-health համակարգի նոր տարբերակը:

- e-health համակարգը միացվել է ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրին՝ առցանց թարմացման ռեժիմով:

- e-health համակարգին ինտեգրվել է «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն, ինչն ապահովում է համակարգում ՀՀ-ում գրանցված դեղերի ցանկերի առցանց թարմացումը:

- e-health համակարգին ինտեգրվել է Երևանի շտապ օգնության ծրագրային համակարգը, ինչն ապահովում է համակարգում շտապ օգնության այցերի ավտոմատ գրանցումը E-health համակարգում:

- Պետական պատվեր իրականացնող 470 ԲՀ-ներից ստացվել և E-health համակարգում ներմուծվել է բժշկական և սպասարկող անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը ծրագրային իրավասությունների տրամադրման և բժշկական անձնակազմի ռեգիստրի ստեղծման նպատակով: Համակարգում արդեն իսկ մուտքագրված է ավելի քան 32,000 օգտատիրոջ տվյալ (որից 22,000 կազմում է բուժանձնակազմը):

- Պատրաստվել է e-health համակարգում պետական պատվերի շրջանակներում իրականացվող գործառույթները նկարագրող 28 ուսումնական տեսանյութ, որը տեղադրված է e-health համակարգի պաշտոնական կայքում ([armed.am](http://armed.am)), նախարարության պաշտոնական կայքում ([moh.am](http://moh.am)), [youtube.com](http://youtube.com)-ում բացված ehealth Armenia էջում:

- e-health համակարգի վերաբերյալ առաջին փուլով դասընթաց են անցել շուրջ 470 բժշկական հաստատությունների պետական պատվերի շրջանակներում հաշվառում իրականացնող աշխատողներ: Բացի դրանից, երկրորդ փուլով դասընթացներ են անցկացվել նաև ՀՀ բոլոր մարզերում:

- 354 ԲՀ-ից հավաքագրվել, բնակչության պետական ռեգիստրի միջոցով ստուգում են անցել և e-health համակարգ են ներմուծվել յուրաքանչյուր բժշկական հաստատությանը կցագրված բնակչության վերաբերյալ տվյալները (շուրջ 2,700,000), և դեռևս շարունակում է տվյալների շտկման գործընթացը:

- Ներկա պահին արդեն քաղաքացիները [armed.am](http://armed.am) կայքում քարտեզի վրա կարող են գտնել պետական պատվեր իրականացնող բոլոր բժշկական հաստատությունները, յուրաքանչյուր բժշկական հաստատությունում աշխատող բժիշկներին՝ ըստ մասնագիտացումների, ինչպես նաև նույնականացման քարտի միջոցով մուտք գործել իրենց անձնական էջը և ստանալ պետական պատվերի շրջանակներում 01/05/2017 թ.-ից հետո ֆինանսավորված բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

- Պետական պատվերի պայմանագրերում e-health համակարգի ներդրման հետ կապված համապատասխան պահանջներ են սահմանվել ԲԿ-ների համար:

- Թարգմանվել և համակարգ են ներմուծվել ICD10PCS, LOINC բժշկական միջամտությունների և չափումների միջազգային ստանդարտները:

- e-health համակարգում բժշկական հաստատությունների անձնակազմի համար ստեղծվել է հաճախ տրվող հարցեր պատուհանը:

- e-health համակարգում բժշկական հաստատությունների անձնակազմի համար ստեղծվել է համակարգում խնդիրների, թերությունների գրանցման հնարավորություն, որը թույլ է տալիս համակարգի օգտատերերին գրանցումներ կատարել առկա խնդիրների վերաբերյալ:

- 01/01/2017 թ. մեկնարկել է պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների վերաբերյալ e-health համակարգի միջոցով գրանցումների և հաշվետվությունների ներկայացման անցումային փուլը (կատարվել է շուրջ 400,000 այցելության գրանցում):

- 01/05/2017թ.-ից անցում է կատարվել իրական ռեժիմում e-health համակարգում պետական պատվերի շրջանակներում գրանցումների իրականացմանը և ֆինանսավորման համար հաշվետվությունների ներկայացմանը:

- e-health համակարգում ստեղծվել է պետական պատվերի շրջանակներում բժշկական հաստատությունների ամսական բյուջեների արտացոլման և կատարողական վերահսկման մեխանիզմ:

- e-health համակարգում մշակվել է սոցիալական փաթեթի շահառուների բժշկական ապահովագրության ներդրման շրջանակներում բժշկական հաստատությունների և ապա-

հովագրական ընկերությունների միջև հատուցումների կարգավորման գործընթացի ծրագրային ապահովումը:

- ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է բժշկական հաստատությունների և դեղատների e-health համակարգին միանալու և քաղաքացիների վերաբերյալ բժշկական տեղեկատվության մուտքագրման պարտադիր պահանջը սահմանող լիցենզավորման կարգի փոփոխությունը:

- ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվել է e-health համակարգն սպասարկող օպերատորը:

2. Շահառուների համար իրենց նախընտրած բժշկական հաստատությունում առողջապահական փաթեթի շրջանակներում բժշկական ծառայությունների՝ ամբողջ ծավալով, անխոչընդոտ (առանց հերթագրումների) ստացման, միաժամանակ ծախսվող ֆինանսական միջոցների նկատմամբ վերահսկողության ուժեղացման և դրանց արդյունավետության բարձրացման նպատակով որոշում է կայացվել շահառուներին բուժօգնության տրամադրումն իրականացնել առողջության ապահովագրության միջոցով: Միաժամանակ՝ շահառուներին ծառայությունների մատուցումը հստակ կանոնակարգելու և պատշաճ որակով իրականացնելու նպատակով սահմանվել են տրամադրվող ապահովագրության փաթեթը, ապահովագրական պայմանագրի ձևը, բժշկական հաստատությունների հետ ապահովագրական ընկերությունների համագործակցության կարգը, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների ընտրության և ընտրված ապահովագրական ընկերությունների միջև շահառուների բաշխման (կցագրման) և վերաբաշխման բազմագործոն համակարգը, որում ներառված են ինչպես ապահովագրական ընկերությունների ֆինանսական և գործառնական կարողությունների գնահատման ցուցանիշները, այնպես էլ փաստացի մատուցված ծառայությունների որակական ցուցանիշները, մասնավորապես՝

- Շահառուներին հնարավորություն է տրվել ծրագրով նախատեսված բժշկական ծառայությունների ստացման, այդ թվում նաև՝ կանխարգելիչ բժշկական քննություն անցնելու համար, առանց որևէ հավաստագրի անհրաժեշտության, միայն անձը հաստատող փաստաթղթի միջոցով դիմել ծրագրում ներառված ցանկացած բժշկական հաստատություն:

- Նոր ծրագրով ակնկալվում է, որ ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները կծախսվեն առավել նպատակային և հասցեական, զգալիորեն կբարձրանան պետական հիմնարկներում և կազմակերպություններում աշխատող շուրջ 100,0 հազար շահառուի՝ սոցիալական փաթեթի շրջանակներում հատկացվող բժշկական ծառայություններից օգտվելու մատչելիությունը և դիմելիությունը՝ նվազագույնի հասցնելով հերթագրումների և շահառուի կողմից նախընտրած բժշկական հաստատությունների ընտրության հետ կապված լարվածությունը:

- Նոր իրավակարգավորման պայմաններում ակնկալվում է նաև մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացում՝ շնորհիվ ներդրված կրկնակի վերահսկողության մեխանիզմի: Նոր մեխանիզմով, բացի ՀՀ առողջապահության նախարարու-

թյունից, բժշկական ծառայությունների մատուցման ընթացքին և հասցեականությանը հետևում է նաև ապահովագրական ընկերությունը՝ որպես ապահովագրական հատուցումը վճարող և բժշկական ծառայությունների մատուցումը կազմակերպող կողմ:

3. Առողջապահության ոլորտում ապացուցողական բնույթի կլինիկական ուղեցույցների և գործելակարգերի բացակայության հետևանքով առաջացող խոչնդոտները նվազեցնելու նպատակով մշակվել է ապացուցողական բժշկագիտական տեղեկատվության որոնման, գնահատման և տեսակավորման մեթոդաբանություն: Գույքագրվել և վերլուծվել է առկա փաստաթղթերի ցանկը, ուսումնասիրվել է տվյալ հարցին վերաբերող հասանելի նորմատիվային բազան: Ստեղծվել է 50 աշխատանքային խումբ՝ ՀՀ ԱՆ գլխավոր մասնագետների գլխավորությամբ, ովքեր ներգրավվել են գերակա թեմաների ընտրության, թարգմանությունների և տեղայնացման գործընթացներում, մասնավորապես՝

- Արդեն իսկ թարգմանվել և տեղայնացվել է 105 կլինիկական ուղեցույց, մշակվել են 53 պացիենտների վարման գործելակարգ և 23 ընթացակարգ: Մասնավորապես, առաջնահերթ մշակվել են այնպիսի թեմաներ ինչպիսիք են՝ մանկաբարձության և գինեկոլոգիայի անհետաձգելի իրավիճակներ, մանկական ուռուցքաբանություն, արյունաբանություն, վերակենդանացում, վիրաբուժություն և սրտաբանություն:

- Գործելակարգերում ներկայացված են տվյալ հիվանդությունների վարման հետևողականացված ծառայությունների և դեղորայքի ծախսերը, որոնք ենթակա են հետագա ընդլայնված վերլուծությունների համապատասխան մարմինների կողմից:

- Մշակվել և գործնականում փորձարկվել են աշխատանքի մեթոդաբանությունը և ճանապարհային քարտեզը՝ փուլերի հաջորդականությունը, ռեսուրսների բաշխումը, արդյունքների գնահատումը, ժամանակացույցի վերահսկումը:

4. Հաստատվել է «Ծխելու դեմ պայքարի ռազմավարություն և այդ ռազմավարության 2017-2020 թթ. միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության որոշումը, որի նպատակն է միջոցներ իրականացնել՝ ուղղված ՀՀ-ում ծխախոտի օգտագործման, սպառման նվազեցմանը, պահպանել բնակչության առողջությունը՝ պաշտպանելով ծխախոտի ծխի երկրորդային ազդեցությունից և նվազեցնել ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության ցուցանիշները՝ կրճատելով ծխախոտի օգտագործումը:

Բազմավարությամբ նախատեսված միջոցառումներն իրականացվելու են մեկ փուլով, 2017-2020 թթ. ընթացքում ակնկալվող հետևյալ արդյունքներով՝

- Ծխախոտի օգտագործման տարածվածության (տարեկան 1,5-2 %-ով) նվազեցում,
- 15 և բարձր տարիքի տղամարդկանց շրջանում ծխախոտի օգտագործման տարածվածության ընթացիկ ցուցանիշի հարաբերական կրճատում մինչև 10%-ով:
- Երկրորդային ծխի ազդեցության նվազեցում, որը կնպաստի արյան շրջանառության համակարգի հիվանդություններից, չարորակ նորագոյացություններից, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններից և շաքարային դիաբետից ընդհանուր և վաղաժամ մահացության կրճատում 5%-ով:

5. «Առողջ աչքեր»՝ ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 24-ի N 36 արձանագրային որոշման 3-րդ կետով հավանության է արժանացել Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերում ընդգրկված անձանց կատարակտի վիրահատությունների իրականացման 2017-2018 թթ. միջոցառումների ծրագիրը: Ծրագրով նախատեսված է շուրջ 3,000 վիրահատություն՝ 240 մլն դրամ բյուջեով: Փորձարարական փուլում արդեն իսկ իրականացվել է շուրջ 117 վիրահատություն: Արդյունքում, կանխարգելվել է կուրությունը, բարելավվել է վիրահատված անձանց կյանքի որակը:

6. «Հեպատիտ Յ»՝ 2017թ. մայիսից ՀՀ առողջապահության նախարարությունն իրականացնում է շուրջ 1,000 հիվանդի բուժում՝ 90 մլն ԱՄՆ դոլար բյուջեով: Շահառուներին արդեն իսկ տրամադրվել են դեղորայքի առաջին և երկրորդ խմբաքանակները:

Հանրապետության ամբողջ տարածքից հիվանդների բուժման նպատակով՝

- ՀՀ և Վրաստանի Հանրապետության կառավարությունների միջև կնքվել է համապատասխան պայմանագիր:

- Ապահովվել է շուրջ 80 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ գերժամանակակից դեղամիջոցի ներկրում և պահեստավորում:

- Մշակվել և հաստատվել են շահառուների ընտրության բժշկական ցուցումները և ծառայությունների մատուցման կարգը:

- Գործընթացը հնարավորինս թափանցիկ դարձնելու նպատակով ամբողջ տեղեկատվությունը լուսաբանվել է ՋԼՄ-ներով:

- Իրականացվել է բուժման գործընթացում ներգրավված մասնագետների վերապատրաստում՝ Սովալդի դեղամիջոց արտադրող Gilead ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ:

- Կազմակերպվել և վերահսկվել է դեղորայքի տրամադրման եռափուլ գործընթացը:

- Հայաստանի Հանրապետության 996 քաղաքացի ստացել են բուժում Սովալդի գերժամանակակից դեղորայքով՝ գործնականում ապաքինվելով այդ վտանգավոր հիվանդությունից:

7. Շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայության աշխարհագրական տեղակայման, հագեցվածության, սպասարկվող ազգաբնակչության թվի, ինչպես նաև ժամանակային հասանելիության ուսումնասիրության արդյունքում, նպատակահարմար է գտնվել ՀՀ մի շարք մարզերին տրամադրել բարձր անցանելիության, ժամանակակից սարքավորումներով և պարագաներով համարված շտապ բժշկական օգնության ավտոմեքենաներ:

Հանրապետության ամբողջ տարածքում մատուցվող ծառայությունների հասանելիության ապահովման նպատակով որոշվել է հետևյալ մարզերին տրամադրել շտապ օգնության ավտոմեքենաներ՝

- ՀՀ Տավուշի մարզի Բերդի բժշկական կենտրոն՝ 1 հատ,

- ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոն՝ 2 հատ,
- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի բժշկական կենտրոն՝ 2 հատ,
- ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի բուժական միավորում՝ 1 հատ,
- ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոն՝ 1 հատ,
- ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն՝ 1 հատ,
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոն՝ 1 հատ,
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի հիվանդանոց՝ 1 հատ:

Վերոնշյալ բժշկական հաստատությունների կողմից սպասարկվող տարածքի շուրջ 351 հազ. բնակչության համար շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները դարձել են առավել հասանելի և որակյալ:

8. Մշակվել, շրջանառվել և ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել «Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը կբերի ՀՀ բնակչության բժշկական օգնության որակի և առողջապահության համակարգի արձագանքման բարելավմանը, ինչպես նաև առողջապահության համակարգի բնակչության բավարարվածության մակարդակի էական ավելացմանը:

9. Միջազգային առաջադեմ փորձի ուսումնասիրության արդյունքում, Համաշխարհային բանկի աջակցությամբ որոշվել է մշակել և կյանքի կոչել շաքարային դիաբետի, զարկերակային գերճնշման և արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման և վաղ ախտորոշմանն ուղղված Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիրը, որն իրականացվում է անվճար, Հայաստանի ամբողջ տարածքում, ընտրված թիրախային բնակչության շրջանում 2015թ.-ի հունվարից:

Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի իրականացման նպատակով՝

- Մշակվել է և հաստատվել է ծրագրի իրականացման կարգը:
- Մշակվել և հաստատվել են վերոնշյալ երեք հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման կլինիկական ուղեցույցները:
- Հանրապետության ԱԱՊ օղակի մասնագետների շրջանում կազմակերպել են 5-օրյա դասընթացներ:
  - Ամբողջ հանրապետության ԱԱՊ օղակի բժշկական հաստատությունները համալրվել են նշյալ հիվանդությունների վաղ հայտնաբերման համար նախատեսված սարքավորումներով:
    - 01.01.2015թ.-31.07.2017թ. ընկած ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 1 մլն 131 հազար հետազոտություն:
    - 30-60 տարիքի կանանց շրջանում իրականացվել է 141,478 ՊԱՊ թեստի հետազոտություն, որի արդյունքում քաղցկեղի հայտնաբերվածությունը I-II փուլերում ավելացվել է 8%-ով:



- 398,751 քաղաքացիների մոտ իրականացվել է արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն, որի արդյունքում առաջնակի հայտնաբերված հիվանդների թիվը աճել է շուրջ 9%-ով:

- 592,290 քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ:

- Հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է 36,223 մեզի և արյան երրորդ հետազոտություն:

10. Որոշվել է ամբողջությամբ արդիականացնել Հայաստանի ամենախիտ բնակեցված մարզերից մեկը հանդիսացող Արարատի մարզի Արտաշատի բժշկական կենտրոնը՝ ստեղծելով նաև որոշ նոր ծառայություններ՝ նախատեսված ամբողջ մարզի բնակչության համար:

11. Բժշկական օգնության աշխարհագրական հասանելիության, ինչպես նաև զբոսաշրջիկներին պատշաճ հիվանդանոցային ծառայություններով ապահովելու համար որոշվել է Սևան քաղաքում՝ բնակչության համար հասանելի վայրում կառուցել և վերազինել հիվանդանոցի նոր մասնաշենք, միևնույն ժամանակ շուրջ 2 անգամ կրճատելով մահճակալային ֆոնդը:

12. Ստացիոնար բժշկական օգնության մատչելիության շարունակական ապահովման նպատակով՝

- Մշակվել է Արտաշատի բժշկական կենտրոնի հիմնանորոգման և Սևանի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը՝ հիվանդանոցաշինության արդի նորմերի կիրառմամբ:

- Համաաշխարհային բանկի ընթացակարգերով իրականացված մրցույթի արդյունքում ընտրվել են կապալառու կազմակերպություններ, մեկնարկ է տրվել շինարարական աշխատանքների իրականացմանը:

- 31.08.2017 թ.-ի դրությամբ Արտաշատի բժշկական կենտրոնի արդիականացման կատարողականը կազմում է 55%, աշխատանքների ավարտը նախատեսված է 2018թ.-ի սեպտեմբերին:

- 31.08.2017թ.-ի դրությամբ Սևանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի կառուցման կատարողականը կազմում է 33.4%, աշխատանքների ավարտը նախատեսված է 2018թ.-ի օգոստոսին:

13. ՀՀ ԱՆ ենթակայության ՊՈԱԿ-ների գնումների կենտրոնացման պիլոտային ծրագրի արդյունքում տնտեսվել է նախատեսված միջոցների շուրջ 25%-ը:

14. ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 3-ի N 940-Ա որոշմամբ «Օշական» մանկական վերականգնողական կենտրոն» և «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ-ները նախատեսվել է լուծարել, որի գործընթացը կավարտվի մինչև տարեվերջ: «Նորք» հոգեբուժական կենտրոն» և «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ները միաձուլման ձևով վերակազմակերպելու և «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն»

ՓԲԸ ստեղծելու, «Ա. Ալեքսանյանի անվան համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուծության գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի միաձուլման, ինչպես նաև «Ն.Բ.Հակոբյանի անվան հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի միաձուլման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ:

#### 4.4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեղծվել է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի միասնական տեսչական մարմին:

2. Մշակվել է «Սևան» ազգային պարկի բարեփոխումների և զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» նախագիծը, որի նպատակը «Սևան» ազգային պարկի արդյունավետ կառավարման համակարգի ձևավորումն է:

3. «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել է 11 ենթաօրենսդրական ակտ, որոնցով սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման հետ կապված իրավահարաբերությունները: Ստեղծվել են ընդերքօգտագործողների կողմից օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության, արդյունահանման և վերամշակման արդյունքում գոյացած թափոնների կառավարման համակարգի ներդրման իրավական հիմքերը:

4. «Դիլիջան» ազգային պարկում պահպանության ռեժիմի արդյունավետության բարձրացման և ապօրինի ծառահատումների կանխարգելման նպատակով մշակվել է փորձնական ծրագիր, որով նախատեսվում է ՊՈԱԿ-ի առավել դիսկային 3 տեղամասում՝ Հաղարծին, Դիլիջան և Շամախյան հատվածներում, պահպանությունն իրականացնել մասնագիտացված պահնորդական ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով: Փորձնական ծրագրով նախատեսվում է անցում կատարել պահպանության շուրջօրյա ռեժիմի: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից սահմանված կարգով կազմակերպված մրցույթում հաղթող է ճանաչվել «Պանտեռա սիքյուրիթի» ՍՊԸ-ն:

5. Արարատյան դաշտում լուծարվել է 1 խորքային հոր, 2 խորքային հոր կոնսերվացվել է և 127 խորքային հոր բերվել է փականային ռեժիմի, որոնց արդյունքում խնայվել է 6394.0 լ/վրկ ջրաքանակ, ինչը տարեկան կազմում է 201.6 մլն մ<sup>3</sup>:

6. ՀՀ բնապահպանության նախարարության և «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության համագործակցության շրջանակում նախատեսվում է ՀՀ Վայոց ձորի մարզում Արփա գետի վերին հատվածի ջրահավաք ավազանում ստեղծել նոր «Ջերմուկ» ազգային պարկ: Նախատեսվող նոր ազգային պարկը կզբաղեցնի 33.799.7 հա տարածք: Աշխա-

տանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 5.7 մլն ԱՄՆ-ի դոլար: «Զերմուկ» ազգային պարկի կազմավորման ավարտը նախատեսված է 2022 թ.:

7. 2017թ. հուլիսի 7-ին ստորագրվել է Կանաչ կլիմայի հիմնադրամի «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում և մասշտաբավորում» ծրագրային փաստաթուղթը, որը նախատեսում է 20 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհ:

8. ՀՀ բնապահպանության նախարարության և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցչության միջև ստորագրվել է Ռուսաստանի Դաշնության ֆինանսական աջակցությամբ «Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմումն անտառային և դաշտային հրդեհների կառավարման ներուժի զարգացման միջոցով» եռամյա ծրագրի փաստաթուղթը՝ 1.0 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ:

9. Փոքր դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից հատկացվել է 790.0 հազ. ԱՄՆ դոլար:

10. Կնքվել է Կովկասի բնության հիմնադրամի կողմից «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի աջակցության մեկամյա դրամաշնորհային պայմանագիր՝ 50,0 հազ. եվրո աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ:

11. Կնքվել է Կովկասի բնության հիմնադրամի կողմից «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի աջակցության դրամաշնորհային պայմանագիր՝ 2015-2017 թթ. համար՝ 343.0 հազ. եվրո գումարի չափով: Հակահրդեհային սարքավորումների ձեռքբերման նպատակով 2017թ. լրացուցիչ կնքվել է աջակցության արտակարգ դրամաշնորհային պայմանագիր՝ 5 մլն դրամ գումարի չափով:

12. ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հավատարմագրվել է որպես ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Հարմարվողականության հիմնադրամի ազգային իրականացնող մարմին, որի շրջանակներում ծրագրի հաստատումից հետո 2018-2020թթ. կտրամադրվեն 4.0 մլն դոլարի դրամաշնորհներ:

#### 4.5. ՄՇԱԿՈՒՅԹ

1. Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է սահմանել, որ օտարերկրյա ֆիլմարտադրողները ՀՀ-ում, առնվազն 100 մլն դրամ ներդնելու պարագայում, իրավունք են ստանում շուկայական շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերել կինոնկարի արտադրության համար անհրաժեշտ ապրանքներ և ծառայություններ: Առաջարկվում է նաև կանոնակարգել ֆիլմարտադրության համար առավել կարևոր ապրանքների և ծառայությունների մատուցման-ձեռքբերման նվազագույն շահավետ գները, օտարալեզու ֆիլմերի ցուցադրման

քանակը, ֆիլմերի դասակարգման պարտադիր լինելու դրույթները, ինչպես նաև ներդնել «ֆիլմ հանձնակատարի» ինստիտուտը:

2. Մշակվել է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը, որով նախատեսվում է սահմանել պատմամշակութային ժառանգությանը վերաբերող հասկացությունները, հստակեցնել ու վերապահել նոր լիազորություններ ՀՀ կառավարությանը, լիազոր մարմին և տեղական ինքնակառավարման մարմիններին: Նախագծով կհստակեցվի և կկանոնակարգվի հնագիտական հետազոտությունների ու պեղումների ամբողջ ընթացքը, կսահմանվեն պետական ցուցակներում ընդգրկելու և ցուցակից հանելու վերաբերյալ չափորոշիչները, հուշարձանների պահպանական գոտիների հաստատման և համաձայնեցման ընթացակարգը, ինչպես նաև կկանոնակարգվեն հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքները:

3. Ստեղծվել են «Ամբերդ ամրոց», «Բերդ» պատմամշակութային արգելոցները, որոնց գործունեությունն ուղղված կլինի պատմական, հնագիտական, ճարտարապետական անշարժ հուշարձանների, հուշարձանների համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի և հանրահոշակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև զբոսաշրջության խթանմանը:

4. Ընդունվել է «ՀՀ պետական և տարածքային կառավարման մարմինների ենթակայությանը գործող թատերահամերգային, թանգարանային, մարզական-սպորտային կազմակերպությունների և ժամանցային կենտրոնների էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգի (էՏՏՀՄԱՀ) ստեղծման, ներդրման ու սպասարկման ծառայությունների գնման մրցույթի անցկացման կարգը և նշված համակարգի ստեղծման ու ներդրման ժամանակացույցը հաստատելու մասին» որոշումը: Այս մոդելն իրենից ներկայացնում է պետություն-մասնավոր գործընկերության փոխշահավետ գործարք, որով առանց պետական ֆինանսավորման, բացառապես մասնավոր տնտեսավարողի միջոցներով ստեղծվում է այնպիսի համակարգ, որի շահագործումը բերում է դրամական հոսքի ավելացմանը պետական բյուջեում, իսկ մասնավոր ներդրողը համակարգի միջոցով տոմսերի վաճառքի իրականացման գործընթացից ստանում է սահմանված վարձատրություն:

5. Մշակվել են պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում գործունեություն իրականացնող մասնագետների հավաստագրման կարգը, մասնագիտական գործունեության տեսակների ցանկը, հուշարձանների պետական ցուցակում նորահայտ օբյեկտ ընդգրկելու և պետական ցուցակից հուշարձան հանելու վերաբերյալ չափորոշիչները, որոնք կշրջանառվեն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո:

6. Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ներդրվել է ներկայացումների սինոպսիսի էլեկտրոնային տարբերակի ցուցադրման (վազող տողի կիրառման) համակարգը:

7. Իրականացվել է «Լրացված իրականություն» հավելվածի ստեղծման և տարածման ծրագիրը (պատմամշակութային արժեք ներկայացնող Հ. Թումանյանի և Ալ. Սպենդիարյանի արձանների եռաչափ անիմացիոն պատկերը ծայնային նոր հաղորդագրությամբ), որը հանրությանը հասանելի է 2017 թ. հունվարից:

8. Մեկնարկել են մշակույթի ոլորտում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և ներդրման հետ կապված գործընթացները, «Շրջիկ կինոթատրոն» ծրագիրը, որն ուղղված է ՀՀ մարզերում և Արցախում հայկական կինոյի հանրահռչակմանը, Առդիոգրի քջջային հավելվածի ծրագիրը, մասնավորապես, ավարտվել են Ս. Փարաջանովի թանգարանի, Մ. Սարյանի, Ա. Խաչատրյանի տուն-թանգարանների հավաքածուների մասին պատմող՝ IOS և Android օպերացիոն համակարգերի հիման վրա աշխատող աշխատանքները, և «Վիրտուալ 360°» թանգարանի ստեղծման աշխատանքները, մասնավորապես, որպես վիրտուալ հարթակ ընտրվել է Հայաստանի ազգային պատկերասրահի 9-րդ հարկի համապատասխան տարածքը, նախագծվել է տարածքի 3D ձևաչափով հավելվածը, մշակվել է ծրագիրը և տեխնիկական բնութագիրը:

9. Նախարարության ենթակայության 4 ՊՈԱԿ-ներ միացման ձևով վերակազմակերպվել են՝ ՊՈԱԿ-ների գործառույթների առավել արդյունավետ և որակյալ իրականացման նպատակով:

10. ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության 68 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնտեսական աճի ապահովմանն ուղղված համախառն եկամուտները 2017 թ. 1-ին կիսամյակում գրանցել են աճի կայուն տեմպեր՝ կազմելով 746.666.6 հազ. դրամ՝ 2016 թ. նույն ժամանակահատվածի 608.574.0 հազ. դրամի դիմաց, աճը կազմել է 138.092.6 հազ. դրամ կամ 22.7 %, որից՝ միայն հիմնական գործունեությունից հասույթ՝ 119.110.7 հազ. դրամ:

11. Ավարտվել են Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում արևային ներցանցային համակարգի տեղադրումը և Դսեղ համայնքում գտնվող Հ. Թումանյանի տուն-թանգարանի վերանորոգումը, մասնավորապես, տուն-թանգարանում կառուցվել են հուշանվերների կրպակ, սանհանգույց, փոքր հանգստի վայր (շինարարական աշխատանքներն ավարտված են):

12. Իրականացվում են՝ Գորիս, Էջմիածին քաղաքների պատմաճարտարապետական միջավայրերի, Գառնի համայնքում գտնվող «Քարերի սիմֆոնիային» մոտեցող ճանապարհի, «Խոսրովի անտառ» արգելոցից դեպի «Քարերի սիմֆոնիա» տանող ճանապարհի վերականգնման, Դվինի թանգարանացման և հարակից տարածքների բարեկարգման, Հին Արտաշատ մայրաքաղաքի տարածքում և Խոր Վիրապ վանքի հարևանությամբ դիտահարթակի և այցելուների տեղեկատվական ու սպասարկման կենտրոնի կառուցման,

«Զորաց քարեր» արգելոցի մերձակա տարածքի զբոսաշրջային գոտու ստեղծման նախագծային աշխատանքները:

13. Մշակվել են «Ամբերդ ամրոց», «Գառնի» և «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանների տարածքների բարեկարգման ու նոր ենթակառուցվածքների ստեղծման նախագիծ-ծրագրերը, որոնք ուղղված են պատմության և մշակութային անշարժ հուշարձանների պահպանական գոտիներում, ինչպես նաև դրանց հարակից տարածքներում ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանն ուղղված ներդրումային քաղաքականության ակտիվացմանը:

14. Մշակվում է «Լոռի բերդ» պատմամշակութային արգելոցի զբոսաշրջությանը մատչելի դարձնելու ծրագիրը:

15. Մեկնարկել են Գինու պատմության, «CINEMA» կինոդերասանի կենտրոն-ստուդիայի, Գյումրու Աճեմյան 25 հասցեի պատմամշակութային հուշարձանի տարածքում գտնվող մշակութային կենտրոնի ստեղծման աշխատանքները:

16. Մինչև տարեվերջ կավարտվի Օձունի Սբ Աստվածածին եկեղեցու վերականգնումը:

17. Մեկնարկել են «Արար» խորագիրը կրող «Ազգային մշակույթի պահպանումը, տարածումը, զարգացումն ու հանրահռչակումը ՀՀ մարզերում», «Մշակութային կանգառ» ծրագրերը, աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղի, Պառավաքարի, ՀՀ Կոտայքի մարզի Արզականի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքների երգի, պարի, նկարչական խմբերի գործունեությանը:

#### 4.6. ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

1. Մշակվել և ընդունվել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման, մանկապատանեկան սպորտի զարգացման 5-ամյա ծրագրեր՝ հստակ սահմանված միջոցառումներով և դրանց կատարման ժամկետներով:

2. Առողջ ապրելակերպի քարոզչության և զանգվածային սպորտի զարգացման նպատակով մշակվել և իրականացվում են մարզական զանգվածային միջոցառումներ՝ ընդգրկելով բնակչության տարբեր տարիքային խմբերի:

- ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոն: Իրականացվել է ՀՀ մարզերի 48 քաղաքում ու գյուղում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում: Ծրագրում ընդգրկված է 7 մրցաձև, մասնակցել է շուրջ 20000 մարդ:

- Տարեցների հանրապետական մարզական խաղեր, որին մասնակցել է 63 տարեկանից բարձր շուրջ 1500 մարդ:

- 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառում, որին մասնակցել է ընդհանուր առմամբ 1300 դպրոց և շուրջ 13000 աշակերտ:

- «ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա» մարզական միջոցառում: Եզրափակիչ փուլը կանցկացվի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

- «Կյանքը՝ սպորտի ուրվագիծ» նախագիծ: Նախագծի շրջանակում կազմակերպվել են ամենշաբաթյա անվճար բացօթյա մարզումներ 6 մարզաձևերից՝ բոլոր ցանկացողների համար՝ առանց տարիքային սահմանափակման: Ինչպես նաև բոլոր ցանկացողներին հնարավորություն է տրվել մասնակցելու հեծանիվ վարելու անվճար դասընթացներին:

- Ֆիզիկական տարբեր պատրաստվածություն ունեցող խմբերի համար մշակվել է ծրագիր՝ 6 հիմնական մարզաձևերից՝ warm-up, breakletics, cross-fit, tabata, stretching, trx: Մարզումներին մասնակցում են ավելի քան 100 մարզվողներ, այդ թվում՝ նաև երեխաներ, որոնք մարզվում են առանձին խմբով:

3. «Մարզադպրոցների կառավարման և գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման համաձայն իրականացվելու են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են բարեփոխելու Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան մարզադպրոցների գործունեության կառավարումն ու ուսումնամարզական գործընթացի իրականացումը:

4. Մշակվել է բակային սպորտի զարգացման 2017 թ. միջոցառումների ծրագիր՝ համաձայն որի մինչև 2017 թ. ավարտն առնվազն 50 քաղաքային և գյուղական համայնքում (բացառությամբ Երևան քաղաքի) ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային աշխատանքների բարելավման նպատակով իրականացվելու են խաղահրապարակների և բակերի վերանորոգման աշխատանքներ, կառուցվելու են նոր խաղահրապարակներ՝ հագեցած պարզ տիպի մարզասարքերով, իրականացվելու են մարզական-զանգվածային միջոցառումներ՝ ներգրավելով բնակչության տարբեր տարիքային խմբերի (6-60 տարեկան և բարձր):

## 5. ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

5.1. «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնն սկսել է իր գործունեությունը 2017 թ. հունվարի 12-ին: Կենտրոնն այժմ ունի 22 աշխատող, որոնցից 6-ը վարձատրվում են դրնոր կազմակերպությունների կողմից: Այժմ իրականացվում է 26 ծրագիր, որոնք վերաբերում են պետական կառավարման համակարգին, հարկային և մաքսային վարչարարության, կրթության, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների, տուրիզմի և գյուղատնտեսության ոլորտներին, ինչպես նաև դատական համակարգին և հանրային-մասնավոր գործընկերության ոլորտին: Կենտրոնի կողմից արդեն իսկ ավարտին է հասցվել համակարգային բարեփոխումներին ուղղված 6 ծրագիր՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ մշակվել և 2017 թ. մարտին հրապարակվել է 2-րդ սերնդի բարեփոխումների ծրագիրը:

2. Մի շարք SS ընկերությունների հետ համատեղ մշակվել է ծրագիր, համաձայն որի ռազմավարական ոլորտներում բարձր որակավորում ունեցող Հայաստանի ռեզիդենտ չհամարվող անձանց տրամադրվելու են ֆինանսական խթաններ:

3. «Արար» հիմնադրամի և Ի-Վի Քոնսալթինգ ՓԲԸ աջակցությամբ իրականացվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների ֆունկցիոնալ վերլուծություն (վերլուծության արդյունքներով պիլոտային ծրագիրը կսկսվի իրականացվել սույն թվականի հոկտեմբերից):

4. Մշակվել են Ջերմուկի և Վանաձորի զբոսաշրջային ուղղությունների զարգացման ծրագրերը:

5. ՄԱԿ-ի հետ համատեղ կենտրոնի հովանու ներքո ստեղծվել է Կայուն զարգացման նպատակների ազգային ինովացիոն կենտրոն՝ ՄԱԿ-ի ԿԶՆ իրականացման համար (ՀՀ՝ ՄԱԿ-ում ստանձնած պարտավորություն):

6. Եվրամիության աջակցությամբ նախաձեռնվել է YES ծրագիրը, որի միջոցով պետական տարբեր մարմիններում 1 տարի ժամկետով ներգրավվելու են Հայաստանից և սփյուռքից բարձր որակավորում ունեցող մոտ 20 երիտասարդներ՝ ռազմավարական ուղղություններով ծրագրեր մշակելու և իրականացնելու նպատակով:

Մինչև տարվա վերջ ավարտին կհասցվեն հետևյալ ծրագրերը՝

1. Մշակվում է և մինչև տարվա վերջ ՀՀ կառավարությանը կհանձնվի Հայաստանի զարգացման ռազմավարություն 2030 (աշխատանքային խմբերի աշխատանքներն արդեն սկսվել են և հանրային քննարկումները կիրականացվեն սույն թվականի նոյեմբերին):

2. Մշակվում է և մինչև տարվա վերջ ՀՀ կառավարությանը կհանձնվի Հայաստանի թվային օրակարգ 2030:

3. ՎԶԵԲ-ի աջակցությամբ մշակվում է հանրային-մասնավոր գործընկերության օրենսդրական բազան (օրենք և ենթօրենսդրական ակտեր), ինչպես նաև աշխատանքներ են տարվում հանրային-մասնավոր գործընկերության մասնագիտացված միավորի ձևավորման ուղղությամբ:

4. Մշակման փուլում է գտնվում Կրթության զարգացման պետական ծրագիրը:

5. Իրականացվում է Կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ) ֆունկցիոնալ վերլուծություն, որի արդյունքներով կառաջարկվի ԿԱԻ բարեփոխման և արդյունավետության բարձրացման ծրագիր:

6. Իրականացվում է դպրոցների կառավարման համակարգի բարեփոխումների ծրագրի մշակում:

Կենտրոնի ֆինանսավորումը.



Մինչև օրս կենտրոնն իր գործունեությունը (աշխատավարձ և պահպանման ծախսեր) իրականացնելու համար ստացել է շուրջ 120 մլն դրամ (որից 100 մլն ՀՀ պետական բյուջեից, իսկ 20 մլն մասնավոր նվիրատվությունների միջոցով): Կենտրոնի կողմից իր ծրագրերն իրականացնելու համար բանակցություններ են վարվել միջազգային դոնոր կազմակերպությունների հետ, որի արդյունքում արդեն ապահովվել է շուրջ 3,100,000 ԱՄՆ դոլարի տեխնիկական աջակցություն՝ նպատակային համատեղ ծրագրերի իրականացման համար և 500,000 ԱՄՆ դոլար՝ ՌՆԿ ընթացիկ գործունեությունը ֆինանսավորելու համար:

Բանակցություններ են վարվում ևս շուրջ 3,500,000 ԱՄՆ դոլարի աջակցություն ստանալու վերաբերյալ՝ փորձագետների ներգրավման և նոր ծրագրերի մշակման և իրականացման համար:

## 5.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

- Հիմնադրամի կողմից կազմակերպվել է 3 գործարար և ներդրումային համաժողով, որոնց արդյունքում կնքվել է 9 հուշագիր և 4 պայմանագիր, այդ թվում՝ 1 էքսկլյուզիվ: Պայմանագրերով նախատեսվում է իրականացնել 112 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ և սկզբնական փուլում արտահանել 500 հազ. ԱՄՆ դոլարի արտադրանք, որի առաջին առաքումը կայացել է մայիս ամսին:

- Կազմակերպվել է հայկական ընկերությունների մասնակցությունը 9 ցուցահանդեսի, որոնց արդյունքում կնքվել է 86 պայմանագիր՝ 3,469 մլրդ դրամի (7,2 մլն ԱՄՆ դոլարի) ընդհանուր գումարով: Ընդհանուր առմամբ կանխատեսվում է մինչև տարվա վերջ ունենալ շուրջ 7 մլրդ դրամի արտահանման պայմանագրեր:

- Գործարկվել է ներդրումային ծրագրերի հավաքագրման հարթակ՝ [www.investmentprojects.am](http://www.investmentprojects.am) կայքը, որտեղ զետեղվել են ՀՀ կողմից հավաքագրված շուրջ 1.2 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ 30 ներդրումային ծրագրեր: Խմբագրվել և քննարկման է ներկայացվել տարբեր ոլորտների 40 ծրագիր:

- Կազմակերպվել է «Ձևափոխի՛ր» մրցույթը, որի առաջին փուլի արդյունքում ներկայացվել է երկրի զբոսաշրջային վայրերի ձևափոխման ու տուրիզմի զարգացման 60 նախագիծ:

- Ընդլայնվել են ՀՀ-ում գործող «Մեկ պատուհան» սկզբունքով տրամադրվող ծառայությունները: 2017թ.-ին ՀՀ-ն սպասարկում է շուրջ 600 ընկերություն, որոնցից 350 արտահանող, իսկ 250 ներդրող:

- Հիմնադրամն ակտիվ աշխատանքներ է տանում արտերկրում հիմնադրամի ներկայացուցիչների ցանցի ընդլայնման ուղղությամբ: Արդեն իսկ գործում է 9 ներկայացուցիչ և մինչև տարեվերջ ներկայացուցիչների թիվը նախատեսվում է հասնել 50-ի: Ներկայացուցիչների աշխատանքի արդյունքում քննարկվում են ներդրումային և արտահանման ծրագրեր: